Մայիս Նիկողոսյան

# ԳԱՆՁԱՐԱՆ

(հայ գրականությունից անգիր հանձնարարվող նյութերի ընտրանի)

ԵՐԵՎԱՆ 2007

Նիկողոսյան Մայիս

Յրթ-հոդվածների գրադարան...

# ԳԱՆՁԱՐԱՆ

(հայ գրականությունից անգիր հանձնարարվող նյութերի ընտրանի)

2041

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԽԻԹԱՐ Ա. ԲԱՍՏԱՅԻ»
Կրթական համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ստամպա
Երեվան 2007

ՀՏԴ 891.981-1:398=919.81
ԳՄԴ 84Հ-5+82.3Հ
Գ 276

Գ 276 Նիկողոսյան Մ., Գանձարան (հայ գրականությունից անգիր հանձնարարվող նյութերի ընտրանի), Երևան, Ստամպա, 2007. - 224 էջ:

Ժողովածուն հերթական փորձ է՝ ի մի հավաքելու հայ քնարերգության ընտրանին:

Գրքում ընդգրկված են բանահյուսության և հայ դասականների հիմնականում չափածո ստեղծագործություններ՝ սկսած Գողթան երգերից մինչև Պարույր Սևակ (բանաստեղծություններ, հատվածներ բանաստեղծություններից, պոեմներից): Փոքր ծավալով ժողովածուի մեջ տեղ են գտել նաև արձակ գործերից հատվածներ:

Ընտրանին մեծապես կօգնի ուսուցչին, դասուսույցին, դպրոցավարտին ու դիմորդին՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկայից դպրոցի պետական ավարտական և միասնական քննությանը նախապատրաստվելու համար:

Գ $\frac{4702080202}{0141(01)07}$ 2007թ. ԳՄԴ 84Հ-5+82.3Հ

ISBN 978-99930-954-8-4

© Ստամպա, 2007թ.

# ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ



* * *

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր
Խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

* * *

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հավանեա՛ց բանից աչագեղոյ դստերս Ալանաց
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յավիտենական
Ի մեջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

* * *

- Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց
Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց:

* * *

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջքն փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

* * *

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:

* * *

- Եթէ դու յորս հեծնիս
ՅԱզատն ի վէր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք, տարցին
ՅԱզատն ի վէր ի Մասիս.
Անդ կայցես
Եւ զլոյս մի՛ տեսցես:

* * *

Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց
Եւ զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուաք
Եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն էր թագաւորաց:

# ՎԱՂ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Մեղք իմ բազում են յոյժ,
Ծանր են, քան զաւազ ծովու,
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա ինձ, Աստուած:

Բա՛ց, Տէ՛ր, զդուռն ողորմութեան,
Որ ողբալով կարդամ առ քեզ,
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա ինձ, Աստուած:

Հեղ յիս զգթութիւնդ քո,
Բազումողորմ և մարդասէր.
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա ինձ, Աստուած:

* * *

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:
Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ:
Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն:
Ի համբառնալ իմում առ քեզ զաչս իմ՝
Օգնեա՛ ինձ, Տէ՛ր:
Ի յօրհնութիւն նոր օրհնեսցուք զքեզ,
Քրիստոս փրկիչ մեր:
Այցելու մեր և փրկիչ,
Կեցո՛ զանձինս մեր:

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ո՛չ մեկնելով ի հօրէ՝
Ի սուրբ այրին բազմեցաւ:

## *ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ*
*(հատված «Ողբից...»)*

Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ. ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն:

Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնեցեալ ի բարեզարդութենէ բեմբին, ի քաջէն զրկեալ ի հովուէ և ի հովուակցէ: Ո՛չ ևս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարուոջ և ոչ առ ջուրս հանգստեան տածեալս, և ոչ ի փարախ հավաքեալ՝ զգուշանալով ի գայլոց, այլ ցրուեալս անապատաց և գահավիժութեանց:

## *ԵՂԻՇԵ*
## *ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ*
*(հատված)*

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և զգուեալք էին յիւրաքանչիւր ի բաստերունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն

մեծավ խնդութեամբ. և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն: Սևացեալ ներկան մորքք մարմնոց նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն՝ գետնաբեկք...:

## ՓԱՎՍՏՈՍ ԲՅՈՒԶԱՆԴ
## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ տիրացեալ տէրանցն քոց, այլ ոչ թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց և զմահն Արտևանայ արքային: Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տէրանց ձերոց զբարձ կալեալ է, բայց ոչ թողից, եթե ոչ տեղիդ մեր առ մեր եկեսցէ:

* * *

Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ: Իսկ Վասակ տուեալ պատասխանի ասէ. Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ, զի ցայժմ ես քեզ առեւծ էի, և արդ՝ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր, և միւս ոտնս իմ ի մերոյ լերին կայր. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: Ապա հարցանէր թագավորն Պարսից Շապուհ և ասէ. Աղէ՝ տու՛ինձ գիտել, ով են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր: Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն Յունաց:

## ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՅԵՑԻ
## ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ
*(քաղվածք)*

Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի,
Երկնավոր նահատակք և կուսանք իմաստունք,
Ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ
Մայր Սիովն դստերօքն իւրովք:
Լուան թագաւորք և լցան խնդութեամբ,

Որսալ յանձն առին զգաղտնի մեծութիւնն.
Պարգևել իրերաց խոստանային բանիւք
Եւ ծածուկ հնարիւք գողանալ ի միմեանց:

Հռիփսիմէ՛, մեծ խորհուրդ և անուն ցանկալի,
Ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս.
Եղեր օրինակ սրբութեան կուսանաց.
Վարդապետութիւն արանց արդարոց:

## ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ
### *ՈՂԲՔ Ի ՄԱՀՆ ՋԵՎԱՆՇԵՐԻ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ*
*(հատված)*

Աստուածային բանին արուեստաւո՛ր հոգի,
Յօրինեա՛ իմաստիւ զտխրական երդմունս,
Զի սգալի ձայնիւ անդադար ողբասցուք
Ի վերայ դժնդակ կորստեանս մերում:
Բեկումն մեծ, որ եղև Արևելից աշխարհիս,
Եւ աղաղակ կործանման հնչեաց ընդ երկիր.
Ազգք և ազինք լուիցեն զբարբառս իմ,
Եւ երկրածինքս ամենայն ողբասցեն ընդ իս:
Գլորեցաւ վէմն կենդանի և հզօր,
Եւ պարիսպն ամրութեան խորտակեցաւ,
Աշտարակն բանաւոր տապալեցաւ.
Եւ ցանկն շինութեան խրամատեալ քակեցաւ:
Դարձաւ ի դառնութիւն խաղաղութիւն մեր,
Եւ դրունք հինից տեղասցին ի մեզ.
Զի մեծասքանչ տէրութիւնն կործանեցաւ,
Եւ հրաշալի պետութեանն շիջաւ ճառագայթ...

## ՍԱՀԱԿ ՅՈՐԱՓՈՐԵՅԻ

Էջ Միածինն ի Հօրէ,
Եւ լոյս փառաց ընդ նմա,
Զայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ
Հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք
Սուրբ զխորանն լուսոյ.
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի:

## ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ ՍԻՒՆԵՅԻ

* * *

Սրբուհի՛ Մարիամ,
Անապական տաճար
Եւ կենարար բանին ծնող և մա՛յր.
Օրհնեա՛լ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կո՛յս:

Անդաստան հոգևոր և համապայծառ ծաղիկ,
Որ ի հոգեհոս անձրևէն՝ հովանաւորեալ ի քեզ՝
Պտղաբերեցեր ի հօրէ՝ յայտնեալ մարդկան.
Օրհնեա՛լ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կո՛յս:

Հիւթական, եղական, անեղ բանին բնակարան,
Որ զհուրն աստուածութեան
Յորովայնի քում ընկալար և ոչ բոցակիզար
Որպէս որմընն զմորենին,

Այլ ծնար զԱստուածն բոլորից.
Օրհնեա՛լ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կո՛յս:

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
## ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
պղպջէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
շողշողէր պտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղն
սնանէր խուռն տերևով.
Տերևն տաւիղ տուողին,
զոր երգէր Դաւիթ հրաշալին:
Ի փունջ խուռներամ վարդից
գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան:
Այդ սոս ու տոսախ ծառերդ
վարդագոյն ոստս արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ արօսդ,
զարդ առեալ վարդն շուշանին.
Շուշանն շողէր յովտին,
շողշողէր դէմ արեգականն:
Այն հիւսիսային հովէն,
հով հարեալ գոհար շուշանին.
Յայն հարաւային լեռնէն,
քաղցր օդով ցօղէր շուշանին:
Շուշանն շաղով լցեալ
շող շաղով և շար մարգարտով,

Ծաղկունքդ ամէն շաղ առին,
շաղն՝ յամպէն, ամպն՝ յարեգակնէն:
Աստղունքդ ամէն շուրջ առին,
դեմ լուսնին գունդ գունդ բոլորին.
գունդ գունդ խաչածն գնդակ,
յօրինուած երկնից շուրջանակ:
Փա՜ռք Հօր և Որդւոյն յաւէտ
Սուրբ Հոգւոյն այժմ և յաւիտեանս:

## *ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԻ*

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
ծաւալանայր յառաւօտուն՝
երկու փայլակնածն արեգական նման.
շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:
Յայտէն նոնենի սարդիատունկ
գեղաշիտակ ծայրից ծաղկանց,
որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն
կարկաջայր սաթքերունի սէր:
Ջեռացն եղիշոյ կամարակապ կապէր.
ատիճա՜ղ պատիճա՜ղ, ստղի-խտղի երգով:
Հիւսէր զելեալսն ընդ միմեանս,
հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր:
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
լեզուին շաժողին քաղցրերգանայր տաւիղն:
Ի ծամին խեղեփին հազրէ, զի նոյն սէր
հոգիազգեստեալ գեղն ի գինւոյն գոյն:
Վարսիցն երամից զարդ, երամից զարդ
ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այտիւք:
Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ.
ծղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլք:
Խնկեալ ի կնդրկէ բուրվառ՝ հրով աստուածայնով լցեալ.
ձայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:
Գեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էր,

ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ,
ոսկեշողէ՛ր գոյնն:
Գօտին արծաթափայլ, ոսկէտտուն,
կամարակապ յականց, յականց շափիւղայ,
մանրամասն յօրինուածով պճնեալ:
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով.
ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթել առնոյր:
Այն թագաւորի՛ն, այն նորածին փրկչին.
զքե՛զ պսակողին փա՛ռք յաւիտեանս, ամէն:

## *ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ*

### *ԲԱՆ Ա*

### *Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՅ*

Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց,
Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման՝
Զպտուղ ըղձին ճենճերոյ սասանեալ մտացս,
Բուրվառաւ կամացըս առաքել առ քեզ:
Այլ հոտոտեսցիս, հայեսցիս, գթած,
Քան ի պատարագն բոլորապտուղ,
Մատուցեալ ծխոյն բարդութեան:
Ընկա՛լ զսակաւամասնեայ բանիցս յօրդուած
Քեզ ի հաճութիւն, և մի՛ իբարկութիւն.
Ելցէ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝
Վաղվաղակի ժամանել առ քեզ՝
Կամաւորական նուէր բանական զոհիս,
Ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ,
Որ յիսն է պարարտութիւն:

### *ԲԱՆ ՁԸ*

Եւ արդ, ընկա՛լ զայս հյուսուած բանի աղիողորմ հեծեծանաց,
Եւ հոտոտեսցի՛ս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւոր երկնի,





Յա՜ր իլթիմազով:
Հաքիլ իս ատլաս,
Թուրլու զար ու խաս՝
Սալբու դալ բովուն,
Ձեռիդ ունիս թաս,
Լըցնիս ու ինձ տաս,
Ղուրբան իմ մովուն,
Թաք դու բաղչեն գաս
Անիս մասնեմաս
Քու Սայաթ-Նովուն:
Մո՜ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՜ր, իլթիմազով:

## *ՄԵ ԽՈՍԿ ՈՒՆԻՄ ԻԼԹԻՄԱԶՈՎ*
*(հայրված)*

Մե խոսկ ունիմ իլթիմազով, անգաճ արա՜, ո՜վ աճկիլուս,
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըն բարով, աճկիլուս,
Աչաք քիզ ի՞նչ գեթ իմ արի՝ կենում իս խըռով, աճկիլուս,
Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սով, աճկիլուս:

Թեգուզ հազար դարդ ունենամ, յիս սըրտումըս ա՜հ չիմ ասի.
Իմ հուքմի հեքիմըն դուն իս, յիս է՛լ ուրիշ շահ չիմ ասի.
Սայաթ-Նովեն ասաց. զա՛լում, յիս էն մահին մահ չիմ ասի,
Հենչաբ ըլի՝ դուն վըրես լաս, մազրդ շաղ տալով, աճկիլուս:

## *ԱՇԽԱՐԸՍ ՄԵ ՓԱՆՋԱՐԱ Է*

Աշխարըս մե փանջարա է, թաղերումեն բեզարիլ իմ,
Մըտիկ տըվողըն կու խուցվի, դաղերումեն բեզարիլ իմ,
Էրեգ լավ էր կանց վուր էսօր, վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի՛ ըլի, խաղերումեն բեզարիլ իմ:

Եւ օրհնեալ սրբեա՛ զտառս մատենի այսր ողբերգութեան,
Եւ գրեալ դրոշմեսցե՛ս յարձան յաւիտեան
Ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս:
Կացցէ առաջի քո մշտենջենաւոր,
Եւ յիշատակեսցի՛ ի լսելիսդ քո հանապազ,
Բարբառեսցի շրթամբք ընտրելոց քոց,
Եւ խոսեսցի բերանովք հրեշտակաց քոց,
Տարածեսցի հանդէպ աթոռոյ քու
Եւ ընծայեսցի ի սրահ սրբութեան քու,
Խնկեսցի ի տաճար անուան քու,
Եւ բուրեսցի ի սեղան փառաց քո,
Պահեսցի ի գանձարանի քում,
Եւ համբարեսցի ի ստացուածս քո,
Պատմեսցի ի յականջս ազգաց,
Եւ քարոզեսցի ի լուր ժողովրդոց,
Նկարեսցի ի դրունս իմաստից,
Եւ տպաւորեսցի ի սեամս զգայութեանց,
Իբր կենդանեօք զի՛մս պատմեսցէ՝
ոստովանեալ զանօրէնութիւն:
Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու,
Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի՝
Գրեցայց կենդանի...

## *ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ*
## *ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ*
*(հատված)*

Առաւո՛տ լուսոյ,
Արեգա՛կն արդար,
Առ իս լոյս ծագեա՛:

Բղխո՛ւմն ի Հօրէ,
Բղեա՛ ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտո՛ղ զիս արա:

Դո՛ւռն ողորմութեան
Դաւանողիս բա՛ց,
Դասեցո՛ վերնոցն:

Երրեակ միութի՛ւն,
Եղելոց խնամո՛ղ,
Եւ ի՛նձ ողորմեա:

Զարքի՛ր, Տէր՝ յօգնել,
Զարքո՛ զքմրեալս,
Զուարքնոց նմանիլ:

Է՛դ Հայր անսկիզբն,
Էակի՛ց Որդի,
Է՛ միշտ Սուրբ Հոգի...

## *ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ*
*(հայրված)*

... Բայց և զքեզ յայս հրաւիրեմ,
Արևելյան քաղաքդ Անի,
Կցո՛ղդ լեր դու իմոյս ձայնի
և սփոփիչ տարակուսի:
Քանզի երբեմն և դու էիր,
վայելչական հարսն ի քոյի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի.
հեռաւորաց փափագելի:
Շինեալ եղեր տուն արքունի,
Յընտրեալ նահանգդ Շարայի.
Թագաւորաց Բագրատունի,

Ճակատդ է լոյս ու լոյս կու տայ,
Բոլոր լուսին, շամս ու ղամար.
Վարսերդ ոսկի թելով քաշած
Վերայ անձինդ իջեր հաւասար...

Նշտարենի ծառ ես ծաղկեալ,
Պտուղ կու տաս մուշկ ու ամպար,
Բեհեզ հագնիս ու ծիրանի,
Ծրպերդ ամէն մարգարտաշար...

Մարդ որ սիրու կու հանդիպի,
Նայ քան ըզկրակ կու լինի վառ,
Այլ ոչ աղօթք միտքըն կու գայ,
Ոչ Յասմաւուր կարդայ և ճառ...

## ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ
### ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐԳԱՒ

...
Լուսի՛ն, պարծենաս, ասես.
«Լուս կու տամ ես աստնուորին»:
Ահա հողեղէն լուսին
ի գրկիս ւ՛ երեսն երեսիս,
Թէ չես աւտալ այս գերուս,
յետ տանիմ զփէշ կապայիս,
Վախեմ՝ սիրոյ տէր լինիս,
լուս պակաս տաս աստնուորիս:
...
-Քո ծոցդ է ճերմակ տաճար,
քո ծծերդ է կանթեղ ի վառ.
Երթամ ես, ժամկոչ ըլլամ,
գամ, լինեմ տաճրիդ լուսարար:
-Գնա, ծօ տղա՛յ տխմար,
չի վայլես տաճրիս լուսարար,
Երթաս դու խաղով լինաս,
ու թողուս տաճարս ի խաւար:

Որ ի ցեղէն Իսրայելի.
Յազգէն սերեալ մեծին Դաւթի՝
Աստուածահօր մարգարէի,
Գեղեցկանուն զարմանալի,
Որ երրակի տառիւ բերի
յերրորդութեանն խորհրդի,
Որ միշտ ի քէն երկրպագի:

## *ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...*

*(հայփված)*

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ,
Հայր և Որդի և Սուրբ Հոգի.
Աեղ և անմահ բնութիւն.
Արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց.
Եւ ողորմեա քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագեմ քեզ,
Անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն,
Եւ մի Աստուածութիւն՝
Արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի,
Հալածեա ի հոգոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան,
Եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝
Աղօթել քեզ ի հաճոյս
Եւ ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ.
Եւ ողորմեա քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:
Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ,
Որ առաքեցեր Զորդիդ քո սիրելի
Ի խնդիր մոլորեալ ոչխարին.
Մեղայ յերկրինս և առաջի քո.
Ընկալ զիս որպէս զանառակն որդին,
Զոր մերկացաւ մեղօք,
Եւ ողորմեա քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս...

2041
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ»
Կրթական Համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅԻ
### ՊԼՈՒՉ

....

Աշխարհս է ծով նման, ով որ գայ՝ անքաց չմնայ,
Յայս ծովս ես ի նաւ մըտայ, գնաց նաւս, և ես չիմացայ,
Յեզեր մօտեցեր եմ ես, վախեմ թէ քարի դիպենայ.
Քակտի իմ աղուոր շինուածս ու տախտակըս մէկմէկանայ:

...

Մէկ կայ, որ հազար աժէ, հազար կայ, որ մեկ մի չաժէ,
Այն մէկն որ հազարն աժէ, մօտ յանգէտին փող մի չարժէ:
Ինչ մարդ որ գիտուն մարդուն խոնարհի և նմա լսէ,
Այս կեանքս ինքն ստանայ՝ ւ անդէնին բարին ժառանգէ:

## ՖՐԻԿ
### ՖՐԿԱՆ ԱՍԱՅԵԱԼ ՏԱՂ ՀՈԳԵՇԱՀ
*(հապված)*

Սի՛րտ իմ, ընդէ՞ր ես խռովել,
Ա՛չք իմ, ընդէ՞ր ես խաւարել.
Խե՛լք իմ, ընդէ՞ր ես ճապաղել,
Սի՛տք իմ, ընդէ՞ր ես շիւարել:
Է՞ր չես զմահու օրն անդիճել
Ի հիշատակի գալոյն վախել.
Զհոգւոյ քանդիլն յէ՞ր չես յիշել,
ՅԱստուծոյ յէ՞ր ես հեռացել:
Զիր պատուիրանն ես մոռացել,
Դիմաց հոգւոյդ ես քարացել.
Գանձ ու դումաշ ես ժողովել,
Վերայ գլխոյդ մոխիր մաղել:
Իսկի տեսել չե՞ս կամ լսել
Ինչ մեծատուն մարդ է մեռել,
Իսկի դեկան հետ չի տարել:
Ինքն է ժողվել, ւ՛այլք են կերել,
Հաց մի չիշխեաց յիւրմէն ուտել.
Թե չէ ռոճիկս իւր արարել,
Զբոց ու կրակն ես քեզ վառել...

...
Եկին ու խապար բերին,
բէ՝ «Ելեր քո եարն ու կու գայ»:
Եկեք, մեք ի դէմ երթանք,
որ նորա սիրտն չի մնայ.
Պագնեմք զիր կարմիր երեսն,
որ աշխարհս չէ ի գին նորա.
Առնումք ի ոտուց փոշին,
ու քաշեմք աչուիս թութիա:
...
Ես աչք ու դու լոյս, հոգի՛,
առանց լոյս աչքն խաւարի,
Ես ծուկ ու դու ջուր, հոգի՛,
առանց ջուր՝ ծուկն մեռանի.
Երբ զծուկն ի ջրէն հանեն
ւ'ի այլ ջուր ձգեն նա ապրի,
Երբ զիս ի քենէ զատեն՝
քան զմեռնիլն այլ ճար չի լինի:
...
Երթամ, չի կենամ ի հոս,
ուր երթամ՝ հոն ալ չի կենամ.
Երթամ քանց Հոռոմն ի վար,
վտարիմ, այլ իսկի չի գամ,
Թէ գան զիմ տեղն ասեն,
նայ հեռու եմ՝ այլ հեռանամ.
Թէ գան ու զքո տեղն ասեն,
նայ զինճիլն եմ, կտրեմ ու գամ:
...
Քանի՞ ու քանի՞ ասեմ՝
- Զիմ եարին կապան կարեցեք.
Արևն իւր երեսք արէք,
զլուսնկան աստառ ձևեցէ՞ք.
Թուխ ամպն այլ բամպակ արէք
ւ' ի ծաւէն դերան քաշեցէք.

## ԿՈՍՏԱՆՏԻՆ ԵՐԶՆԿԱՅԻ
### ՀՈԳԻ, ԱՉԵՐՈՒՍ ԻՄ ԼՈՅՍ
*(քաղվածք)*

Հոգի՛, աչերուս իմ լոյս,
Երբ որ ի դիմացս ելնուս
Փախչիս, երբ որ զիս տեսնուս,
Խղճա՛ քո գերոյս, իմ լո՛յս:

Դու զլոյս աչերուս առնուս՝
Թէ զիս քեզ օտար տեսնուս,
Դու ես հոգի իմ հոգւոյս,
Խղճա՛ քո գերոյս, իմ լոյս:

Մարմինս անհոգի զանց քեզ,
Հոգիս անդադար հետ քեզ,
Իսկի չի խղճա՞ս դու ինձ.
Չի գիտե՞ս, որ ծառայ եմ քեզ...

Խիստ խղճուկ եմ ու անյոյս,
Կու ծփամ ի մեջ ծովուս,
Չերևիր եզերն ճամփուս.
Արի-եկ, աչերուս իմ լոյս:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ
### ԳԷՆԱՅ ԲԱՀԱ՞Ր, ԱՅԼԻ Ի ԲԱՀԱՐ...
*(քաղվածք)*

Գէնայ բահա՞ր, այլի բահար,
Այլ՛ ի կու տան սիրոյ խապար.
Ծով-ծով աչեր ու լուս քընար,
Ունքն է կեռեր քան ըզկամար:

Դովլաթը էհտիբար չունե, յիփ օր կերթա իր շըքարով,
Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե աշխարումը էհտիբարով.
Աշխարըս միզ մընալու չէ՝ իմաստասիրաց խաբարով.
Գուզիմ թըռչի բըլբուլի պես, բաղերումեն բեզարիլ իմ:

Ո՞վ կոսե, թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն՝
Աստըծու ձեռումըն հիշտ է մարդու աշխարք յիլումուտըն.
Ղուրթս էնդուր ճամփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտըն,
Քըսանըն մե դուլ չին պահում, աղերումեն բեզարիլ իմ:

Աշխարըս միզ մընալու չէ, քանի նըստինք զող ու սափին,
Հում կաթնակիր Աթա՛մի զաթ, նա՛ղաթ ըլի էտ քո բափին.
Համփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.
Դոստիրըս դուշման ին դառի- յաղերումեն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարըն շատացիլ է
Չունիմ վաղվան քաղցըր փառքըս, հիմի դառըն շատացիլ է,
Բըլբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարըն շատացիլ է,
Չի՛ն թողնում վախտին բացվելու, քաղերումեն բեզարիլ իմ:

Աստղերն այլ կոճակ արէք,
զիս ի ներս ողկիկ շարեցեէք:
...
Երբ սէրն ի յաշխարհս եկաւ,
եկաւ իմ սիրտս բնակեցաւ.
Հապա յիմ սրտէս ի դուրս՝
յերկրէ յերկիր թափեցաւ.
Եկաւ ի գլուխս ելաւ,
ի ըղեղս ելաւ թառեցաւ:
Աչիցս արտասուք ուզեց,
նայ արիւն ի վար վաթեցաւ:
...
Իմ եար, թե ի վեր հայիմ,
Թե ի վայր, քան զքեզ չկա.
Ամէնն աստղաց նման,
Դուն ի մեջ պայծառ լուսնկա.
Կաղանդն շնորհաւոր կ'ասեն,
Ի տարին մէկ օր մի կու գայ.
Այսօր ինձ հազար կաղանդ
Աչերուս, որ զքեզ տեսա:
...
Չկայ ոչ տղայ, ոչ ծեր,
որ սիրու կածան չէ կոխեր.
Չկայ իմ խոցիս հէքիմ.
այն որ կայ՝ նա դեղ չի գիտեր.
Կամ զգանգատս ո՞ւմ անեմ,
որ երթար իմ եարոջն ասէր.
Երթամ ստեղծողին ասեմ,
զինչ որ յիմ ճակատս է գրեր:
...
Աչքերդ է ի ծով նման,
Որ Մսրա դուռն է կանգներ.
Վարսերդ ի յալի նման,
որ քամին կ'անէ տարուբեր.

Քան զուռ ես ի վեր վազեր,
քան զկարմիր խնձոր բոլորեր.
Պայծառ ես քան զքեաֆուր վարդ,
որ հոտով զաշխարհս է լցեր:

## *ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՅԻ*
## *ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱՇԷՆ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻ ՈՒՆԵՑՈՂԻ ԵՒ ԼԱԼՈՒ*

Յամէն առաւօտ և լոյս
Գաբրիէլն ասեր հոգոյս,
-Արի՛, ել ի յայս այգոյս,-
Այս իմ նորատունկ այգոյս:

Քար եմ բերեր սարերոյս,
Փուշ եմ բերեր սարերոյս,
Պատ եմ բոլորեր այգոյս,
Կասեն,թ՛ «Արեկ, ել այգոյս»:

Ինչպէ՞ս ելնեմ ի յայգոյս,
Գէմ չար փուշ կայ պատերոյս:
Ջուր եմ բերեր լեռներոյս,
Աղբիւր եմ շիներ այգոյս,
Դեռ չեմ խլմեր ի ջրրոյս,
Կասեն, թ՛ «Արեկ, ել այգոյս»:

Ուռ եմ տընկեր այս այգոյս,
Ջտակն եմ ջռեր այս տընկոյս,
Դեռ չեմ կերեր ի պլտղոյս,
Կասեն,թ՛ «Արեկ, ել այգոյս»:
Այս իմ նորատունկ այգոյս:

Հնձան եմ շիներ այգոյս,
Կարաս եմ թաղեր գինոյս,

## *ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ*

### *ՏԱՂ ՄԻՐՈՅ*

*Ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ բան*

Լուսնի նման պայծառ երես բոլորած,
Ես մնացի կարօտ՝ ես համբուրից համար:
Վարսերդ ոսկի թելի նման ոլորած,
Ես մնացի կարօտէ ետ տալոյ համար:

Ունքերդ կապել է կամար կրակով,
Աչքերդ վառել է պայծառ ճրագով,
Ափսոս, որ ծածկել ես բարակ լաչակով.
Ես մնացի կարօտէ ետ տեսնելոյ համար:

Ծոցիդ շամամներն խիստ է նորահարս,
Վախեմ՝ թէ թառամի, շատ մի կենար պաս,
Թե ինձ նշանց չտաս՝ ընկնե՛ս պատուհաս.
Ես մնացի կարօտէ ետ ձեռք տալոյ համար:

Մէջքդ նազլու բարակ, աղէկ լաւ պադան,
Վախեմ՝ թէ գիրկ ածէ նաշի մարդ նադան,
Քեամար էլ ես կապել տունքդ աւանդան.
Ես մնացի կարօտէ ետ գրկելոյ համար:

Բերանդ՝ կարմիր գինի, լեզուդ՝ համեղ նուշ,
Դու միևնակ կու խրմես ու կանես անուշ,
Նաղաշն թողել ես ծարաւ ու բէուշ.
Ես մնացի կարօտ ետ խմելոյ համար:

## *ՏԱՂ ՄԻՐՈՅ» ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ Է*
## *«ՅԱՅՏՆԵՅԱՒ ԳԱՐՈՒՆ»-Ի ՁԱՅՆՆ Է*

*(հարված)*

Պատկեր մի տեսի լուսնի նման,

Դեռ չեմ խմեր ի գինոյս,
Կասեն, թ՛ «Արեկ, եկ այգոյս»:
Այս իմ նորաշէն տներոյս:

Տուն եմ շիներ մէջ այգոյս,
Ոսկով նախշած չարտրխնուս,
Դեռ չեմ վայելեր շենքերոյս,
Կասեն, թ՛ «Արեկ, եկ այգոյս»:
Այս իմ նորաշէն տներոյս:

Վարդ եմ տնկեր այս այգոյս,
Կարմիր ՝ւրսպիտակ վարդոյս,
Դեռ չեմ զհոտն առներ վարդոյս,
Կասեն, թ՛ «Արեկ, եկ այգոյս»:

Ծաղիկ եմ տընկեր այգոյս,
Կանաչ ու դեղին ծաղկոյս,
Դեռ չեմ զհոտեն առեր ծաղկոյս,
Կասեն, թ՛ «Արեկ, եկ այգոյս»:
Այս իմ նորաշէն տներոյս:

Գաբրիէլն եկաւ հոգոյս,
Յահէն կապեցաւ լեզուս,
Խաւրաւ աչերս ի լուսոյս,
Աւա՜ղ իմ կարճ արևուս,
Կասեն, թ՛ «Արեկ, եկ այգոյս»:

Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանեցին զիս յիմ այգոյս,
Մահ է, որ ելնեմ այգոյս,
Այս իմ նորաշէն տներոյս:

Ուռը կանաչ է այգոյս,
Որթն բացուեալ է տընկոյս,
Խաղողն գոյնըզգոյն այգոյս,

Ծառեր-տունկըն շատ՝ այգոյս,
Կասեն, թ՛ «Արեկ, եկ այգոյս»:

Պըլպուլըն կանչէ այգոյս,
Առաւօտէն մինչ ի լոյս,
Ցօղն իջանէ ի յայգոյս,
Յամեն առաւօտ և լոյս:

## ՏԱՂ
## ԱՂԹԱՄԱՐՑԻ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՍԱՑԵԱԼ
*(քաղվածք)*

Ահա այգիք մեր ծաղկեցան,
Բուրեն ըզհոտն անմահութեան,
Եկ, ցանկալի իմ ւ՛ աննըման,
Եւ զուարճասցուք ի բուրաստան:

Բըխեն ըստինքդ կաթն և գինի,
Մեղր ի շրթնացըդ քո կաթի,
Որով հոգիս իմ փափագի
Եւ նըւաղեալ յոյժ տոչորի:

Գեղեցկագեղ, քաղցրաբարբառ,
Սէր քո ունի խորհուրդ անճառ,
Իմանալի արև պայծառ,
Լուսաւորեալ զմիտըս խաւար:

Ժուժկալութիւն չունիմ անկամ,
Զտիւ ու զգիշեր նըստեալ ողբամ,
Վառեալ սիրով քո տապանամ,
Զաչս ի յանհասըդ համբառնամ:

Աչքերն պայծառ արեգական,
Ունքերն կամար խիստ պատուական.
Կու սիրեմ, զալո՛ւմ, զալո՛ւմ,
Ինչ մօտ կու բերեմ, զալո՛ւմ:

Ծամերդդ ռեհան ու սուսամբար,
Ծոցէդ հոտ կուգայ մուշկի ամբար,
Վզէդ կախել ես հէքալ, չամբար.
Կարօտ ունիմ, զալո՛ւմ,
Թող մէկ համբուրեմ, զալո՛ւմ:

Բոլոր խալ ունիս, սիահ ծամեր,
Մատունքդ բարակ՝ թափած մոմեր,
Դու քո ձեռօքն թաս մի խմեր,
Ես կու տամ, զալում, զալում,
Մայիլ կու մնամ, զալում:

## *ՊԱՂԴԱՍՄԱՐ ԴՊԻՐ*
## *Ի ՆԸՆՋՄԱՆԷԴ ԱՐՔԱՅԱԿԱՆ...*
*(հատված)*

Ի նընջմանէդ արքայական,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,
Էհաս նըշոյլն արեգական,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,

Պատկեր սիրուն, տիպ բոլորակ,
Լըրացելոյ լուսոյն քատակ,
Ոչ գըտանի քեզ օրինակ,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,

Քո այդ տեսիլդ, զոր դու ունիս,
Արար ծառայ քեզ ըզգերիս,
Արևակէզ գուցէ լինիս,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,

# ՀԱՅ ՆՈՐ
# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

...

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա,
Անմահական ջըրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա.
Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ զարբաբ վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛, էնենց սպանե՝ սուլթան ու խան իս ինձ ամա.

Մեճկըդ սալբու չինարի պես, ռանգըդ փըռանգի ատլաս է,
Լիզուդ շաքար, պըռոշըդ՝ դանդ, ակռեքըդ մարքրիտ ալմաս է.
Օսկու մեչը մինա արած, աճկիրըդ, ակնակապ թաս է.
Պատվական անգին զավահիր, լալ-բադեշխան իս ինձ ամա:

Յիս էս դարդին վի՞ւնց դիմանամ՝ մակա՞մ սիրտըս ունիմ քարած,
Արտըսունքս արուն շինեցիր, խելքըս գըլխես ունիմ տարած,
Նուր բաղ իս, նուր բաղչի մեչըն, բոլորքըդ՝ վարթով չափարած.
Վըրեդ շուռ գամ բլբուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արավ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած.
Աշխարիս աշխարհով կշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մնաց.
Յա՛ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարհումըս բան չը մընաց.
Կրակե, ծովեմեն դուս էկած, ռաշ ու ջեյրան իս ինձ ամա:

Ինչ կուլի մեկ հիդրս խոսիս, թե վուր Սայաթ-Նովու յար իս.
Շուխկըդ աշխարհըս բըռնիլ է՝ արեգակի դեմըն փար իս.
Հուտով հիլ, միխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսանբար իս,
Կարմըրագույն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա:

...

Չենըդ քացըր ունիս՝ լամզով կու խոսիս.
Նա պահե քիզ, ումն ծա՛ռա իս գո՛զալ.
Մեճկըդ-ջեյրանի է, ռանգըդ՝ շաքարի,
Փռանգըստանու էկած խարա իս, գո՛զալ:

Ղումաշ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի,
Սալբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,
Ջեյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի,
Բաս վունց թարիփ անիմ՝ մարա իս, գո՛զալ:

Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին.
Թե ջավայիր ասիմ՝ քարեմեն կոսին,
Թե վուր լուսին ասիմ՝ տարեմեն կոսին.
Արեգակին նըման փարա իս, գո՛զալ:

Գո՛ւզիմ, թե համաշա դըռանըդ գամ ուխտ՝
Աճկիրդ՝ կարմիր վա՛ղթ, նուր բաց արած տուխտ,
Լիզուդ գըրիչ ունիս, ձեռքըդ՝ գուլգազ թուխտ.
Ծովեմեն դուս էկած զարա իս, գո՛զալ:

Սիրասիրմըդ սըրտիս մեչը ցանեցիր,
Նազ ու դամզով, յա՛ր, իմ հոքիս հանեցիր,
Էս քու Սայաթ-Նովուն դո՛ւն ըսպանեցիր.
Գըլխիդ էկած դադեն առա յիս, գո՛զալ:

*ՔԱՆԻ ՎՈՒՐ ՋԱՆ ԻՄ*
*(հայկական)*

Քանի վուր ջան իմ,
Յա՛ր, քի դուրբան իմ,
Աբա ի՞նչ անիմ,
Արտասունք անիմ,
Շատ հոքուց հանիմ,
Յա՛ր, դադետ անիմ:
Ասիր՝ Ջեյրան իմ,
Թուղ քի սեյր անիմ,
Յա՛ր, մըտիկ անիմ:
Մո՛ւտ բաղչեն նազով,
Միզ գովիմ սազով:

## *ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ*
*ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ*

Ոչ քսան, երեսուն տարուց ավելի ա, իմ ազի՛զ հեր, իմ սիրելի՛ ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գիշեր-ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցս, ախն ու ոխը իմ բերանիցս չի պակսում, ա՛յ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո ամեն սհաթ մահվան հրեղեն սուրը գլխիս պտտում էր, ամեն րոպեի ձեր սիրտն ու դարդը հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձենը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ձեր ազնիվ միտքն ու կամքը, վայելում ձեր ազիզ սերն ու բարեկամությունը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին, էն հիանալի թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր Հայրենյաց, մեր սուրբ աշխարհքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնությունը ու արած քաջությունները: Մասիսն առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ինչ աշխարհքի ծնունդ եմ ես. դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ, երազում թե լուրջ, միշտ էլ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առաջս էր բերում:

* * *

Թող ինձ այսուհետև տգետ կանչեն, լեզուս բաց ա էլել, ի՛մ ընտիր, ի՛մ ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ: Թող տրամաբանությունը գիտցողը իրեն համքյարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար:

Ով թուր ունի, առաջ իմ գլխիս խփի, իմ սիրտս խրի, ապա թե ոչ՝ քանի բերնումս լեզու կա, փորումս՝ սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ.

- Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում:

* * *

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ, Հայոց ազգ, քո հողին մատաղ, Հայոց աշխարհ. էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, էն ո՞ր մեջքը ձեզ բերեց, էն ո՞ր ձեռքը ձեզ գրկեց, էն ո՞ր բերանը ձեզ օրհնեց,

որ դուք էս հոգին ունենաք, էս սիրտը ձեր միջումն ըլի, էս հրաշքը դուք աշխարհին ցույց տաք:

* * *

Ախ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը, Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ինչո՞վ կարես ասիլ, թե ո՛ր ազգիցն ես: Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ:

* * *

Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայո՛ց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեք:

* * *

Զանգի՛, Զանգի՛, անողոքելի՛ իմ Զանգի, սիրտ իմ մորմոքի, աղիք իմ գալարի, ոսկերք իմ քստմնին, ուշ իմ աղմկի, հոգի իմ բորբոքի. տուայտիմ ի ցավս, վարանիմ ի ծուփս, հառաչեմ լալով, հայցեմ ողբալով. ա՛ռ զիմ արտասուս, տո՛ւր ինձ սփոփ, յոյս:

## *ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ*
## *ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ*

Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս
Եվ արա՛ զնոսա պայծառ.
Կեցո՛ զՀայս:

Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովիմբ մարթասցին
Ապրիլ յաստիս:

Ո՞վ Տէր մեր, Տէ՛ր, փութա՛, զԱզգն մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց.

Գիտե շոյել երազներ բյուր:
Երկնի բույրն հուշ կածե առ հեք:

Ո՜հ, փունջ մը բոց փսփսաց ինձ,
-Կ՚ուզե՞ս պաշտել հոգի մ՚ամբիծ:

Ես ուզեցի քնարով մի
Լոկ սիրել հոս, հոս դալկահար,
Պաշտել, գրկել միայն քնար,
Սիրող էակ ճանչել զ՚անի,
Ըստ իմ քմաց լարել աղի,
Եվ սրտակցիլ սիրողաբար:

Նե մոտեցավ հուշիկ, ըսավ.
- Քնարդ է ցուրտ սիրտ, և սերդ՝ ցավ:

Թոթվեց թևերն հոգիս մոլար,
Ճանչեց զնե՝ գեղ ու կրակ,
Սիրտն անապակ՝ ինչպես վտակ,
Անմե՛ղ՝ ինչպես սյուք դալկահար,
Հավատարի՛մ՝ ինչպես քնար,
Հրաժեշտ տվավ կյանքի մենակ:

Բույլ մը նայվածք, փունջ մը ժըպիտ՝
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ:

*ԴՐԺԵԼ*

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ՚անեծք խոցեց հոգյակս:
Ես ուզեցի պաշտել զնե,
Սիրել ժպիտքն՝ փթիթք անհուն,
Սիրել աստղերն սև աչերուն,
Եվ այն խոկումն, որ մթագնե

Կափո՛ զաչս նոցուն, Հա՛ն զարմատոյն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հզօր:

Ի քո իջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա՛:

## *ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ*
### *ՀՐԱԶԴԱՆ*
*(հատված)*

Հրազդան, գետակդ իմ հայրենի,
Հրազդան, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդխտիկ,
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, է՞ր կու լայք լռիկ:

Ա՞հ, անցուգնաց եղել ամեն.
Ա՞հ, անցուգնաց է Հայաստան.
Ջիս անմեկին թողած աստեն՝
Հետ անցնիս գնաս դուն այլ, Հրազդա՛ն...
Անցի՛ր գնա ջրիկդ հայրենի,
Արտասու՛ք հերիք են Բաբկենի:

## *ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ*
*(հատված)*

Կես գիշերն առել էր գիշերավար,
Լուսնակն ամպի տակ բացխփիկ խաղայր.
Մինչ հովն շրջկոտ կախ թևոքն անտառ
Օդոց և ծառոց հանգիստ կու կարդայր.
զԱվարայրի մութն ու կանաչ ծոցիկ

Ծայրե ծայր ճղքեր Տղմուտն հանդարտիկ,
Մետաքսանման անձայն խատուտիկ
Թավլեցնելով հազար բյուր ալիք:
Ի աստից ու անտից կան երկու բանակք
Իբրև անկռիվ ընկած մեռունուկ.
Երկուցն միջո բարձրացած լուսնակ
Կու թվի վահան զորաց պահպանակ:

## *ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ*
### *ԳԱՐՈՒՆ*

Ո՞հ, ինչ անուշ և ինչպես զով
Առավոտուց փչես, հովի՛կ,
Ծաղկանց վրա գուրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ:
Բայց չես հովիկ իմ Հայրենյաց,
Գնա՛, անցի՛ր, սրտես ի բաց:

Ո՞հ, ինչ աղու և սրտագին,
Ծառոց մեջեն երգես, թռչնի՛կ,
Սիրո ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենյաց.
Գնա՛, երգե՛ սրտես ի բաց:

Ո՞հ, ի~նչ մրմունջ հանես, վտա՛կ,
Ականակիտ և հանդարտիկ.
Քո հայելվույդ մեջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ,
Բայց չես վտակ իմ Հայրենյաց,
Գնա՛, հոսե՛ սրտես ի բաց:

Թեպետ թռչնիկն ու հով Հայոց
Ավերակաց շրջին վերա,

Պայծառ ճակատն՝ այն ամպն է.
Որ կ'շպարե դեմքը լուսնույն:
Գիշեր մը սուգ, անդունդ մ'հառաչ
Հուզեց նրա հոգին ու լանջ:

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մտիկ ընել թնդյուն սրտին.
Շնչել, խմել ներա հոգին,
Եվ շոշափել լոկ ձյունափայլ
Ծոծորակին վրա ծալ-ծալ
Թափող վարսից այլակք ծփին:

Օվկեան մը տրտունջ լսեցի,
«Ջիս կը նեղես»,-հծծեց ինձի:

Ես ուզեցի քնար մ'ըլլալ
Ներա ձեռքին տակ հնացող,
Ներա հոգվույն խորն հիացող
Թեթև պատկեր մ'ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ զնե' խոկալ,
Կ'վառե երազ մ'որուն մեկ շող:

Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս,
Գոչեց. «Սիրել չ'ես կրնար զ'իս»,
Իզուր սիրտս մխաց առջին՝
Խնկարկելու սիրտն անապատ.
Ցուցի իրեն ճակատս գունատ,
Կուրծս գոգած, մառն իմ աչքին,
Ի զուր շուրթերս դողդոջեցին,
Ջ'ինքը սիրելս հծծեցին հայտ:

Նե հեռացավ ինձմե, ըսավ
-Բա՛վ սիրեցի քեզ, մնաս բարյա~վ:
Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,

Թեպետ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մեջ կսողա,
Նոքա հառաչք են Հայրենեյաց,
Նոքա չերթան սրտես ի բաց:

## ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՎՈՅՆ

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանք լեռնասույզ
Սարե ի սար չարաշշուկ տարին լուր,
Ու չերգեցին ողբոց երգեր սրտահույզ,
Երբ պատանվույն բացինք մռայլ փոսին դուռ:

Գիշերական մունջ ստվերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով զհող փորեցինք.
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր զդաշտն, բլուր և երկինք:

Պետք չէր դագաղ և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցվեր ազատորդի Զեյթունցին.
Նա հետ մարտին կարծես հոգնած կուհանգչեր,
Ու վերարկուն կարմիր բավեր յուր անձին:

Անձայն ու կարճ «Ննջեցելոց» մի զրուցեց
Մեր քաջ տերտերն, զինվոր հայոց ւ' Աստուծ,
Գովեց զմահն և զքաջությունն յուր օրինեց,
Թույլ չի տվավ հառաչ մ'ու ճիչ հանելու:

Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշեն,
Տեսանք զգեղ ճակտին ու վերքն պայծառ,
«Ո՜վ պատանյակ, ըսինք ամենքս մեկ բերնեն,
Վասն հայրենյաց մեռար, դու շատ ապրեցար:

Գնա զրուցե հայկազարմից մեծ ոգվոց,
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ հայեր,

Որոնք ի բյուր պատերազմաց թեպետ խոց՝
Մեջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր»:

Մեյ մ'ալ քամի հանկարծ փչեց ցրտաշունչ,
Լուսին շողեր, եկավ գոցեց մթին ամպ,
Ու մեր սարերն, զերթ ուրվականք անմռունչ
Սև գլուխնին տնկած դիտեն ապշությամբ:

Հայնժամ ցուրտ-ցուրտ հող լեցուցիք յուր վրան,
Խաչ մը դրինք, ինչպես յուր մոր պատվեր ետ.
Ո՛չ այլ շքեղ արձանագիր, ո՛չ տապան.
Ձինքն մինակ թողուցինք յուր փառքին հետ:

## *ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ*

Ի բյուր ձայնից բնության շքեղ
Թե երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ,
Թե որ զարնեն փափուկ քնար,
Չունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր ենք մեք,
Որ մրրկավ էինք զատված,
Բաղդին ամեն ոխ չարանենգ,
Ի մի համբույր ցրվին ի բաց,
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնե զորդիս յուր քովեքով,
Սրտին խորունկ վերքն դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով:
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մոխիր դարձան երազներս յ'իս,
Ճակատագիրս խնձոցաց ի վեր,
Խորշ մը կար որ զ'իս չը ծաղրեր,
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս...:

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ'անեծք խոցեց հոգյակս:

## ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած են, լճա՛կ,
Ու չ'են խայտար քու ալյակք,
Մի՞թե հայլվույդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ:

Եվ կամ մի՞թե կզմայլին
Ալյակքդ երկնի կապույտին,
Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նմանին փրփուրքիդ:
Մելամաղձոտ լճա՛կդ իմ,
Քեզ հետ ըլլա՛նք մտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավիլ, լռել ու խոկալ:

Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բյուր:

Այլ եթե գոգդ այլ թափին
Բույլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չես կրնար դուն
Հոգվույս՝ որ է բոց անհուն:

Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք,
Մեկտեղ թափին մեր քրտինքներ,
Ջհունձ բարյաց յերկինս հանենք,
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր:
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

*ՍԻՐԵԼ*

Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ:
Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փթիթք՝ խորշեր թավուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտվան շաղն, իրիկվան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ,
Խոկալ, սուզիլ, զմայլիլ սուտ:

Ո՜հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ:

Ես ուզեցի լոկ ու մինակ
Սրտակցիլ ջինջ վտակին հետ,
Հիշատակի չ'ունի նա հետ,
Սիրտ մ'որուն մինչ սուզիմ հատակ,
Գտնիմ զիս հոն դժգույն, հստակ,
Գաղտնիք մ'ունի այն՝ անթիվ վետ:

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց.- կ'ուզե՞ս, սիրտ, ե՛կ ինծի:

Ես ուզեցի սիրել զեփյուռ,
Որ երկնքեն թռչի բեկբեկ,
Նա չը՝ սիրեր խոցել երբե՛ք,

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկները հոդ չեն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ եք դու և օդ:

Լճա՛կ, դո՛ւ ես թագուհիս,
Չի թ՚հովմե մ՚ալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խռով
Ջ՚իս կը պահես դողդողալով:

Ծատերը զ՚իս մերժեցին,
«Քնար մ՚ունի սոսկ»,- ըսին.
Սին՝ «Դողդոջ է, գույն չ՚ունի»,-
Մյուսն ալ ըսավ.- «Կը մեռնի»:

Ոչ ոք ըսավ. -«Հե՛գ տղա,
Արդյոք ինչո՞ւ կը մխա,
Թերևս ըլլա գեղանի,
Թե որ սիրեմ, չը մեռնի»:

Ոչ ոք ըսավ.- «Սա տղին
Պատռենք սիրտը տրտմագին,
Նայինք՝ ինչե~ր գրված կան...»
- Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:

Հոն կա մոխի~ր... հիշատա~կ...
Այլակդ հուզի՛ն թող, լճա՛կ,
Չի քու խորքիդ մեջ անձկավ
Հուսահատ մը նայեցավ...:

*ՏՐՏՈՒՆՋՔ*

Է՛հ, մնաք բարով, Աստված և արև,

Որ կը պլպլաք իմ հոգվույս վերև...
Աստղ մ'ալ ես կերթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ոչ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծույն՝ շանթերու արմատ՝
Հավելուն զենքերն ու զարդերն հրատ...:
Այլ, ոհ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե զ'իս,
Աստվա՛ծ, խոկն հրսկա, փշրե հյուլեիս,
Որ ժպրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուղքն ահալի...:
Ողջույն քեզ, Աստվա՛ծ, դողդոջ էակին,
Շաղին, փթիթին, ալվույն ու վանկին,
Դու, որ ճակտիս վարդն և բոցն աչերուս
Խլեցիր՝ թրթռումս շրթանց, թռիչն հոգվույս,
Ամպ տվիր աչացս, հնք տվիր սրտիս,
Ըսիր՝ մահվան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կյանք մը պահած ես ետքի,
Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի.
Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղին մեջ համր անշշունջ,
Այժմեն թող որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պլլվիմ անվանդ, մռնչիմ անդադար,
Թող անեծք մ'ըլլամ ու կողդ խրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Ո՜հ, կը դողդոջե~մ, տժգույն եմ, տժգո~ւյն,
Փրփրի ներսս դժոխքի մ'հանգույն...:
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մեջ սև,
Թափելու մոտ չոր աշնան մեկ տերև..
Ոհ, կա՛յծ տվեք ինձ, կա՛յծ տվեք, ապրիմ...
Ի՜նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրիմ...
Այս ճակատագիրն ի՜նչ սև է, Աստվա՛ծ,
Արդյոք դամբանի մրուրո՞վ է գծված...:
Ո՜հ, տվեք հոգվույս կրակի մի կաթիլ,

Սիրել կ'ուզեմ դեռ ւ'ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղե՛ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կա՛յծ տվեք, կյանք՝ ձեր սիրահարին հեք:
Գարունն ո՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժպիտ մ'ինձ չեն տար:
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն հար կուլա, խուզարկե վիեր:
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,
Անոր համար նա դրավ այդ լուսին.
Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող մ'իր վրան:
Ի զուր գրեցին աստղերն ինձի «սեր»,
Եվ ի զուր ուսույց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զուր սյուքեր «սեր» ինձ ներշնչեցին,
Եվ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զուր թավուտքներ լռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չ'առին երբե՛ք շունչ,
Որ չը խռովին երազքս վրսեմ,
Թույլ տվին, որ միշտ զնե երազեմ,
Եվ ի զուր ծաղկունք, փթիթներ գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցս խորան...
Ո՞հ, նոքա ամենքը զ'իս ծաղրեր են...
ԱՍՏՈՒԾՈ ԾԱՂՐՆ Է ԱՇԽԱՐՀՆ ԱԼ ԱՐԴԵՆ...:

*ՁՂՋՈՒՄ*
*(օր մը վերջին)*

Երեկ երբ պաղ քրտանց մեջ
Սև մրափ մը կ'առնեի,
Եվ թոշնած զույգ մը վարդեր
Այտերուս վրա կ'այրեին,
Անշուշտ ճակտիս վրա մահու
Դալկություն մը կը պլպլար,
Եվ մահու թռիչ մ'ունեի,
Լսեցի մորս հեծեծում...

Մանկությա~ն օրեր, ինչո՛ւ այդպես շուտ
Թռաք գնացիք, անդարձ հավիտյան.
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ
Կարծում էի ինձ աշխարհի իշխան:

Գերության շղթան ինձ զգալի չէր,
Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.
Ձեզանից հետո ծանրացան նոքա,
Ո՞հ, անիծում եմ ես այս օրերը:

Լո՛ւռ կաց դու, քնա՛ր, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապոլլո՛ն, ե՛տ առ դարձյալ դու նորան,
Տուր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կյանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դեպ հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարին ընդդեմ պատերազմելով:

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին.
Արյու՛ն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Թո՛ղ պատգամախոսը հնացած Դելֆի,
Յուր եռոտանու վրա փրփրի.
Թո՛ղ միջին դարու գաղափարներով
Ամբոխը խաբել ճգնի աշխատի:

Թո՛ղ նա թարգմանե զրպարտությունը,
Թո՛ղ մխիթարվի ծովի ափերում,
Մենք ազատության ենք միայն թարգման,
Միայն այս խոսքս ունինք բերանում:

Բացի աչերս խոնջած,
Մորս արտոսրը տեսի...
Ո՜հ, ճշմարիտ գորովի
Մարգարիտներ սուտ ու կեղծ...:
Մայրս անհուն ցավ մ'ուներ,
Այն սև ցավը ես էի...
Ա՜հ, գլուխըս փոթորկեց...
Այս սև հեղեղն տվի դուրս...
Ո՜հ, ներե՛ ինձ, Աստված իմ,
Մորս արտոսրը տեսի...:

## *ԻՄ ՅԱՎԸ*

Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գտնել աղբերքն համայր,
Ցամքիլ ծաղիկ հասակի մեջ,
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Ջերմ համբույրով մը դեռ չ'այրած
Սա ցուրտ ճակատս դալկահար՝
Հանգչեցուցնել հողե բարձին,
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ - փունջ մը՝
Ժպտե, գեղե, հուրե շաղյալ,
Գրկել սա ցուրտ հողակույտը,
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Քաղցր երազով մ'հղի մրափ մը
Չ'անդորրած գլուխս մրրկահար՝
Ննջել հողե վերմակի տակ,
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Հագնիլ հյուղին մուր-անունը,
Ծծե՛լ նորա մրուր - օդն հար,

Միշտ ցավի՛լը միանգամայն.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ,
Չ'օգնած անոր՝ մեռնիլ աննշան,
Ո՜հ, այս է սոսկ ցավ ինձ համար:

## *ԻՆՃԻ Կ'ԸՍԵՆ*

Ինձի կ'ըսեն.- «Ինչո՞ւ լուռ ես»,-
«Ա՜հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բռնկի,
Չի անհուն է այն ալ ինձ պես»:

Ինձի կ'ըսեն.- «Միշտ տխուր ես»,-
«Ինչպե՞ս չըլլամ, մեկիկ-մեկիկ
Թոթափեցան գլուխս աստղիկք...
Արշալույս մը չ'անցավ սրտես»:

Ինձի կ'ըսեն.- «Կրակոտ չ'ես,
Լճակի մը պես ես մեռած,
Դալկահար դեմքդ ու հայեցված»:
«Ո՜հ, հատակն են իմ փրփուրներս»:

Ես ինձ կ'ըսեմ.- «Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գնա գոգ,
Գերեզմա՛ն, հո՛ն գտնես դու գոգ
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր...»:

## *ՆԵ*

Վարդը գարնայնի
Թե կույսին տիպար
Այտերուն չ'ըլլար՝
Ո՞վ 'հարգեր զ'անի:

«Ո՜հ, հա՛յր, ո՛վ դու հայր, որ երկնքում ես,
Խնայիր թշվառ մեր անտեր ազգին.
Մի՛ տուր զոհ գնալ թշնամիներին».
Նա այլ չէր լսում դելֆյան հարցուկին:

## *ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ*

Ազատն Աստված այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել.
Ես՝ անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով
Ազատություն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրորոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մորս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատությունը սիրել:

Թոթով լեզվիս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խոսքս, որ ասացի,
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ.
Ազատություն դուրս թռավ
Իմ մանկական բերանից:

Թե չը նմաներ
Կապույտ եթերաց
Կույսին աչերաց՝
Երկինք ո՞վ 'նայեր:

Թե կույսը չ'ըլլար
Սիրուն ու անբիծ,
Աստվածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար:

## ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆ
### *ԿԻԼԻԿԻԱ*

Երբոր բացվին դռներն հուսո,
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Չքնաղ երկիր մեր Արմենիո,-
Երբ փայլե յուր քաղցրիկ օրեր.
Երբ որ ծիծառն ի բույն դառնա,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Սյուրիո,
Լյառն Լիբանանի և յուր մայրեր.
Տեսի զերկիրն Իտալիո,
Վենետիկ և յուր գոնդոլներ:
Կոզի, նման չիք մեր Կիպրյա,
Եվ ո՛չ մեկ վայրն է արդարև
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա
Աշխարհ, որ ինձ ետուր արև:

Հասակ մը կա մեր կենաց մեջ,
Ուր ամենայն իղձ կավարտի.
Հասակ մը, ուր՝ հոգին ի տենչ՝

Հիշատակաց յուր կարոտի.
Հորժամ քնարն իմ ցրտանա,
Սիրույն տալով վերջին բարևս,
Երթամ, ննջել յիմ Կիլիկիա,
Աշխա՛րհ, որ ինձ ետուր արև:

## *ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ*
## *ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ*

Մանկությա~ն օրեր, երազի նման
Անցաք գնացիք, այլ չեք դառնալու.
Ո՜հ դուք երջանիկ, ո՜հ, անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից հետո եկավ գիտություն
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա,
Ամեն բան ընկավ մտածության տակ,
Որպե՛ չմնաց ազատ կամ ունայն:

Գիտակցությունը հաջորդեց սորան.
Ազգի վիճակը ծանրացավ սրտիս...
Ապոլոն տվեց ինձ յուր քնարը,
Որպես փարատիչ տրտում ցավերիս:

Ավա՜ղ, այդ քնարն իմ ձեռքում հնչեց
Նույնպես լալագին, նույնպես վշտահար,
Ինչպես իմ սիրտն էր, իմ զգացմունքը.
Ուրախացուցիչ չգտա մի լար:

Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցավերից ազատվելու չեմ,
Որչափ իմ ազգս կմնա ստրուկ
Օտարների ձեռք, անխոս, տխրադեմ:

«Ազատությո՞ւն,- ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից,-
Ազատությա՞ն դու զինվոր
Կամիս գրվել այս օրից:
Ո՜հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կսպասե.
Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»:

«Ազատությո՛ւն,- գոչեցի,-
Թող որոտա իմ գլխին,
Փայլա՛կ, կայծա՛կ, հո՛ւր, երկա՛ք,
Թող դա՛վ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատություն»:

## ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ
### ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,-
Իմ ծերացած մոր մոտ էր-
Փայլեց նշույլ ուրախության,
Բայց, ափսո՜ս, որ երազ էր:
Կարկաչահոս աղբյուրն այնտեղ
Թավալում էր մարգարիտ.-
Նա հստակ էր, որպես բյուրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:

Եվ մեղեդին տխուր, մայրենի
Հիշեց մանկության օրեր,
Մորս համբույրն ես զգացի,
Ա՜խ, ափսոս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարոտագին,
Աչքերս սրբեց՝ շատ թաց էր,-
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր...

## *ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ*
## *ՕՐՈՐՈՅԱՅԻՆ ԵՐԳ*

Արի՛, ի՛մ սոխակ, թո՛ղ պարտեզ, մերին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխա՛կ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե տիրացու դառնալ:

Եկ, աբեղաձա՛գ, թո՛ղ արտ ու արոտ,
Օրորե տղիս, քնի է կարոտ.
Բայց նա լալիս է. դու, ձագո՛ւկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե աբեղա դառնալ:

Թո՛ղ դու, տատրակի՛կ, քու ձագն ու բունը,
Վուվուով տղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակի՛կ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե սգավոր դառնալ:

Կաչաղա՛կ ճարպիկ, գող, արծաթասեր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե սովդաքար դառնալ:

Թո՛ղ որսդ, արի՛, քաջասի՛րտ բազե,
Քու երգը գուցե իմ որդին կուզե...
Բազեն, որ եկավ, որդիս լռեցավ,
Ռազմի երգերի ձայնով քնեցավ:

## ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Քո՛ւն եղիր,բալա՛ս, աչքդ խուփ արա,
Նախշուն աչքերուդ քուն թող գա վրա,
Օր-օր-օր, պալաս, օրոր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կտանի:

Օսկի խաչ վզիդ՝ քեզի պահապան,
Նարոդ կապիլ է ծարեն տեր-պապան,
Օր-օր-օր, պալաս, օրոր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կտանի:

Մավի հիլուններ կախիլ իմ ես ալ,
Նազար չիս առնուլ, քու՛ն եղիր. մի՛ լար.
Օր-օր-օր, պալաս, օրոր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կտանի:

Աս քանի՞ մորդ անքուն աչքովը
Անցիլ է օրեր օրոցքիդ քովը.
Օր-օր-օր, պալաս, օրոր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կտանի:

Օրոցքդդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մղկտան ծանով սիրտս չի մաշիս.
Օր-օր-օր, պալաս, օրոր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կտանի:

Դուն ալ քո՛ւն եղիր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ աստվածամայր, (այս անունին) քուն տուր:
Օր-օր-օր, պալաս, օրոր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կտանի:

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Այլաց մեջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ հեղեղուկ,
Պղտոր ջրով եզերքին
Դարիվ-դարիվ խփելով
Փախչում էին լալագին:

- «Արա՛քս,-ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սգավոր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սեգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:

Մի՛ պղտորիլ հատակդ,
Հանդարտ հոսե՝ խայտալով,
Մանկությունը քու կարճ է՝
Շուտ կհասնիս դեպի ծով:

Վարդի թփեր թող բսնին
Քու հյուրընկալ ափի մոտ,
Սոխակները նոցա մեջ
Երգեն մինչև առավոտ:

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մեջ քո ջրին
Ճկուն ոստն ու տերև
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մոտ երգելու
Հովիվք թո՛ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վճիտ
Ջուրը մտնին միշտ արձակ»:
Մեջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով
Էսպես խոսեց հատակից.

- Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրիս ինչու՞ դարևոր
Վրդովվում ես, նորոգում
Իմ ցավերը բյուրավոր:

Սիրելիի մահից ետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պճնվի
Իր զարդերով թանկագին:

Որի՞ համար զարդարվիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ...

Իմ ազգակից գիժ Քուռը,
Թեև այրի ինձ նման,
Ստրկորեն կրում է
Գայթակղիչի կուռ շղթան:

Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես հայ, հայիս կճանչնամ,
Օտար փեսա չուզելով,
Ես միշտ այրի կմնամ:

## *ՍԱՐՆ Ի ՎԵՐ*

Դեպի վեր, դեպի վեր... Անվերջ է ուղիս,
Հոգնեցան բազուկներս՝ այս կռվումն անզոր,
Սպառեցավ և վերջին ուժն էլ ծնկներիս -
Դեպի վեր, սարն ի վեր, քաջասի՛րտ զինվոր:

Ավելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Ավելի թող սպառնան անդունդն ահավոր,
Դեռ շունչ կա բերանում, շարժվում են ձեռքեր -
Դեպի վեր, սարն ի վեր, ո՛վ արի զինվոր:

Դեռ հեռու է կատարն անամպ ու հստակ,
Բայց եթե չհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ,-
Դեպի վեր, սարն ի վեր, անվեհե՛ր զինվոր:

## *ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ*
## *ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ*

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քեֆ էին անում
Եվ ուրախանում
Մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը:

Մենք՝ առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխաբաց կանգնած,
Ձեռքներս խոնարհ սրտներիս դրած,
Ձիլ, ուժեղ ձայնով նրանց սպասում-
Տաղ էինք ասում:

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շքեղազարդ հարսի պես
Հազար ու բյուր պչրանքով,
Փախչում էի ափերես:

Հատակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչև այգ
Ջրիս միջին էր լողում:

Ի՞նչս մնաց էն օրից,
Ո՞ր ջրամոտ գեղերս,
Ո՞ր ին շեն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս:

Տուրքը ջրի ամեն օր
Իր սուր ծոցեն Արարատ
Մայրախնամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ:

Բայց ես այս սուրբ ջրերով
Սուրբ Ակոբի աղբյուրին,
Պիտի ցողեմ արտորա՞յքն
Իմ ատելի օտարին...

Մինչ իմ որդիք,- ո՞վ գիտե-
Ծարավ, նոթի, անտերունչ
Օտար աշխարհ հածում են
Թույլ ոտքերով կիսաշունչ...:

Հեռո~ւ, հեռո~ւ քշեցին
Բնիկ ազգն իմ հայկյան,
Նորա տեղը ինձ տվին
Ազգ անկրոն, մոլեկան:

Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հյուրընկալ ափերը,
Եվ կամ դոցա՞ հրապուրեմ
Ճպռոտ, պլշած աչերը:

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մնան պանդուխտ,-
Ինձ միշտ սգվոր կը տեսնեք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...

Էլ չը խոսեց Արաքսը,
Հորձանք տվեց ահագին,
Օղակ-օղակ օձի պես
Առաջ սողաց մոլեգին:

## *ՀՈՒՅՍ*

Թո՛ղ փչե քամին պաղ-պաղ երեսիս,
Վերեն՝ ամպերեն սաստիկ ձյուն թո՛ղ գա.
Որքան որ կուզե, թո՛ղ փչե Հյուսիս,
Հուսով եմ՝ վաղ-ուշ, գարունը պիտ գա:

Թուխպը թո՛ղ պատե երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թո՛ղ փակե,
Տարերք աշխարհիս խառնվին իրար,
Հուսով եմ, վաղ-ուշ, արև պիտ ծագե:

Թո՛ղ գա փորձություն, թո՛ղ գա հալածանք.
Խավար թող դառնա անաղոտ լույսը.
Սարսափելի չեն հային տառապանք՝
Միայն...չի հատներ խղճուկի հույսը:

Երբ զվարթագին մեր երգը լռեց,
Մռայլ թամադեն բեղերն ոլորեց,
Նրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին.- «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

Ժամանակ անցավ, նրանք էլ անցան,
Զվարթ երգերս վշտալի դարձան.
Եվ ես հիշեցի մեր օրը լալիս,
Թե մեզ օրհնելիս
Ինչու ասացին.- «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

Խաղաղությո՜ւն ձեզ, մեր անբա՛խտ պապեր,
Ձեզ տանջող ցավը մեզ էլ է պատել:
Այժմ, տխրության թե քեֆի ժամին,
Մենք էլ, օրհնելիս մեր զավակներին,
Ձեր խոսքն ենք ասում.- «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

## *ԴՈՒ ՔՈ ԾԱՄՓԵՆ*

Դու քո ճամփեն գնա, քույրիկ,
Եվ թող լինի նա պայծառ:
Ինձ մի՛ ժպտա, ինձ մի՛ սիրիր,
Ես ընկեր չեմ քեզ համար:

Ելած կյանքի ամեն ճամփից,
Կարոտներով անմեկին,
Ագահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

* * *

Ա՜խ, տվե՛ք ինձ քաղցր մի քուն,
Կյանքից հեռու սլանամ
Այն աշխարհը, ուր խնդություն,
Ուր սերն է միշտ անքառամ:

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բույրը զվարթագին
Ծծեմ անվերջ ես անհագ:

Եվ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջե,
Մի թարմություն եղեմային
Չորս բոլորքս տարածե:

Եվ ինձ ժպտի արշալույսին
Գարնան մատաղ արեգակ,
Եվ գիշերով իմ ճակատին
Խաղա գողտրիկ վառ լուսնակ:

Եվ աչագեղ կույսն ականջիս
Յուր մեղեդին մեղմ հնչե,
Եվ հերարձակ սիրով վզիս
Փարե քնքուշ, փաղաքշե...

Եվ հավիտյան վայելչություն
Գրկե հոգիս, չհագենամ...
Ա՜խ, տվե՛ք ինձ քաղցր մի քուն,
Հեռու, հեռու սլանամ:

Մի ձեռք չկա, մի գիրկ չկա՝
Պահի նրան իրեն մեջ,
Խենթ, խելագար գնում է նա
Ձգտումներով իմ անվերջ:

Եվ ո՛վ գիտի՝ դեռևս անմեղ
Քանի հոգի կը տանջվի,
Եվ ո՛վ գիտի՝ ինչ մութ, ահեղ
Անապատում կհանգչի...

Դու քո ճամփեն գնա, քույրիկ,
Եվ երբ լինենք մենք հեռու,
Աղոթք արա, որ մյուս անգամ
Չհանդիպենք իրարու:

## *ՄԵՐ ՈՒԽՏԸ*

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու գնում ենք մեր ճամփով,
Մրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դրոշը սրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար
Երկրից երկիր ցիրուցան:

Բայց գնում ենք մենք անվեհեր
Ձարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

## ՀԱՄԵՐԳ

Վտակը ժայռից ներքև է թռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Զարկում ավազին, շաչում է, ճչում,
Ճչում անհանգիստ, փրփուրը բերնին:

Ինչպես ծերունին, ձայնով պառաված,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպես էլ ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալիս ջրի աղմուկին:

Այնինչ բնության զվարթ համերգի
Ունկնդիրն անխոս, հավիտենական,
Ժայռը մտախոհ՝ իր մռայլ մտքի
Ետնից ընկած՝ լսում է նրան:

## ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում,
Մինչև երկինք կապուտակ,
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ:

Ո՛չ հատակն է գտնում անվերջ
Ու ո՛չ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին:

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում,
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ,
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տխուր, դատարկ ու խավար,
Զարկվա՛ծ հայրենիք,
Զրկվա՛ծ հայրենիք:

Խռնվում են մտքիս հանդեպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խնջույքներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Ողբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հնի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ.
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին -
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքերով,
Իմ նո՛ր հայրենիք,Հզո՛ր հայրենիք:

## ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անհույս մթնում
Երկար դարերով գնում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դժար լեռներում:

Տանում ենք հնուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծնել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի
Օրդուները սև
Իրարու ետև
Եկան զարկեցին մեր քարվանն ազնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը՝ շփոթ սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված-հատված,
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Երկնքի ծերին,
Թե երբ կբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

## ՎԱՅՐԷՋՔ

Քառասուն տարի բռնած ճանապարհ՝
Շիտակ, անվեհեր
Գնում եմ ես վեր՝
Դեպ Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամփով ահարկու
Անցել եմ էսպես
Ու հասել եմ ես,
Խաղաղությանն եմ հասել ես հոգու:

Թողել եմ ներքև, մեծ լերան տակին,
Ե՛վ փառքը, և՛ գանձ,
Ե՛վ քեն, և՛ նախանձ -
Ամենը, ինչ որ ճնշում է հոգին:

Եվ էն ամենը, արդ նայում եմ ես
Տեսնում եմ նորից
Իմ լերան ծերից,
Էնպես հասարակ, դատարկ են էնպես...

Եվ ես իմաստուն ու բեռս թեթև,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով
Իջնում եմ զվարթ իմ լերան ետև...

## ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

Է՜յ աստղեր, աստղե՛ր
Երկնքի՛ աչքեր,
Որ այդպես վառ-վառ
Ժպտում եք պայծառ.
Ժպտում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ

Աշխույժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ
Թռվրռում էի
Ու ցավ չունեի...
Ժպտում եք այսօր,
Երբ թույլ ու անզոր,
Կորած հույսերիս
Կսկիծն եմ լալիս...
Կժպտաք նաև
Ծիրիմիս վերև...

## ԲԱՐՁՐԻՑ

Իմ բարի սրտի էն մեծ խոհերից,
Էն մեծ խոհերի անհուն խորերից՝
Կամեցավ՝ ելավ իմ հզոր հոգին,
Որ բարձրից նայի Աստծու աշխարհքին:

Ու պայծառ ցոլաց դեպ վերին այրեր՝
Մարդկային ամեն հնարքներից վեր,
Վեր ամեն շուքից և շամադաղից՝
Մինչև լուսեղեն ոլորտն անքախիծ:

Ու իր հարազատ բարձունքիցը լույս՝
Անչար, անաչառ, անդորր ու անհույզ՝
Պարզ, ամենատես հայացքովը նա
Ճառագեց ներքև՝ աշխարհքի վրրա:

Տեսավ աշխարհքը՝ գեղեցիկ, անվերջ,
Եվ հայրենիքներն անձուկ նրա մեջ,
Եվ աստվածները նրանց զանազան,
Եվ սուրբերը խիստ, խտրող ու դաժան:

Մի օր հատնի
Մարի, մթնի
Հրաժեշտի շողդ հավետ...

Բարի ճամփա՛, հյո՛ւրդ մեր հին.
Եվ թե տեսնես,
Մեզնից էսպես
Մի հարցում տուր հզոր մահին.
- Մարդու քանի՞ սերունդ կանի
Մի հրաժեշտն աստեղային:

*ՄՆՈՒՇ*

*ՆԱԽԵՐԳԱՆՔ*
*ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐԸ*

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին թռչելով՝
Փերիները սարի գլխին
Հավաքվեցին գիշերով:

- Եկե՞ք, քույրե՞ր, սեգ սարերի,
Չքնաղագեղ ոգիներ,
Եկե՞ք, ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել,
Խնդիրք արել աստղերին,
Փափագ սրտով խնդիրք արել՝
Բարի ժպտան իր սերին...

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին.
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,
Եվ կյանքը՝ տանջանք, ցավ համատարած:

Ու ոչ մի երկիր չկա հանգչելու -
Խոր, արարչական, հանգիստն անխռով,
Ու ոչ մի անկյուն չկա շնչելու,
Ծունչն աստվածային՝ լի անվերջ սիրով:

Անապատում վշտով վերստին նայեց,
Իմ էս մեծ սրտին՝ աշխարհքից էլ մեծ,-
Անսահման աշխարհք, և սեր ընդհանուր,
Եվ մարդը՝ ուրախ, և երգ ամենուր:

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու-
Խոր, արարչական, հանգիստն անխռով,
Էնտեղ հանգչելու, էնտեղ շնչելու,
Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

## *ԻՄ ԵՐԳԸ*

Գանձեր ունեմ անտա՜կ, անծե՜ր,
Ես հարուստ եմ, ջա՜ն, ես հարուստ,
Ծով բարություն, շնորհք ու սեր,
Ճոխ պարգև եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ գանձերի,
Սիրտս է առատ, լեն ու ազատ,
Ինչքան էլ որ բաշխեմ ձրի,
Սերն անվերջ է, բարին՝ անհատ:

Երկյուղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Իմ ծննդյան պայծառ օրեն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տվածն եմ տալիս իրեն:

## ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր,
Ուրկի՞ց եկել.
Ո՞ւր ես թեքել,
Ո՞ւր ես ճեպում էդքան հզոր,
Անճառ թափով,
Անծեր ճամփով,
Դարե՜ր, դարեր հազարավոր:

Սիրիո՛ւս, երկնից շքեղ գոհար,
Որ խաղում ես,
Փաղփաղում ես
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ
Ու զարդարում,
Զվարթ վառում
Մեր գիշերվան ճակատը մառ:

Ինչքա՛ն աչք են վրադ հառել,
Նայում են քեզ
Հիմա մեզ պես,
Ինչքա՜ն աչք է նայել, մարել,
Եվ կամ ինչքա՜ն
Դեռ պիտի գան,
Որ անհայտից կյանք չեն առել:

Ո՞վ առաջինն ասավ ողջերթ
Քեզ մեր հողից,
Մարդու ցեղից,
Կամ ո՞ւմ աչքում պիտի անհետ

Ափսո՜ս, Անո՜ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս, իգիթ քու յարին,
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին:

Ու նրանց հետ՝ ցող-արցունքով
Լցված սրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տխուր սյուքով
Հառաչեցին էն գիշեր:

- Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ քույրի՜կ,
Վո՜ւշ քու սերին, քու յարին,
Վուշ-վո՜ւշ, Սարո՜, վուշ-վո՜ւշ իգի՜թ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...

- Եկե՜ք, քույրե՜ր, սեգ սարերի,
Չքնաղագեղ ոգիներ...
Ու փերիներն էսպես տխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հրաշալի
Հնչյուններով դյութական,
Ու հենց շողաց ցոլքն արևի,
Անտես, անհետ չքացան:

Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
Մտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վտակների
Ալիքները պաղպաջուն:

* * *

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
Մնում էր յարին,

Ու չեղավ նա տես:
Խեղճը դողալով
Անհույս կռացավ,
Դարդից չորացավ,
Ուռենի դարձավ:
Ջրերի վրա
Գլուխը կախած՝
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՞նց է մոռանում...

* * *

- Բարձր սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի՝ «վա՛յ », սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր:

Որս եմ՝ բութես ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անգյուման,
Էս աշխարհքից բեզարած:

Կորչեմ բեզար, դատարգուն,
Քար-սարեսար, դատարգուն,
Մեռնեմ, պրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՞խ, կմեռնեմ, ամա նա
Վա՞յ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մնա:

* * *

Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր,
Կա հրաշալի, երջանիկ վայրկյան,
Բացվում են ոսկի երկնքի դռներ,
Ներքև պապանձում, լռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհրդով
Լցվում բովանդակ նրա սուրբ գթով:

Էն վեհ վայրկյանին չքնաղ գիշերի
Երկնքի անհու՜ն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալի՜ս՝ կարոտով մի հեզ համբուրվում
Աշխարհքից հեռո՜ւ, լազուր կամարում:

## *ԼՈՌԵՅԻ ՍԱՔՈՆ*

*(հայրված)*

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:

Նրանց ոտքերում՝ գազազած գալի,
Գալարվում է գիժ Դև-Բեղը մոլի,
Խելագար թռչում քարերի գլխով,
Փրփուր է թքում անզուսպ երախով,
Թքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փնտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
- Վա՜շ-վի՜զզ, վա՜շ-վի՜շ՜շ..

Մութ անձավներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ՝ հտպիտ ձայներով

Դևի հառաչքին արձագանք տալի,
Ծաղրում են նրա գոռոցն ահռելի
Ու կրկնում գիժ-գիժ.
- Վա՜շ-վի՜ շ, վա՜շ-վի՜շ..

Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Հենց որ մտնում են էն խավար ձորը՝
Ալիքների հետ խաղում դողալով,
Անհայտ ու մռայլ մի կյանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան էնտեղ,
Ծնչում է, ապրում և՛ մութն, և՛ ահեղ:

Էս տախտի վրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գլխին հսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կռինչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գլխից լուռ մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաչարձան:

*ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ*
*ՆԱԽԵՐԳԱՆՔ*

Հե՜յ, պարոննե՛ր, ակա՛նջ արեք
Թափառական աշուղին,
Սիրու՛ն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լավ ո՛ւշ դրեք իմ խաղին:

Մենք ամենքս հյուր ենք կյանքում
Մեր ծննդյան փուչ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՞կ նրան, որ իր գործով,
Կապրի անվերջ անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՞ծք նրա չար գործքին,
Որդիդ լինի, թե հերն ու մեր,
Թե մուրազով սիրած կին:

Ես լավության խոսքն եմ ասում,
Որ ժպտում է մեր սրտին,
Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը, լավ մարդին:

Է՜յ, լա՛վ կենաք, ակա՛նջ արեք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խոսքս, տեսեք, ո՞ւր է գընում,
Քաջ որսկանի գյուլլի պես:

* * *

Հե՜յ, պարոննե՛ր, ակա՛նջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լավ ո՛ւշ դրեք իմ խաղին:

Ամենքս էսպես հյուր ենք կյանքում
Մեր ծննդյան փուչ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.
Ա՜խ, երանի՝ ով մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ:

## ՄԱՐՈՆ

Մեր գյուղն էն է, որ հպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռը տված ճակատին՝
Միտք է անում տխրադեմ.
Ի՞նչ է ուզում՝ չգիտեմ...
Դաս չենք էնտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր,
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վնաս
Գալիս են մեզ անպակաս:
Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, որ երբեք
Հիշատակով տխրալի,
Սրտիս հանգիստ չի տալի:

Մեր գյուղից վեր մինչ էսօր
Կա ուռենի մի սգվոր:
Մեծ անտառից նա զատված,
Մարդու կացնից ազատված՝
Կանգնած է դեռ ու շոգին
Հով է տալիս մշակին:
Գիժ, լեռնային մի վտակ,
Խոխոջում է նրա տակ,
Խաղում կանաչ մարգերին:
Էն առվակում կես օրին,
Երբ որ շոգից նեղանում,
Գնում էինք, լողանում:
Տկլոր, աշխույժ խմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվզում
Գույն-գույն մանրիկ ավազում:

Կամ հետևում հևիհև
Թիքեռնիկին ոսկեթև,
Ու միշտ հոգնած ժամանակ
Էն մենավոր ծառի տակ
Նստում տխուր մի քարի,
Գերեզմանին Մարոյի...
Մարո՜, անբա՜խտ, վաղամե՜ռ,
Դու մանկության իմ ընկեր,
Որքա՜ն ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՜լ...
Ժիր էր Մարոն, դուրեկան,
Նոր էր ինը տարեկան,
Նրանց տունը երբ մի օր
Եկան երկու եկավոր:
Ու Մարոյի մայրիկը
Երբ որ բերավ, դրավ լիքը
Խոնչեն նրանց առաջին,
- Ծնորհակալ ենք մենք,- ասին,-
Տաշտներդ լի հաց լինի,
Դռներդ միշտ բաց լինի.
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տվեք մեզ ձեր տանից...
Էն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն ու ասաց.
- Կամքդ լինի, տե՛ր Աստված
Նշանեցին Մարոյին,
Տվին չոբան Կարոյին:

Չոբան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի.
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարզանդ էր գալիս.
Բայց զոքանչը անսահման
Սիրում, հարգում էր նրան:

Շատ էր սիրում և Մարոն.
- Լավն է,- ասում էր,- Կարոն,
Բերում է ինձ ամեն օր
Կանփետ, չամիչ ու խնձոր...

Մին էլ Կարոն աղմուկով
Եկավ զուռնա-թմբուկով,
Ու Մարոյին զուգեցին,
Երեսին քող ձգեցին,
Հինա դրին ձեռքերը...
Եկավ խաչով տերտերը,
Տարավ ժամում կանգնեցրեց.
- Տե՞ր ես, որդյա՛կ,- հարցրեց:
- Տեր եմ,- ասավ մեր Կարոն,
Լուռ կանգնած էր միշտ Մարոն...
Հայրն էլ եկավ ու ծեսին
Էսպես օրհնեց իր փեսին.
- Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջքդ ամուր բերդ լինի...
Իսկ երբ հնչեց «Տարան, հա՜»-ն,
Նրան փեսի տուն տարան:
Պսակեցին Մարոյին,
Տվին չորան Կարոյին:

Թե գրբացի չար ջանքով,
Գիր ու կապով, բժժանքով
Մանուկ սիրտը կտրեցին,
Կամ թե նրա հանդերձին
Էն անհոգի չար ջադուն
Քսեց գիլի ճրագուն...
Էդ չիմացավ ոչ ոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց իր մարդուն.
Փախավ, եկավ ետ հոր տուն:
Եկավ, լացեց նա վշտոտ,

Պապի կողքին չդրին:
Գյուղից հեռու մինչ էսօր
Կա ուռենի մի սգվոր:
Էն մենավոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Առանց ժամ ու պատարագ
Մեջը դրին Մարոյին,
Էն սև քարն էլ տաշեցին,
Բերին վրեն քաշեցին:

Շատ եմ տեսել, երբ սգվոր
Մայրը մենակ, սևաշոր,
Կորանալով էն քարին՝
Ձեն էր տալիս Մարոյին...
- Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՜ն,
Ո՞վ անիծեց, Մարո ջա՜ն,
Ո՞ւր փախար դու, Մարո ջա՜ն,
Տո՛ւն արի, տո՜ւն, Մարո ջա՜ն
Ձես զարթնում էլ, Մարո ջա՜ն...
Կորանալով էն քարին՝
Ձեն էր տալիս Մարոյին.
Խունկ էր ծխում, մոմ վառում,
Որ գիշերվան խավարում
Փայլփլում էր մեն-մենակ
Հեռվից երկար ժամանակ:

*ՓԱՐՎԱՆԱ*
*(հայրված)*

Էսպես անցան շատ տարիներ.
Տխուր աղջիկն արքայի
Նայե՜ց, նայե՜ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,
Հույսը հատավ... ու լաց եղավ.
Էնքա՜ն արավ լաց ու կոծ,

- Ես չեմ գնալ նրա մոտ.
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինել կին...
Հայրիկն էնժամ բարկացավ,
Ծեծեց նրան ու ասավ.
- Դո՛ւրս իմ տանից, սևերե՛ս,
Ետ չնայես դեպի մեզ,
Ոտ չդնես էլ տունս,
Մրոտեցիր անունս...
Լալով ծածկած իր դեմքը՝
Թողեց Մարոն հոր շեմքը:
Ու հալածված իր հորից,
Փախած չոբան Կարոյից
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով:
Կուչ էր գալիս խոնջալի
Օջախի շուրջ օտարի
Կամ թափառում մեն-մենակ,
Մեր հանդերում շարունակ:

Շատ ամիսներ անց կացան...
Դիմաց սարից մի չոբան
Ձեն էր տալիս մի օր մեզ,
Թե՝ իմացե՛ք, որ էսպես
Կարմիր շորով մի խիզան
Ընկավ ձորը մի կածան...
Դուրս թափվեցինք մենք գյուղից,
Հեռու կանգնած, երկյուղից,
Տեսանք ահեղ էն ձորում,
Ոնց էր լալիս ու գոռում
Մարոյի հայրն ալևոր,
Մայրը ճչում սգավոր:
Շատ լաց եղավ և Կարոն...
Մեռա՜վ, գնաց մեր Մարոն:
Սակայն անբախտ նրա դին

Որ լիճ կտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց,
Ծածկե՛ց, կորա՜ն, ինքն էլ հետը..
Այժմ էնտեղ տրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է ծփում,
Հստա՜կ, ինչպես արտասուք:
Ու էն վճիտ ջրերի տակ
Ցույց են տալի մինչ էսօր
Ծեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շենքերը փառավոր:

* * *

Ասում են՝ էն թիթեռները,
Որ գիշերվա խավարում,
Որտեղ ճրագ, որտեղ կրակ,
Որտեղ լույս է հենց վառվում,
Հավաքվում են, շուրջը պատում,
Մեջն են ընկնում խելագար,
Ասում են, թե էն Փարվանա
Ջահիլներն են սիրավառ:
Շտապելուց թև են առել,
Դարձել թեթև թիթեռներ,
Ու տակավին հուր տեսնելիս
Մեջն են ընկնում անհամբեր.
Ջանք են անում ամեն մինը՝
Շուտով տանի, տիրանա...
Ու այրվում են, այրվու՜մ անվերջ
Կտրիճները Փարվանա:

## *ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ*

### *I*

Ժամանակով Կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չուներ,

Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի
Ճանկել էր մի գառան մորքի:
Եկավ մի օր, ձմեռվա մտին,
Կատվի կուշտը տարավ մորքին:
- Բարի աջողում, ուստա Փիսո,
Գլուխըս մրսեց, ի սեր Աստծո,
Ա՛ռ էս մորքին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս համար:
Վարձիդ համար միամի՛տ մնա,
Համա-համա շատ չուշանա:

- Աչքիս վրա, քեռի Քուչի,
Մի գդակ ա, հո մի քուրք չի,
Քու թանկագին խաթեր համար,
Ուրբաթ օրը համեցեք տար:
Փողի մասին ավելորդ ա,
Մեր մեջ խոսելն էլ ամոթ ա,
Ի՜նչ մեծ բան ա, տո՛, հե՛ր օրհնած,
Միա՜յն, միա՜յն մի գդակի վարձ:
Ուրբաթ օրը քեռի Քուչին՝
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ ծանր ու մեծ,
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.
- Ուստեն ո՞ւր ա...փափախս ո՞ւր ա...
- Մի քիչ կացի, հրես կգա:

*II*

Ուստեն էկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փնթփընթաց
Ու մուշտարու վրա թընդաց.
- Ցուրտը տարա՞վ... վահ, տնաշե՛ն,
Չես թող անում մի շունչ քաշեմ.
Հեշտ բան հո չի՞,

Հլա նոր եմ ցրցամ տվել, թե որ կարեմ:
- Դե հե՛ր օրհնած, էտե՛նց ասա,
Էդ բարկանալն էլ ինչի՞ս ա:
Փող եմ տվել, վախտին կարի,
Թե չէ՝ ասա էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խոսում ես, վրես գոռում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի ա՞խպեր, գնամ ու գամ...
Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ գլուխը բաց:

*III*

Սին էլ եկավ, դարձյալ չկար.
Էս անգամը դիպան իրար.
Էլ անպատիվ, անկարգ խոսքեր,
Էլ հին ու նո՛ր, էլ հեր ու մե՛ր,
Էլ գող Փիսո՛, էլ քաչալ Շո՛ւն...
Բանը հասավ դիվան բաշուն:
Շունը մինչև գնաց, եկավ,
Ուստա Կատուն կոտրն ընկավ,
Գլուխն առավ ու մի գիշեր,
Հայդե, կորավ. էն կորչիլն էր...

*IV*

Էն օրվանից էլ մինչև օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել.
Մտքում հլա դեռ պահում ա,
Որտեղ կատվին պատահում ա,
Վեր ա թռչում, վրա վազում,
Իրեն մորթին ետ ա ուզում.
Իսկ սևերես Կատուն հանկարծ
Ետ ա դառնում ու բարկացած
Փշտացնում ա. մթամ նոր եմ
Ցրցամ տվել, թե որ կարեմ:

## ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՉԻՆ

- Հե՜յ, լավ մանրուք,
Ասե՜ղ, հուլու՜նք,
Մատնի՛ք, մարջա՛ն,
Ապարանջա՜ն...
Հա՜վ, ձու բերե՜ք,
Առե՛ք, տարե՛ք,
Խունջիկ-մունջիկ
Հարսն ու աղջի՛կ,
Էժան կտա՜մ,
Լավը կտա՜մ...
Էսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իբրև թե չարչի մի թափառական,
Չարչու կերպ մտած, ինչպես վիշապ օձ,
Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան:

- Հե՜յ, ո՞վ կուզի թել ու ասե՜ղ,
Դուրս եկեք, դու՜ռս, ինձ մոտ, էստե՛ղ...
- Չարչի՛ ախպեր, չարչի՛ ախպե՜ր,
Ասեղ ունի՞ս, էս կողմը բեր:
Կանչեց մի կին՝ հայ գաղթական,
Ու մոտ գնաց չարչին կնկան:
- Օ՜, ի՜նչ ասեղ, իսկն օձի քիստ...
Թոփը մի հաց...
- Վո՜ւյ, թանկ է խիստ...
- Է՜հ, մի խոսի՛ր, քո՛ւյր իմ, էդպես
Շահի կյանքը թե կսիրես:
- Ամա՜ն, հողեմ գլուխը Շահի,
Աստված Շահից հեռու պահի.
Արևդ ապրի, չարչի ախպեր,
Էդ անունը բերան մի՛ բեր:
- Վահ, էսքան էլ չար լինի մա՜ռդ:
Ի՞նչ է արել Շահը ձեզ վատ:-
Գազան թուրքի սրից փրկել,

Չոր Ջուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ առատ Փարիա,
Աչքն էլ քաղցր միշտ ձեզ վրա...
- Օ՜ֆ, հերիք է, չարչի ախպեր,
Մի՛ խոսեցնիր ինձ դրանից:
Երնեկ դրա ոտը կոտրեր՝
Չգար հաներ մեզ մեր տանից:
Եկավ վարար հեղեղի պես,
Զարկեց մեր շեն, մեր լի Ջուղան,
Ո՛չ Աստծուն նայեց, ո՛չ մեզ,
Սրբեց բերավ ողջ տեղահան:
Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
Բանալիներն Արազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Ետ նայեցինք ու կանչեցինք.
«Աստվածածի՛ն Վերին Կաթան,
Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան,
Ուր որ գնանք մեր վաթանից՝
Մեզ դարձրու գերությունից»:
Աղաչեցինք աղերսելով,
Ետ շուռ եկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հրով, սրով՝
Ծով Արազի ափը հասանք:
Արազը ծո՜վ, Արազն ելմա՜ն,
Դուրս էր եկել իր ափերից.
«Անցե՛ք», եկավ մեզ հրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
Ետևը՝ սո՜ւր, առաջը՝ ջո՜ւր,
Սո՜ւգ, վայնասո՜ւն, իրարանցո՜ւմ,
Բառաչում են մեծ ու պուճուր,
Իրար գրկված՝ գետը լցվում...
Էն սև օրը, որ մենք տեսանք,
Քո թշնամին թող չտեսնի...
Ա՜խ, ե՞րբ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անեծքը երկինք հասնի...

Ու գալիս են չարչու գլխին
Կիտվում պանդուխտ, գերի հայեր.
«Անե՜ծք Շահին, իրեն գահին»,-
Անիծում են երկինքն ի վեր:
Շուռ են գալիս իրենց բնում
Չարչու աչքերն սպառնալի,
Ձեռն ու ոտը դող են լինում,
Ու սևակնած հարց է տալի.
- Շահի առջև հապա էնօր
Գոռում էիք միաբերան,
Թե ապրում եք դուք բախտավոր
Ու օրհնում եք թախտն ու իրա՞ն...
- Սուտ էր, ախպե՛ր: Դու մեզնից մեկն՝
Ի՞նչ թաքցնենք մենք քեզանից,
Բայց մեր սիրտը ո՞նց չծածկենք
Էն մարդակեր չար գազանից:
Սուտ էր: Ու միշտ քանի որ կա
Շահ ու գերի, ստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր...
Մոնչաց չարչին, աբեն շպրտեց,
Դուրս ելավ տակից Շահ-Աբասն ահեղ,
Նաջաղը ցոլաց, իջավ շեշտակի,
Գերի ծերունին փռվեց տեղնուտեղ:
Փռվեց: Ու միշտ քանի որ կա
Շահ ու գերի, ստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր:

## *ՔԱՌՅԱԿՆԵՐ*

Ա՛նց կացա՜ն...
Օրերս թռան, ա՛նց կացա՜ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտս կերա՜ն, ա՛նց կացա՜ն:

* * *

Վերջացա՜վ...
Կյանքս մաշվեց, վերջացա՜վ.
Ինչ հույս արի՝ փուչ էլավ,
Ինչ խնդություն՝ վերջը ցա՜վ:

* * *

Ո՞ւր կորա՜ն...
Մոտիկներս ո՞ւր կորա՜ն,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չտվին, լո՜ւռ կորան:

* * *

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարավոր.
Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

* * *

Քանի՜ մահ կա իմ սրտում,
Թափուր գահ կա իմ սրտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ահ կա իմ սրտում:

* * *

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Սկսվում է ամեն օր:

* * *

Ջուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:

* * *

Ո՞վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի՛ օրվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն էլ երբ չկա՝
Կրա՞կ ընկանք, զու՞ր ընկանք:

* * *

Երազումս մի մաքի
Մոտս եկավ հարցմունքի.
- Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

* * *

Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,-
Վատը՝ լավ եմ տեսել ես:

* * *

Քանի՞ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տվել,
Լույս տալով եմ սպառվել:

* * *

Հոգիս տանը հաստատվել -
Տիեզերքն է ողջ պատել.
Տիեզերքի տերն եմ ես,
Ո՞վ է արդյոք նկատել:

* * *

Ո՞նց է ժպտում իմ հոգին
Չարին, բարուն,- ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:

* * *

Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

* * *

Մի հավք զարկի ես մի օր.
Թռա՞վ, գնաց վիրավոր:
Թռչում է միշտ իմ մտքում
Թևը արնոտ ու մոլոր:

* * *

Հե՞յ ագահ մարդ, հե՞յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ
Քանի՞ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ի՞նչ տանես դու քեզ հետ,
Խաղա՛ղ անցիր, ուրա՛խ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

* * *

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կրկին.
Էյ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:

* * *

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ,
Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վռազ եղավ, անցկացավ.
Վռազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին,
Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անցկացավ:

* * *

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ-իմ կյանքի հետ լինեի.
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկնքի հետ լինեի.
Բայց ո՞վ կտա էն վայելքը՝ ինքս ինձ էլ չզգայի,
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

* * *

Կյանքըս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի:
Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին...
Ի՜նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին...

* * *

Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրտում,
Էնքան անթիվ կորած լավերն իմ սրտում...
Չեմ էլ հիշում չար ու խավար էս ժամին՝
Ե՛րբ են փայլել ուրախ օրերն իմ սրտում:

* * *

- Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բե՛ր:
Էս էլ կերթա՝ հանց երազում, թասդ բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն,
Մեկն ապրում է, մյուսն սպասում. թասդ բե՛ր:

* * *

Հե՜յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր գընացին, ճամփանե՛ր:

## *ԳԻՔՈՐԸ*
*(հատված)*

Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել:

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

- Չեմ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարհքը մի՛ գցիլ, չեմ ուզում,- լալիս էր կինը:

Բայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ առավոտ էր, մի տխուր առավոտ: Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին:

Քույրը՝ Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն էր տալի. «Գիքո՜ լ, էդ ո՞ւլ ես գնում, հե՜ Գիքոլ»:

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր՝ դեռ գյուղացի ծերին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում: Մին էլ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետև:

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում:

- Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,- որդուն կանչելով գնում էր Համբոն՝ շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թութուն:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը հեռո՜ւ մշուշում:

-Ա՛յ, ապի, մեր տունն էնա ա հա՛,-ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան:

Առաջին իրիկունը ղոնախ ընկան մի գյուղում: Տանտերը Համբոյի հին ծանոթն էր:

Դեղին սամովարը թշշում էր տախտի ծերին: Մի ջահել աղջիկ շրջողշրջխացնելով բաժակները լվանում ու թեյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին: Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանիի համար մի էն տեսակ շոր դարկի:

## *ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ*

* * *

Գիշերն եկավ, զով-հովն ընկավ,
Աստղունք լուսնին ձայն տվին.
Լուսնյակն ելավ, մով-ծովն ընկավ,
Հավքերն ինձի ձայն տվին:

Ես վեր ելա ոգի առած՝
Զարկի սրտիս լարերին.
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց-
Եվ լարերը խզվեցին...

- Միայն սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրո երգը շողաց
Կյանքիս ամեն ծալքերում...

* * *

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամրջին,
Հոդ մազերը՝ գետ գիշերվան,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը՝ սև - արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի:

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.-
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի...

* * *

Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով,
Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ,
Կընկնեք մուրալու հափրած որկորով՝
Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:

Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ զեղմունք - միտք ու երազանք,
Նյութի տաճարում արբած պարեցիք՝
Մոռացած անմահ, անհունի տենչանք:

Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝
Ձեր նյութի հանդեպ կգա ոգու սով.
Եվ մուրացկի պես փշրանքի համար
Ծարավ ու նոթի կանցնեք ծովեծով...

*ՄՈՐ ՍԻՐՏԸ*
*(հայկական ավանդավեպ)*

Կա հինավուրց մի զրույց,
Թե մի տղա
Միամորիկ
Սիրում էր մի աղջկա:

Աղջիկն ասավ. «Ինձ բնավ
Դու չես սիրում,
Թե չէ, գնա՛
Գնա՛ մորդ սիրտը բեր»:

Տղան մոլոր, գլխիկոր
Քայլ առավ,
Լացեց, լացեց
Աղջկա մոտ ետ դառավ:

Երբ նա տեսավ, զայրացավ,
-Է՛լ չերևաս
Շեմքիս,- ասավ,
Մինչև սիրտը չբերես:
Տղան գնաց և որսաց
Սարի այծյամ,
Սիրտը հանեց,
Բերեց տվեց աղջկան:

Երբ նա տեսավ, զայրացավ.
- Կորի՛ր աչքես,
Թե հարազատ
Մորդ սիրտը չբերես:

Տղան գնաց մորը սպանեց,
Երբ վազ կտար
Սիրտը ձեռքին,
Ոտքը սահեց, ընկավ վար:

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
- Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չցավա՞ց...

## *ՄԱՅՐԻԿԻՍ*

Հայրենիքես հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ազիզ մորես բաժանվել եմ,
Տխուր-տրտում, քուն չունիմ:

Սարեն կուգաք, նիշո՛ւն հավքեր,
Ա՜խ, իմ մորս տեսել չե՞ք,
Ծովեն կուգաք, մարմանդ հովե՜ր,
Ախր բարև բերել չե՞ք:

Հավք ու հովեր եկան կշտիս,
Անձեն դիպան ու անցան.
Պապակ-սրտիս, փափագ-սրրտիս
Անխոս դիպան ու անցա՜ն:

Ա՜խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՜կ ջան.
Երնե՜կ, երնե՜կ, երազ լինիմ,
Թռնիմ մոտդ, մայրի՜կ ջան:

Երբ քունդ գա, լուռ գիշերով
Հոգիդ գրկեմ, համբույր տամ.
Սրտիդ կպնիմ վառ կարոտով,
Լա՛մ ու խնդա՛մ, մայրիկ ջան...

* * *

Լսում եմ դողանջը տիեզերական,
Հոգիս բացվում է անծիր թևերով.
Անծիր թևերս գրկում են համայն
Աշխարհ-աշխարհ և ծովերն-ծով:

- Բացե՛ք դարպասները ձեր պալատների,
Ոգու հարության լույսն եմ ձեզ բերում,
Ես եմ զեփյուռը անապատների,
Եվ վառ ճաճանչը մռայլ ամպերում:

Եվ մարգարեի հուրն է իմ կրծքում,
Սուրը՝ իմ ձեռքում, բարբառս՝ ազատ.
Եվ ինձ հավիտյան անմահ եմ զգում,
Եվ երկրի վերա քայլերս՝ հաստատ...

* * *

Ո՞ւմ հետ եմ անհույս
Լալիս, հառաչում,
Ո՞ւմ ճակտի վրա
Իմ ձեռքն է հանգչում:

Աշխարհն հավիտյան
Մահվան բերանում,
Եվ մահը նրան
Ծամում է, ծամում:

Լալիս է աշխարհն
Իմ սիրող գրկում.
Համայն աշխարհի
Բախտն եմ ես սգում:

## ԿՏԱԿ

Սիրո՛ւն մանկիկ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ.
Ճշմարիտն ես փորձով գիտեմ ու խոսքերս մի՛ մոռնար:

Կյանքն է ամպի փախչող ստվեր, վայրկյան է միշտ իրական.
Բախտի կռանը կամքն է թեև, բայց դիպվածն է տիրական:

Զգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան.
Բայց դու խելքդ վրադ պահի՛ր, ինչպես պողպատ կուռ վահան:

Մի՛ հավատար ստվերներին, հենվի՛ր միայն քեզ վրա,
Ատելու չափ սիրի՛ր մարդկանց,բայց լավություն միշտ արա:

Եվ լայն օրում թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ ճանաչիր.
Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:

Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթե տանուլ տաս,
Զվարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրա կխնդաս:

Անվախ ու վեհ դեկդ վարե անծանոթին դեմ-դեմի.
Անզոջալի առա՛ջ գնա, ինչ որ լինի, թո՛ղ լինի:

Լսի՛ր, տղա՛ս, ինձ կթաղես անհայտ մի տեղ, աննշան,
Որ չիմանան, մարդիկ չգան, շիրմիս քարը գողանան:

* * *

Սալոն ձորերում, կռվի ձորերում
Հայդուկն է ընկել խոր վերքը սրտին,-
Վերքը վարդի պես բացված, կարմրուն,
Ու ձեռքն է գցել կոտրած հրացանին:

Արնոտ դաշտերում ծղրիդն է ծղրում,
Հայդուկն է ընկել մահվան խոր քնով.
Հայդուկը հոգում երազ է տեսնում,-
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ...

Տեսնում է... արտում հովն է շնչշնկում,
Փայլուն գերանդին, զնգո՛ւմ է անուշ,
Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք
Հայդուկի վրա երգելով անո՞ւշ...

Սալնո ձորերում ամպեր են անցնում,
Հայդուկի վրա արծիվն է գալիս.
Ա՜խ, սև աչերը արծիվն է հանում.
Հայդուկի վրա ամպերն են լալիս...

## *ՀԱՅՐԵՆԻՔԻՍ*

Ցորենի ծփուն արտերի եզրին
Կանգնել, խորհում եմ սրտիս մեջ լռին.-

Մի՞թե դու չէիր, հայրենի՛ք իմ հեզ,
Որ տայգաներից, մթին յուրտերից,
Հորդացող-եկող ելուզակների
Բյուր նիզակ ու տեգ
Սրտիդ մեջ մխված՝ ընկել էիր խեղճ
Քառուղու վրա բախվող ազգերի,
Դաժան դարերի մղձավանջի մեջ,
Սմբակների տակ խոլ նժույգների.
Եվ սրում էին ճիչով խնդագին
Անգղներն իրենց կտուցները վես
Քո արևակեզ ժայռերի վրա՝
Հոշոտելու քեզ...
Եվ սակայն հիմա
Դու նորից ծաղկել, ցնծում ես նորից,
Ելնում է ծուխը խրճիթներից հին,

Ուր մայրըս անուշ օրորել է ինձ,
Իմաստավորել մանուկ իմ հոգին
Քո հզոր լեզվով, երկի՛ր կաթոգին:
Այնքա՛ն ժամանակ, որ պիտի հերկե
Սևահոդ հին քո կտրիճ որդին
Եվ գուսանդ վառ՝ սերդ պիտ երգե,
Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչե՛ս, հնչես հաղթական,
Իմ հի՛ն հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբո՛ւխ:

## *ՌԱՎԵՆՆԱՅՈՒՄ*

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել աղամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...

* * *

Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել
Զինվոր հասարակ.
Հայության բոլոր ոսոխների դեմ կռվեի անդուլ
Անիի հզոր պարիսպների տակ:
Եվ հուր վրեժով

Զարկեի դարեր, զարկեի դարեր
Եվ բյուր վերքերով
Ընկնեի վսեմ պարիսպների տակ.
Սիրտս խաղաղվեր, հանգչեի հավերժ
Անիի անմահ պարիսպների տակ...

## *ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ*

*3-րդ սուրահ*
*(հատված)*

Եվ քարավանը Աբու-Լալայի
աղբյուրի նման մեղմ կարկաչելով,
Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ,
հեզ լուսնկայի շողերի միջով:
Եվ լուսինն, ինչպես ջեննեթի մատաղ
փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ,
Մերթ ամաչելով պահվում էր ամպում
և մերթ թրթռուն փայլում էր պայծառ:
Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան՝
աղամանդներով, շքեղ գինդերով,
Ծիածանաթև հավքերը իրար
գուրգուրում էին քնքուշ մրմունջով:
Մեխակի բույրով հովն էր շշնջում
հեքիաթներն հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ
օրորվում էին ճամփեքի վրա:
Հովի զրույցին ունկն դնելով
Աբու Մահարին խոսում էր անձայն.-
- Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝
անսկիզբ, անվերջ, հրաշք դյութական:
Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ,
հյուսել աստղերով, բյուր հրաշքներով,
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝
անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով:
Ազգեր են եկել, ազգեր գնացել

և չեն ըմբռնել իմաստը նրա.
Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ
և թոթովում են հնչյուններն անմահ:
Ոչ ոք չի լսել սկիզբը նրա,
և չի լսելու վախճանը նրա,
Ամեն հնչյունը դարեր է ապրում,
ամեն հնչյունին վերջ, սկիզբ չկա:
Բայց ամեն մի նոր ծնվածի համար
նորից է պատմվում հեքիաթն այս շքեղ,
Նորից սկսվում և վերջանում է
ամեն մի մարդու կյանքի հետ մեկտեղ:
Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ,
ազգեր, սերունդներ՝ անցնող քարավան,
Որ հեքիաթի մեջ, վառ երազի հետ,
չվում է անտես դեպի գերեզման:
Կո՛ւյր ու գուլ մարդիկ, առանց երազի,
առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում
և դարձնում աշխարհն ահավոր ջեհենեմ:

*ԼԻԼԻԹ*
*(հատված)*

... Երբ փոքորիկ էր լինում և մրրիկ, նա տեսնում էր Լիլիթին իր մոտով շեշտակի անցնելիս, և երբ կայծակն էր ճեղքում երկինքը, Լիլիթի հրեղեն սերն էր այդ, որ ճեղքում էր Ադամի հոգին:
Երբ գոցում էր բիբերը, իր սրտի մեջ տեսնում էր Լիլիթի անհուն գեղեցիկ պատկերը, երբ նայում էր աստղերին, աստղերի մեջ տեսնում էր Լիլիթի աչքերը և անհուն արևի մեջ՝ ամբողջ Լիլիթին...
Եվ երբ ճիգ էր անում Լիլիթին մոռանալու, գրկում էր հավատարիմ Եվային, կրծքին սեղմում և համբուրում. նա այդ ժամանակ Լիլիթին էր սեղմած տեսնում իր կրծքին, Լիլիթին համբուրում, Լիլիթին զգում, միայն Լիլիթին...
Եվ ապրեց Ադամ՝ սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամ՝ հառաչելով ու երազելով միմիայն Լիլիթին:

## ՍԻԱՄԱՆԹՈ
## ԳԱՂԱՓԱՐԻՆ

Արևին հուրն քեզ ընծա,
Ընծա բերին արյունն իրենց գարունին,
Ոսկորներու կուտակումներ կնդրուկի պես վառեցին,
Արցունք և ցավ, ցասում և հույս ծով առ ծով
Եկան հոսիլ ոտքերուդ տակ...
Ո՛վ գաղափար, ո՛վ դյուցազուն, ո՛վ հսկա:
Հովերուն հևքն ու մրրիկներն իբրև թև՝
Մեզ ընծայեց բնությունն ազատագուք,
Եվ ժամեժամ հաղթությունը քեզ տվավ,
Աստվածեղեն անմահություն մարմարյա...
Եվ երբ օր մը զենիթեն նժույգին վրան բարբարոս,
Ամեհորեն նպատակիդ արշավեցիր,
Մտածումիդ մեծությանն ի խնդիր՝
Մարտիրոսված մեռելներն հանկարծ նորեն բարձրացան
Ու իրենց ոսկի ոսկորներն ուխտվածի,
Անգամ մը ևս աչքիդ առջև փշրել են,
Բոլորը մեկ, ես լսեցի, ըսին քեզի...
- Հառաջացի՛ր, հառաջացի՛ր, գաղափա՛ր,
Թեև ճիշտ է, դու հաղթեցիր,
Բայց պարտությունն իբր օրենք
Տիեզերքի ժանտ շրջանին,
Հայուն համար, չարիքին հետ դեռ կսպասեն:
Եվ կաղերսենք մենք քեզի, որ՝
Կամքերում կարմիր մուրճը ձեռքիդ մեջ,
Կայծակներու անտառներեն անդադար,
Արարատին կատարներն իբրև սալ,
Դուն՝ ռազմեն հասնող ռազմիկներուդ համար,
Նորեն համառորեն, ոսկիաշեն սուսերներդ դարբնես...
Եվ քեզ՝ վճիտ Գաղափար,
Մեռյալներեդ խոսք մը ևս...
Խոսքը մը անոնցմե, որ դրոշիդ փառքին համար
Իրենց հոգու արյունը քեզ նվիրեցին.

Մի՛ մոռնար դուն, շեղբերուն վրա սուսերուդ
Կարմիր կամքիդ վճիռն այսպես կայծագրել...
«Արդարության աղամանդի օրերուն,
Ո՞վ անքննելի և եղերական պողպատներ,
Ցիքենիի կանաչագեղ ոստեր եղեք...
Եվ շանթերու, շանթերու, շանթերու պես՝
Պետք է շողաք, պետք է շողաք այն ատեն
Երբ հայ արյունը անմեղորեն օր մը հոսի...»:

## ԱՓ ՄԸ ՄՈԽԻՐ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

### Ա

Ավա՜ղ, ապարանքի մը պես մեծ էիր և շքեղ,
Ու ես՝ երդիքներուդ սպիտակ կատարեն,
Աստղածորան գիշերներու լույսին հետ,
Վերեն ահեղավազ Եփրատին կունկնդրեի...

### Բ

Արցունքո՜վ, արցունքո՜վ լսեցի, որ ավերակ առ ավերակ
Քու լայնանիստ պատերդ իրարու վրա կործանեցին,
Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արյունի...
Ջքեզ եզերող պարտեզիդ ծաղկներուն վրա:

### Գ

Ու մոխրացա՜վ այն սենյակը կապույտ,
Որուն որմերուն ետև և գորգերուն վրա
Իմ երջանիկ մանկությունս կ հրճվեր,
Եվ կյանքս կ 'աճեր և հոգիս իր թևերը կ 'առներ...

Դ

Փշրեցա՞վ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր,
Որուն եթերային խորութեանն մեջ,
Երազներս, հույսերս, սերերս և կամքս կարմիր,
Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին...

Ե

Ու բակին մեջ երգող աղբյուրը մեռա՞վ,
Ու կոտրեցա՞ն պարտեզիս ուռին և թթենին,
Եվ այն առվակը, որ ծառերուն մեջեն կհոսեր,
Ցամքեցա՞վ, ըսե՛, ո՞ւր է, ցամքեցա՞վ, ցամքեցա՞վ...

Զ

Օ՜, այն վանդակին կերազեմ հաճախ,
Որուն մեջ գորշագույն կաքավս, առավոտուն,
Արևածագին հետ և վարդի թուփերուն դիմաց
Զարթնումի ժամուս՝ հստակորեն կ 'կարգներ...:

Է

Հայրենի՜ տուն, հավատա՛, որ մահես հետո,
Քու ավերակներուդ սևին վրա իմ հոգիս պիտի գա,
Որպես տատրակ մը տարագիր,
Իր դժբախտի երգն և արցունքն լալու...

Ը

Բայց ո՜վ պիտի բերե, ո՜վ պիտի բերե, ըսե՛,
Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,
Մահվանս օրը, իմ տրտում դագաղիս մեջ,
Հայրենիքս երգողի իմ աճյունին խառնելու...

Թ

Ափ մը մոխի՞ր աճյունիս հետ, Հայրենի տուն,
Ափ մը մոխի՞ր քու մոխիրեդ, ո՞վ պիտի բերե
Քու հիշատակե՛դ, քու ցավե՛դ, քու անցյալե՛դ,
Ափ մը մոխիր իմ սրտիս վրան ցանելու...

## ԱՐՑՈՒՆՔՆԵՐՍ

Ա

Եվ մաքրաթև երազիս հետ միանակ էի, հովիտներուն մեջ հայրենի,
Քայլերս էին թեթև, ինչպես քայլերը խարտիշագեղ եղնիկին,
Եվ զվարթությամբ կվազեի, կապույտեն և օրերեն բոլորովին գինով,
Աչքերս ոսկիով և հույսով՝ և հոգիս աստվածներով լեցուն...

Բ

Եվ ահա բարեբեր Ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ,
Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և դեպի զիս կ՚ընծայեր,
Եվ ես լռությամբ՝ գեղուղեշ ուռիին ներդաշնակ հասակեն,
Երգերս ստեղծելու համար խորհրդավոր սրինգիս ճյուղը կկտրեի...

Գ

Կերգեի... Ադամանդյա առվակն և թռչուններն հայրենագեղ.
Աստվածային աղբյուրներուն հստակահոս մեղեդիներն անդադրում,
Եվ առավոտյան զեփյուռը, քրոջական գորովներու այնչափ նման,
Այս բոլորն իմ երջանիկ երգերուս թոթովումին կձայնակցեին...

Դ

Այս գիշեր երազիս մեջ ձեռքս առի զքեզ, ո՞վ քաղցրախոս Սրինգ
Շրթունքներս զքեզ ճանչցան՝ ինչպես համբույր մը հին օրերու,
Բայց շունչս՝ հիշատակներու զարթնումեն, հանկարծորեն մեռավ,
Եվ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ, արցունքներս էին, որ
ինկան վար...:

## ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՌՆԻԼ

### Ա

Սպասումիս և Հույսիս քաղցրությանը հետ միևնակ էի այդ
իրիկուն,
Եվ Փրկության ու Տառապանքի նժարովը՝ Հայրենիքին բախտը
կկշռեի...
Երբ հեռակա տանս դուռը, գիշերվան սարսափին մեջեն
ուժգնապես բախեցին.
Եվ ժպտուն՝ ընկեր մը ներս մտավ, շքեղորեն գեղեցիկ,
եղբայրադեմ և ահավոր...

### Բ

Երիտասարդ էր: Աչվներուն կայծը երկնքի աստղերեն էր, որ
կծորեր,
Եվ հասակին ձևերը մարմարներու զորություններեն էր
կերտված...
Մտածումը մարդկային արդարության էջերեն հստակորեն
ջահավառյալ...
Ճակտին վրա իրենց ցավի և բարության ծաղկներն ունեին:

### Գ

Մտերմաբար քով քովի Հայրենիքին տառապանքեն կխոսեինք,
Իր ծանրախոհ գլուխը սգավոր կիսաստվածի մը արյունոտ
սրտին կնմաներ...
Նայվածքները նայվածքներուս մեջ նույն ճակատագրին
խորհրդանիշը փնտրեցին...
Եվ մեր տրտում ժպիտները հոգիե հոգի մեղմորեն
ճառագայթվեցան:

### Դ

Ժամերով լռին էր: Լռին էլ էի: Հիշատակի հեծեծանքներ մեր
աչքերը թրջեցին

Եվ լամպերիս կապույտ լույսը սեղանիս վրա, այլևս արյուններու նման վար կթորար...
Տժգունեցա ես՝ ինչպես երազ մը, որ առավոտին երևում են կանհետի...
Բայց ինք՝ հերոսատիպ և հպարտ, ձեռքս ձեռքին մեջ՝ ոտքի՝ ինձի ըսավ...

Ե

- «Այս իրիկուն հավատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր,
Երիվարս թամբած եմ արդեն,, և կյանքի ու կռվի տենդեն դուռիդ առջևը կվրնջե...
Եվ, տե՛ս, հասակես վար անբիծ սուրս մերկ է, մերկությամբը գերմարդկային վճիռներում:
Ճակատդ շրթունքիս մոտեցո՛ւր... հավատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր:

Զ

Եվ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծե,
Ապագա սերունդներուն և մեր անցյալին տխրությանն ի նվեր.
Ես որք մըն եմ և ըմբոստ մը, մնաս բարյա՜վ, կորուսյալներս փնտրելո՜ւ կերթամ...
Քու երգերեդ երգ մը տո՛ւր ինձ, երգ մը, ես երգելո՜վ կուզեմ մեռնիլ»:

## ՀԱՐՍԻՆ ԵՐԱԶ

- Ու տարիներով մինավորիկ՝ պատուհանիս առջև նստած՝
Ես քու ճամփուդ կնայիմ, իմ սրտահատոր հեռավորս,
Ու այս գրովս կուզեմ քեզի իմ մարմինիս ու մտքերուս
Անտեր սարսուռն անգամ մըն ալ երգելու...
Ա՜հ, մեկնած օրվանդ արեգակը չե՞ս հիշեր,
Արցունքիս չափ առատ էր և համբույրիս չափ հրաշու՜նչ,
Խոստումներուդ չափ բարի՜ էր և քու դարդիդ չափ արագ,

Մեկնած օրվանդ արեգակը և աղոթքներս չե՞ս հիշեր,
Երբ ջրի կուժն ես քու ձիուդ շուքին վրան սրսկեցի.
Որպեսզի քու առջևեդ ծովերը ե՜տ դառնային,
Եվ ցամաքը ոտքերուդ տակը ծաղկոտեր...:
Ա՜հ, մեկնած օրվանդ արեգակը սև՜ գիշերի փոխվեցավ...
Ու սպասումիս արցունքները տարիներու տարափին տակ,
Աչվներես, այտիս վրան, աստղերու պես հոսելով
Անոնց վարդերն ահավասիկ որ այրեցի՜ն...:
Ա՜լ կբավե, քու ծարավեդ ես իմ ծամերս փետտե՛լ կուզեմ,
Քու բաժակիդ գինիեն դեռ գինի՜ով...
Ու բացակա պերճ հասակեդ սգավոր:
Հիշատակիդ ետևեն հովերուն պես կհառաչեմ,
Եվ ժամին դուռը ծնկներս խոցոտել են,
Արևմուտքին դառնալով՝ կպաղատիմ...

- Ծովերն օր մը ծայրե ի ծայր թո՜ղ ցամաքին,
Ու ակնթարթ մը երկու աշխարհը թո՜ղ իրարու մոտենան...
Այնուհետև արքայության ու արևի ա՛լ պետք չունիմ.-
Վերադարձի՛ր. մեր տնակին սեմին վրա ես քու ճամփուդ
կսպասեմ,
Ձեռքս պարապ քու ձեռքերեդ, սևերովս քե՛զ կերազեմ...
Վերադարձի՛ր, մեր պարտեզին պտուղներուն պես անուշ,
Սրտիս սերը քեզի համար իր համբույրը կպահե:
Ա՜հ, իմ կաթնաթույր կողերս դեռ մայրություն չի ճանչցան...
Եվ հարսանեկան իմ ոսկեթել քողերովս
Դեռ չի կրցա խանձարուր մը զարդարել...
Ու օրորանի մը առջև նստած դեռ չերգեցի՜, դեռ չերգեցի՜
Հայ մայրերուն մաքուր օրորն երկնային...
Վերադարձի՛ր, ա՛լ կարոտս կատար չունի,
Երբ սև գիշերն այսպե՜ս կուգա իր պատանքները քակել...
Երբ բուերը ակին մեջը իրարու դեմ կվայեն,
Երբ հեծեծանքս կհատնի, և արցունքներս կարյունին...
Լքված հարսի երազներուս մեջ մենավոր,
Ես իմ ձեռքովս, դևի մը պես, ալ կսկսիմ,
Գլխուս վրան իմ մոտավոր գերեզմանիս հողը մաղե՜լ...»:

## ԳՅՈՒՏԻՆ ՓԱՌՔԸ

*(հատված «Սուրբ Մեսրոպ» պոեմից)*

Մեսրո՛պ, հայ դարերուն դիմաց կեցող՝
Դուն աղամանդյա ապառաժ,
Դո՛ւն մանուկներու մերկ ուղեղեն
Մինչև հանճարը ցոլքեր ցանող.
Գիտակցությանց անգյո՛ւտ փարոս...
Դուն, որուն կոփյունը կռանին,
Ժամերուն պես, բոպեին հետ անդադար,
Իմացական թանգարանի՞ն արձանները մեզ կձուլե...
Դուն աննինջ հսկող, դուն Տիտանյան տեսնող,
Դուն օրորոցեն մինչ գերեզման,
Մեր մեն մի խոսքին մեն մի շունչին
Գեղեցկաձայն բացատրիչ...
Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տեղողության,
Դուն գոյության արգավանդ հայր,
Դուն լույսի անիվ, դուն հավատքի հրավեր,
Դուն հայրենի հողի վրա մրրկին պես բարձրացող
Անտա՞ռ անհուն, անտա՞ռ սրտի,
Որուն մեն մի հաստատաբուն ծառերն հսկա,
Մեկ-մեկ քնար, մեկ-մեկ փանդիռ են մեր շունչին...
Մեկ-մեկ շեփոր մեր հազագին ռազմական,
Մեկ-մեկ պատնեշ ճակատագրի՞ պատուհասին...
Դուն հունձք հարուստ, և դուն հնձան հրաշեկ,
Դուն արբեցությանց և գինիի ավազան,
Որուն մեջ ե՛ս ալ ոսկի սափորս եմ մխրճեր...
Արևներու ծարավես խենթ...

Դուն մեծաթափանց նայվածքներով առաքյալ,
Դուն էիր, որ զքեզ ցեղդ այսօրվան,
Հելլեններեն և հաճարեղ և հրավառ
Ու աշխարհակալ մեծ Հռովմի որդիներեն
Ու հրապաշտ պարսիկներեն դրացի

Մայր-բարբառիդ հիմնաքարովն հակինք
Հայկազունյաց մեր շառավիղն ազատեցիր...:
Դուն երկրորդ Աստված,
Եվ մտածման դուն առաջի՛ն արարիչ...:
Դուն բեղո՛ւն բարիք, սրտի՜ աղբյուր:
Գույներու գանձ, գթությա՛նց գահ,
Դուն թոչող դարերն մեկզմեկու կամարող
Կամուրջ անգիծ, ուրկից ցեղդ միլիոններով՝
Կամ պերճորեն կամ վատաբար,
Կյանքեն ի մահ, կուգա կը անցնի...,
Դուն Հելեններեն հռչակված
Մեծատիտղոս Ակումիդ,
Ո՜վ մենակյաց, ո՜վ Մագիստրոս,
Ահավասիկ, երկու Հայքերն
«Օվսաննա՜ քեզ» կգոռան...
Եվ Օվսաննա Վաղարշապատի Հայրապետին՝
Սահակ Պարթև զուգակշիռ արքանյակիդ,
Եվ Վռամշապուհ Արքային,
Որովհետև քու մեծ գյուտիդ զորավիգ
Մեկն իր Խաչին, մյուսն իր Սուրին համազոր
Քու քայլերուդ հետ քալելով
Արարատյան արշալույսին.
Դպրության դուռը մեզ բացին...:

Եվ այսօր քու սրբությամբ սնած՝
Ես ապաժման քնարահար,
Եվ անվճար ու անարժան երախտագետ,
Ես՝ քու ցեղիդ հոգին հայելին քեզ կբերեմ...
Աչքերուս մեջ անոր աչքեն հուր առի...
Ու իմ խոսքերս անոր սրտեն եմ քաղեր,
Եվ ի՛նչ որ կարդաս ճակտիս վրան,
Ի՛նչ որ կարդաս ժպիտիս մեջ,
Անոր Հույսո՜վ եմ ես գրած...
Եվ թույլ տուր այսօր, ո՜վ Մեսրո՛պ,
Որ Հայոց հողեն մինչև աստղերը հասնող

Քու ոսկիե սանդուխեդ վե՛ր բարձրանամ,
Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան
Ու պսակե ի պսակ և լույսե ի լույս,
Իբր զավակ մը մտածումիդ,
Ես ի քե՛զ գամ իմ երգս երգելու...

## *ՄԱՀՎԱՆ ՏԵՍԼԻՔ*
*(քաղվածք)*

Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դու՜րս
Եվ բարբարոսներն արյուններով կդառնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայեն,
Ագռավներուն բազմություններ կանցնին վերերեն,
Արյունոտ բերաններով ու գինովի քրքիջներով...
Ցամաքահով մը կիսամեռները զայրույթով կխեղդե,
Ու պառավներու անձայն կարավաններ
Շտապով կփախչին լայն ճամփաներեն...
Գիշերին մեջեն արյուններուն ալիքը կբարձրանա՝
Ծառերուն հետ շատրվաններ ուրվագծելով,
Ու ամեն կողմե սոսկումով կսուրան հալածված՝
Նախիրները հրդեհվող ցորյաններուն մեջեն...
Փողոցներուն մեջ մորթված սերունդներ կտեսնեմ,
Եվ ամբոխներ անպատմելի սրածութենե դարձող,
Արևադարձային տաքություն մը կբարձրանա
Հրդեհի տված ազնվական քաղաքներեն...

Մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք
Փոթորիկին գոչը ծովուն ալիքներուն մեջ,
Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք
Մահաձայն ոռնումը զարհուրյալ շուներուն,
Հովիտներեն ու գերեզմաններեն ինձի հասնող,
Օ՜, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ,
Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...:

## ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

### ԵՍ ՍԻՐԵՑԻ

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ, թե
Ձինքը որքա՜ն սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտե:

Ամենեն մեծ հրճվանքիս,
Ամենեն սուր վշտերուս
Ներշնչողները, ավա՜ղ,
Ձիս չեն ճանչնար այս պահուս:

Սերս կարծես այն գետն էր,
Որ իր հոսանքը անբավ
Առավ լեռան ձյուներեն,
Ու լեռը զայն չտեսավ:

Սերս այն դուռն էր կարծես,
Ուրկե ոչ ոք մտավ ներս.
Ծաղիկներով ծածկված՝
Գաղտնի պարտեզ մըն էր սերս:

Ու եթե սերս ոմանք
Երկինքին վրա՝ անսահմա՜ն
Տեսան ծուխի մի նման,
Կրակն անոր չտեսան...

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ, թե
Ձինքը որքա՜ն սիրեցի.
Ո՞վ կարդալ սիրտը գիտե...

## ՔՈՒ ՀԻՇԱՏԱԿԴ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Քու հիշատակդ, այս գիշեր, զիս լալու չափ կը հուզե.
Կարծես մեկնած էր սրտես և գաղտնաբար այս գիշեր
Ետ կը դառնա, իր հին տեղն ու հին գգվանքը կ'ուզե,
Կը սեղմվի գրկիս մեջ, կը բարձրանա կուրծքս ի վեր...

Քու պատկերդ աչքիս մեջ և քու ձայնդ՝ ականջիս՝
Կը թրթռան այս գիշեր, երակներուս մեջ կարծես
Քաղցրահոտ շունչդ է լցված, որ կ'զգլխե, կօրրե զիս,
Մինչ երեսես ալ կ'անցնին կարծես մատներդ անտես:

Ետ կը դառնան մի առ մի մեր ժամերեն անկորուստ,
Կարավանին հետ աստեղից անոնք կ'ուգա՜ն վերստին,
Հոգիս փարա՜խն բացվող ընդդեմ իր քա՛ղցր հոտին:

Հիշատակովդ, այս գիշեր, կ'զգամ անչա՛փ զիս հարուստ,
Այնչա՛փ բարի, երջանիկ... որ գթությամբ մը անհուն՝
Կը մտածեմ զայն բաժնել երկրի բոլոր խեղճերուն...

## Կ'ԱՆՁՐԵՎԵ, ՏՂԱՍ

Կ'անձրևե, տղա՛ս... Աշունը թաց է,
Թա՛ց աչքերուն պես խեղճ խաբված սիրույն...
Պատուհանն ու դուռը գնա գոցե
Եվ դեմս եկո՛ւր նստիլ վեհագույն

Լռության մը մեջ... Կ'անձրևե, տղա՛ս...
Կ'անձրևե՞ երբեմն հոգիիդ մեջ ալ,
Կը մսի՞ սիրտդ և կդողդողա՞ս՝
Խորհելով պայծառ արևին անցյալ,
Դռան մը ներքև գո՜ց ճակատագրին...
Բայց կուլաս, տղա՛ս... Մութին մեջ հանկարծ
Ծանր արցունքներ աչքեդ կը գլորին...:

Լա՛ց անմեղության արցունքը անդարձ,
Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգետ տղա՛ս,
Խե՞ղճ որսը կյանքին, ա՜հ, լա՛ց, որ մեծնաս...:

## ՏԱՂ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ

Քեզ, Հա՛յ լեզու, կը սիրեմ մրգաստանի մը նման...
Մեր Անցյալին թանձրախիտ ստվերներուն մեջ, կարծես,
Մեյ-մեկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինձի կ'երևան,
Որոնց մեջեն կը քալեմ ու կը քաղե՞մ զանոնք ես...

Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզո՛ւ...
Մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ՝
Դալարագեղ դուն պուրակ, որ դիմացար դարերու,
Եվ կը մնաս միշտ առույգ, հին ավիշովդ կենսահորդ...

Ծառերուդ մեջ հովնատուն կ'երթամ խինդով մ'անսահման,
Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ,
Զարմանալով, թե ինչպե՛ս դուն մնացիր՝ երբ սաստիկ
Քամին քու շո՛ւրջդ փչեց և տապալեց ամեն բան...
Մեյ-մեկ պտուղ գույնզգույն՝ ամբողջ բառե՛րդ ահա՛,
Հյութե՞ղ բառերդ՝ զոր որքա՞ն հասունացուցին արևներ,
Բառե՛րդ, որոնք այս պահուս շրթա՛նցս վրա եմ բռներ,
Բառերդ, որ քիմքիս կ'օծեն և կ'սփոփե՞ն սիրտս հիմա...

## ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ

### ԳՆԱ

*Հարություն զավակիս*

Դյութված հոգիս բախտեն դժխեմ,
Անապատին մեջ հրայրյաց,
Ա՜խ, ալ չպի՛տի վերատեսնեմ
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց:

Եղնիկի պես օր մը երբեք
Հին երկնային բարձունքն ի վեր
Չիպ՝տի՛ սուրամ ու սրտաբեկ
Պիտի հանի՛մ հոս կարեվեր...

Ես կը մխամ մինչ կարոտով,
Հոգիիս բոցը չի մարած,
Ու կ՝որոնեմ սրտախռով
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց:

Ամպեր կ՝անցնին ծովեն անդին,
Ու փոթորիկը խելահեղ
Կը սլանա որոտագին,
Անդունդներու մեջեն ահեղ:
Ո՞ւր կը դիմեն ամպ ու հովիկ,
Երգն ամայքին, հնքն օվկիանին,
Ո՞ւր կյանքն ու իր տրտում ալիք,
Հին երազներս ո՞ւր գնացին:

Երգե՛, հոգիս, երգդ ո՞ւր մնաց,
Հանձնեցիր զայն ո՞ր կոհակին,
Միայն մենիկ ու տխրամած
Անբախտնե՛րը հոս երգ չունին:

Գեթ դո՛ւն գնա, տղա՛ս, դուն որ միասին
Հոս այրեցա՛ր արևներու բոցին տակ,
Որ անտրտունջ բաժանեցիր հետս կյանքին
Լեղի բաժակ:

Սուրա՛, ամպին, փոթորկին հետ հեռացիր
Ամայության կոհակներեն շատ հերուն,
Հորիզոնեն անդին անհուն ու անծիր,
Վեր Տավրոսի լեռներուն:

Գտի՛ր անբիծ ձյունն ու մշուշն հայրենյաց,
Տո՛ւր ճակատդդ ցուրտ սառուցիկ հովերուն,
Ու ջիղերով պողպատի պես ամպամած,
Ողջունե նոր մի գարուն:

Զիս մի՛ հոգար: Ես քայլերով դողդոջուն
Կրնա՛մ ելլել բաժանումի Գողգոթան,
Դուն հին, մեռած երազներո՛ւս Հարութիւն,
Փակե աչերս ու գնա՛...

*ՄՆԴՐՄՆԻԿ*

Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն,
Շիրիմն ալ ո՛չ քար ունենա, ո՛չ կոթող,
Եվ որպեսզի հերոսն հանգչի քիչ մ'ատեն,
Բարեկամներ դագաղին վրա նետեն թող
Հայաստանի ափ մը հող:

Արծվի աչքերն իր կիսաբաց մնացին,
Պանդխտության, աքսորանքի մը դաժան
Չի դիմացավ սիրտը զարնող հարվածին,
Բոլորեինք գեթ ճակտին շուրջ առնական
Շավարշանի մը շուշան...
Կայծակնաշաղ սուրն՝ իտեալ մարմնացած
Վրիժառու և մշտապես հաղթական,
Դողդոջ բազկով երկարեց Մայր հայրենյաց,
Երբ լքումի, մոռացումի, բաժանման
Մահվան ցուրտը նախազգաց:

* * *

Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն
Ուր վերջին Հայրն իր զավակին փառքը վերջին
Դրոշմեց հպարտ, հեծկլտալեն, ժպտալեն,
Եվ ուր հույսերն կը սլանան, կը թռչին
Մեր դարավոր անուրջին...

Շղթայակապ չէին հեծծեր այն ատեն
Մասիս, Տավրոս, ամպածրար (նշավոր),
Կը լսեինք մեր Տիգրիսեն, Եփրատեն
Հայ երգերու շեշտերը գոռ ու հզոր,
Արծագանք մը հին դրախտին...

Եվ հուսացինք ու կը հուսանք տակավին,
Աքսորական կտրեցինք ծովն ու օվկիան,
Ու կսպասենք արդարությանն երկնային,
Վերածաղկին պիտի ազատն Հայաստան,
Ամայացած Կիլիկիան...

* * *

Արծվի աչերն իր կիսաբաց մնացին,
Շիրիմին խորքը դեպի զենիթ կը դառնան,
Ու կը հառեն աստեղափառ մեր Հայկին,
Կը հարցուցեն, թե գիշերներ բաժանման
Պիտի տեսե՞ն հավիտյան...

Փոքորիկներն ըլլան իրեն այցելու,
Ու կայծակներ որոտան գոռ ամպերեն,
Եվ օվկիանին կոհակները մոլորուն
Ձայրապլաց զարնվելով իրարու,-
Դյուցազնին քո՞ւնն օրորեն...

Եվ դուն, Նվա՛րդ, քույր սգավոր Հայրենյաց,
Շավարշանի քուրերուդ պես փափկասուն,
Հսկե իրեն գերեզմանին մենակյաց,
Համբույրներով արտասվազօծ, դողդոջուն,
Փակե՛ աչերն կիսաբաց...

Փակե՛ աչերն կիսաբաց,
Որ չի տեսնե, թե ինչքան
Անարժան ենք իրեն ու սուրբ Հայրենյաց,
Որ դամբանին շուրջն անգամ
Անմիության իժը սուլեց ու շչաց...

* * *

Կայծակնաշող սուրն՝ իտեալ մարմնացած,
Նոր քաջերու հզոր բազկին կ'սպասե,
Առանց սուրի չէր Եհովա, կամ Աստված,
Առանց անոր ու վեհ կամքին պողպատե
Հայն անարժան է նախնյաց...

Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն,
Շիրիմն ալ ո՛չ քար ունենա, ո՛չ կոթող,
Եվ որպեսզի հերոսն հանգչի քիչ մ'ատեն,
Բարեկամներ դագաղին վրա նետեն թող
Հայաստանի ափ մը հող...

## *ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ*
### *ԱՆԴԱՍՏԱՆ*

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՞ւն թող ըլլա..
Ո՛չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակի մեջ ակոսին.
Ու երբ հնչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությո՞ւն թող ըլլա:

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությո՞ւն թող ըլլա...
Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ծուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղի՞կ թող ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատությո՞ւն թող ըլլա..
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.

Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի,
Բերկրությո՜ւն թող ըլլա:

Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերո՜ւմ թող ըլլա...
Ծաղկի՜ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսները հացը բարի,
Սիրերգությո՜ւն թող ըլլա:

## *ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ*

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ՝
Ա՛լ վերածնե փլատակներեն և փառագոչ
Քնարդ առ:

Հանո՜ւն Ույժին, հանո՜ւն Գեղին, մտիր մեհյանն
Աստվածներուն.
Ջահը ձեռքիդ՝ բագնեբագին համասփռե
Հուր և արյուն:

Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սիրտին վրա
Լեցո՜ւր, լեցո՜ւր:
Չի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,
Մե՛նք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՜ր Արշալույս:

## ՉՈՆ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա՜, իմ հայրենիք-
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր...
- Քեզի ընծա՜, հին հայրենիք-
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.
- Ձեզի ընծա՜, հայ պանդուխտներ-
Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծղոտ...
- Ձեզի ընծա՜, հեգ պանդուխտներ-
Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ:
Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
- Ձեզի ընծա՜, սուրի զոհեր -
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն...
- Ձեզի ընծա՜, կրակի զոհեր-
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛ռուս ելաներ:

Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՜, հայր ալեհեր -
Ցամքած աղբյուրներեն մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՜, մայր կարեվեր-
Եղեգնյա գրչով օճախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ:

Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի.
- Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ -
Գրիչս եղավ անքրոց սրտերու հնոցի...
- Ձեզի ընծա՜, քաջ մարտիկներ -
Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

## ԴԱՐՁ

Ես հեռավոր տնակ մ'ունիմ՝
Շինված լիճին ափն ամայի:
Դուռը բաց է. - հոն մտերիմ
Ճրագս է վառ ու կնայի:

Անկե մեռել մ'հանեցին դուրս.
Աքսորեցին հոգիս անկե:
Այժմ շեմին վրա կատուս
Աղիողորմ կմլավե:

Օր մը նորեն դառնամ գուցե,
Մարա՞ծ գտնեմ ճրագս հավետ.
Դողդոջ ձեռքս դուռը գոցե,
Ու լամ լացող կատուիս հետ:

## ԱՌԿԱՅԾ ՃՐԱԳ

Հաղթանակի գիշերն է այս տոնական.
Հա՛րս, եղ լեցուր ճրագին:
Պիտի դառնա կռիվեն տղաս հաղթական.-
Հա՛րս, քիթը ա՛ռ պատրոյգին:

Սայլ մը կեցավ դրան առջև, հորին քով.
Հա՛րս, վառե՛ լույս ճրագին:
Տղաս կու գա ճակատն հպարտ դափնիով.
Հա՛րս, բե՛ր ճրագը շեմին:

Բայց... սայլին վրա արյո՞ւն և սո՞ւգ բեռցեր են...
Հա՛րս, ճրագդ ասդի՛ն երկարե:
Հերոս տղաս հոն զարնվա՞ծ է սրտեն.
Ա՜խ, հարս, ճրագդ մարե՞...

## ԼՈՒՄՆԻՆ

Ճերմակ լուսին, ո՞ւր կերթաս...
- «Հյուղակներուն խավարին
Կտանիմ շողը լույսին»:
Գնա՛, լուսի՛ն, դյուր կ'երթաս:

Գոհա՛ր լուսին, ո՞ւր կ'երթաս...
- «Դույլերուն մեջ արծաթի
Կտանեմ կաթ հիվանդի»:
Գնա՛, լուսի՛ն, դյուր կ'երթաս:

Լռի՛կ լուսին, ո՞ւր կ'երթաս...
- «Կերթամ բերել ես քեզի
Յարիդ խոստումը կույսի»:
Լուսին, լուսին, զո՞ւր կերթաս:

## ԱՌԱՋԻՆ ԾԻԼԵՐ

Զեղուն ավիշն հողերուն տակ պայթեցուց
Սերմերն: Արտերս այս գիշեր
Կանաչցներ են լուսնկային տակ գարնան...
- Մայրի՛կ, ինձի ծիլ մը բեր,
Քրտինքիս ցողը վրան:

Կատաղորե՞ն, կատաղորե՞ն հորդեր են
Տե՛ս, ցորեններն աղածրի:
Դաշտերն հագեր են զմրուխտե պատմուճան...
- Քույրի՛կ, ծիլ մը բեր ինձի,
Եզիս շողիքը վրան:

Կփողփողին արտավարե արտավար
Կարծես կանանչ մոմիկներ:
Ամեն ընձյուղ մարգրիտ մ'ունի իր բերանն...
- Հոտա՛ղ, ինձի ծիլ մը բեր,
Արևուն շողը վրան:

Կզարդարե ամայությունը հողին
Մատղաշ ծաղի՛կը հացի:
Կանանչին մեջ կոշտերը թուխ կլողան...
- Հարսնո՛ւկ, ծիլ մը բեր ինձի,
Մատներուդ բույլը վրան:

Ծիլ արտերուս մեջն է ծլեր նշենիս,
Հոն միսմինա՜կը ծաղկեր...
- Մայրի՛կ, քույրի՛կ, հոտա՛ղ, հարսնո՛ւկ սիրական
Բերեք անկե ծաղիկներ,
Բերեք վարդագույն ծաղիկներ,
Հնձվորիս հո՜ւյսը վրան:

## ՅՈՐՅԱՆԻ ԾՈՎԵՐ

Հովեր կանցնին.
Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կարթընանա.
Իրենց խորքեն կը հոսի դողի մ'անսահման:
Գեղադալար կողերն ի վար բլուրին
Ծովեր կ'անցնին:

Հովեր կ'անցնին.
Այնքան կհորդի, կը կատղի դաշտը հուռթի
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:
Գոգին մեջեն ալետատան հովիտին
Ծովեր կ'անցնին:

Հովեր կ'անցնին.
Ու ցորյանին պատմուճանները ծփուն
Մերթ կը պատռին, մերթ կը կարվին փողփողուն:
Ստվերին մեջ, լույսերու մեջ փրփագին
Ծովեր կ'անցնին:

Հովեր կ'անցնին.
Զմրուխտներով կը ծփա դաշտը անհուն:
Ծիտը կ'երգե թառած հասկի մ'օրորուն՝
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին
Ծովեր կանցնին,
Հովեր կ'անցնին:

## *ՀԱՍՈՒՆ ԱՐՏ*

Արտս ոսկո՞ւն է...
Նման բոցերու
Ցորենն է բռնկեր՝
Առանց այրելու:

Արտս ոսկու՞ն է...
Երկինքն է կրակ.
Հողը խորխոլած
Ծղոտներուն տակ:

Արտս ոսկու՞ն է...
Քառաշար հասկեր
Քառաշար սաթով
Արև են հագեր:

Արտս ոսկու՞ն է...
Բոռ, մեղու, պիծակ
Քիստերուն մեջեն
Կ'անցնին զերդ փայլակ:

Արտս ոսկու՞ն է...
Մերթ կ'ելլե, հովեն,
Դեղձանիկ մը թի՛ռ,
Ոսկեծուփ ծովեն:

Օրո՜ր ոսկո՜ւն արտ,
Օ՜ր տուր, հասո՛ւն արտ,
Գամ ոսկիդ հնձեմ
Մանգաղով արծաթ:

## ՀՈՒՆՁՔ ԿԺՈՂՎԵՄ...

Հունձք կը ժողվեմ մանգաղով,
- Լուսնակը յարս է -
Ակոս-ակոս ման գալով
- Սիրածս հարս է:-

Գլխեբաց եմ ու բոպիկ,
Անո՜ւշ են հովեր -
Արտերուն մեջ թափառիկ:
- Մազե՜րն են ծովեր:-

Ցորեն, կակաչ, կարոտով,
- Կաքավը կու լա -
Կապեցի մե՛կ նարոտով:
- Ձեռքերն են հինա:-

Հասկերուն մեջ, վերևեն,
- Ասուպը անցավ -
Աստղեր մյուռոն կը ծորեն:
- Դեմքը լուսացավ:-

Քանի՜ խուրձեր շաղերով,
- Վարդենին թաց է -
Ես կապեցի խաղերով:
- Ծոցիկը բաց է:-
Արտը խոզանով մնաց
- Կ'երթա՜ լուսնակը -
Դեզերով լեռ եմ շինած:
-Սի՜րտս է կրակը:-

Մանգաղս քարին եկավ.
- Յարըս յա՜ր ունի -
Քարեն լորիկը թռավ:
- Լե՜ռդս կ'արյունի:-

## *ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ*
## *ՁՄՐԱՆ ՊԱՐԶ ԳԻՇԵՐ*

Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Պարզ, լուսածածան, հրաշալի՜ գիշեր,
հոսե սրտիս մեջ դյութանքիդ ալիք,
Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ
պուտ-պուտ կաթեցո՛ւր հոգվույս սիրաջեր:

Կ'ուզեմ, որ դաղրին ձայներն այս պատիր,
ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
Կ'ուզեմ, որ մեռնի՜ն տիվ ու ժամանակ,
ու դարբիրներուդ իյնամ ծնրադիր:

Ու դարբիրներու՜դ իյնամ ծնրադիր,
այս պաղատագին շարժուձևիս մեջ,
ու մինչ կ'ողողեն զիս ցոլքերդ անշեջ,
աչքերս ալ մռռնալ տակավ այս նանիր:

Ցնորաբե՜ր գիշեր, ա՜հ, ընդունե՜ զիս,
ընդունե՜, միստիք ո՜վ անդորրություն,
իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,
և համբույրն անանց, զոր կուտա հոգիս:

Սենյակս է լեցուն հուշքերով աղի
երեկի հովին վայրագ տարփանքին.
ու դեռ կը հծծեն խորշերն ողբագին
ծուխը գրգանքին անոր կատաղի:

Նե՛րս խուժե ուժգին, նե՛ր պատուհանես
ու լեցուր խցիկս մինչ կաթոգին
քու սրբությունով իր խորշերն հորդին,
և ես արթնամ վաղնջուց քունես:

Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
թող որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

*ՍԻՐԵՐԳ*

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն,
հաշիշով օծուն ու բալասանով.
լուսեղեն ճամփեն ես կ'անցնիմ գինով՝
գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն...

Համբույրներ կուգան հովեն ու ծովեն,
համբույր լույսեն, որ չորս դիս կը ծաղկի,
այս գիշեր Տոն է հոգվույս՝ Կիրակի՜,
համբույրներ կուգան հովեն ու ծովեն:

Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ մը մաշի՜,
շրթունքս են ծարավ միակ համբույրին...
ցնծագին գիշերն է լույս ու լուսին՝
բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կը մաշի...

## ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
ի՜նչ հեշտին է մթնշաղն այս սատափե:

Աքասիաներ, գինով լույսե ու տապե,
օրորվելով մաքուր շունչ մը կը հևան,
մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտևան՝
զոր խոլաբար հովը գրկել կը շտապե:

Ու լույսն անոնց, անխոս հուրի՜ դյութական,
հմայագեղ ու վարսքերով արծաթե,
շատրվանին կ'իջնե, գուռին մեջ կաթե:

Ջուրը ցայտքեն ծաղիկ-ծաղիկ կը կաթե,
վճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
նվագն անոր կը հեծեծե հեշտական:

Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե...

## ԿԻՐԱԿՄՈՒՏՔ

*«...Եկեալքս ի մկրանել արեգականն*
*տեսաք զլոյս երեկոյիս...»*

Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է զվարթ...
ոսկի թելեր՝ պլլված խունկի թավիշ մշուշին.
կապուտ ծոպեր, ծիածան, ծփուն ձայներ, միստի՜ք վարդ,
լուսե արցունք մոմերու, որոնք հանդարտ կը մաշին:

Խունկի ծարավ իմ հոգիս կը ծծե պահն այս հանդարտ,
ոսկեկրակ աչքերով բուրվառներն երբ կը ճոճին.
պակուցում մը հոգեգրավ հոն կը թողու զիս անթարթ,
կը զգամ համբույրն՝ իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին:

Մեղեսիկի երանգներ կօծեն պարույրը խունկին.
խորհուրդին եմ ծնրադիր բազուկներս խաչանիշ՝
ու կսպասեմ, որ ծագի հոգվույս պայծառ կիրակին...
Ջահերն հիմակ կերազե՞ն համակ զյումրյութ ու թարշիշ...
Կամարներեն, խորանեն կը ծագին լույս ու ծիծաղ.
Հոգիս քիչ-քիչ կը թաղվի անուրջին մեջ այս չքնաղ:

Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է զվարթ...

## ՆԱՎԱԿՆԵՐԸ

Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծրփանուտ Երազիս ափունքեն.
Անձուկին բոցը զիս պաշարե՞ց. Սպասման հիվա՞նդն եմ.
Հոգեսարս դողերով և հուրքով միշտ ցայգերն են հղի.
Գիշերներն ես համբուն կը սպասեմ ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կ'անցնիմ ավազուտ ափունքեն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլցուն:
Դարձուցե՞ք նավակներս հողմավար, ջրանու՞յշ պայիկներ,

Դարցուցե՞ք նավակներս դյուրավար, իրիկվա՞ն հովիկներ...

## ՎԱՅՐԿՅԱՆ

Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մրշկենի,
և համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար,
երազներու պերճուհին է, որ կ'անցնի
ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար:

Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար,
Եվ ալիք մը թևը բացած կը վազե
գրկել ափունքն իղձիս ոսկե ավազե:

Ո՞վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ,
ո՞վ պերճությունը գնացքին իր հպարտ,

ճամփուն վրա՝ իր քայլերուն հետքը վարդ՝
ուր հեշտորեն կը հածի դեռ իմ մենիկ

սիրտս՝ բո՜ց մը՝ մթնշաղի՜ն մեջ անհետ...

## ՋՐՏՈՒՔ

*Շավարշ Միսաքյանին*

Հոյ-հո՜յ, գետը կը թրրջե ցայգուն քամակն արծաթված,
իր հորձքին մեջ ծեծելով անդուլ խարակն ու խութեր,
հոյ-հո՜յ, առուն հորդառատ դալարին ծոցն է նետվեր
գաղջ տարփանքովն իր ջուրին՝ ուր արևը կ'ապրի դեռ:

Հակուրջի մը առկախած գյուղակն անդին կ'օրորեն
անրջական հյուսվածքով խումբ մը ժայռի ստվերներ.
վանքին բակը՝ կ'աղոթեն հսկա ծառեր տարորեն՝
որոնց տամուկ շուքին մեջ Աստվածամարն է կայներ:

Ու գյուղակին դեմ նստած, երիտասարդ ու պչրոտ,
պարտեզները՝ վերեն վար վազող ջուրին կը սպասեն.
ա՜լ հափրացած խոլ գետին անարգավանդ դարբասեն,
ու լռությունը խածնող լուտանքներեն արհավրոտ:

Գիշերային ջրտուքի ժամն է. լույսին մեջ կայնած
մշակն անքուն կը սպասե՜, ոտքը բոպիկ. բահն ուսին.
պարտեզներուն վրա կ'իջնե թեթև քողք մը միգամած,
ու ծղրիդներ՝ լուսնակով արբշիռ՝ անվերջ կը խոսին:
Ու կ'երկարի լուսարծաթ ժապավենն այդ բարբառին,
ինչպես փախչող ասուպի կոթունները կաթնավետ.
ավազին վրա ջուրերու կ'իյնա շառաչը վետվետ,
խարույկները՝ ոսկեթաշ՝ ուրեք-ուրեք կը վառին:

Հոյ-հո՜յ, առուն կը հասնի ցանկապատին քովերեն,
և երգի քուղ մը կուգա պլլված իր գոտիին.
այուք մը կ'անցնի, տերևներ ծա՛փ կը զարնեն ցնծագին,
վարեն ջուրը կը խայտա, կը խնդա լույսն ալ վերեն:

Թումբերն անդուլ կը բացվին, ջուրն անդադար կ'ոռոգե
վարդենիքը, թըթաստանն և ածուները բոլոր.
բահի երկու հարվածով նայիս առուն կը թեքե
օձաճապուկ ձևերով հեղուկ իրանն իր ոլոր:

Ջուրն անընդմեջ կը հոսի, ածուները կը լեննան,
ու, դարձուցե՛ք, կը կանչե ծեր մը մութին ընդմեջեն.
խիճերուն ու սիկին մեջ, բահերը՝ խո՞ւլ կը հնչեն,
ու, դարձուցե՛ք, դարձուցե՛ք, կը կոչե ձայնն անխափան:

Աղջնակ մը, արիշին տակ նստած, շե՞ր կը կանչե,
որ հոգնաբեկ մշակին օրորի մը պես կու գա.
հողը ծծեց ջուրերուն տարփանքն՝ որ դեռ կը հնչե
և հիմա՝ թա՞ց՝ կը խոկա իր երկունքին ապագա:

## ԸԼԼԱՅԻ՞, ԸԼԼԱՅԻ՞
*Իրիկունը*

Սա իրիկունն ըլլայի ես,
Եվ հպեի ճակտին ամեն անցորդին.
Չքնաղագեղ ու նվաղուն համուրդի
Սա իրիկո՞ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի երգովը թռչուններուն, մարդերուն,
Ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
Սա իրիկո՞ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՞ւնն ըլլայի ես,
Թույլ, նազենի, շղարշային, վարդաբույր,
Ու ծփայի զերթ ոսկեսար վարագույր
Վրան ամեն հոգիի:

Սա իրիկու՞նն ըլլայի ես,
Լի զանգակին ղողանջներովն երկնաճեմ,

Խնկապատար, օծուն, ջահված ժամի պես
Սա իրիկու՜նն ըլլայի ես:

Սա իրիկու՜նն ըլլայի ես,
Իմ անդորրիս մեջ ոգևար աղջկան
Մարող ճրագին բոցեր տալու իմ ցոլքես.
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
Լի գոռ ծովափն օվկիանի ջուրերուն,
Սյուքին ծաղիկ մեղեդիքովն ակաղձուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
Որ կը մարի սատափ բարձին վրա ցայգուն,
Թոթափող վարսքը գունագեղ ու ծփուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
Համայնական, չքնաղ, քաղցրիկ, լուսագես,
Եվ ամենուր տայի հուրքես, ոսկիես:
Սա իրիկունն ըլլայի ես:

*ՏՈՒՐ ԻՆՁԻ, ՏԵՐ...*

Տո՛ւր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական,
ծաղիկներու պես զայն ժողվեմ ճամփուս վրան՝
նայվածքներուն մեջ ամենուն և ամեն օր:

Տո՛ւր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական,
և ես հանգույն երփնալուցկի վառվող մանկան՝
զայն լուսաժպիտ տեսնեմ ուրիշ դեմքի մը վրան:

Տո՛ւր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական,
ժողվել՝ հոգույն մեր ծերերուն, կույսին, մանկան,
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին:

Տո՛ւր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական,
ժողվել՝ հոգվույն մեջ ամենուն, համայնական
հոգվույն ամեն մասնիկներուն մեջ՝ ամեն ժամ:

Ճամփաներեն ու գետերեն ու դաշտերեն,
անտառներեն ու լեռներեն ու ձորերեն,
տանիքներեն ու տուներեն ու դուռներեն՝
Տո՛ւր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական...

## *ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ*

### *ԻՆՉՈ՞Ւ*

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մե՞ղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթե՞ռ պետք էր,
Դուն ծեր արծի՞վ մը բանտեցիր...

Կապույտ աչվիդ երբ որ բացիր,
Կապու՞յտ աղջիկ՝ պլպուլն երգե՞ր.
Քե՞զ ալ սիրո մրմունջ պետք էր,
Դուն գուժկան մռունչս ընտրեցիր...

Ես կերթամ մի՞շտ, անծայրածի՞ր
Դամբաններ են ոտքիս հետքե՞ր.
Քեզ սիրո մեղմ սյու՞ք մը պետք էր,
Դուն փոթորկի՞ն կուրծքդ բացիր...
Կայրի՞ր աչերդդ սևածիր,
Պիտի մեռնիս, այդպես մ'երգե՛ր.
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սե՛ր-Աստվածը սիրեցիր...

## ԱՆԿԱՐԵԼԻ ՍԵՐԸ

Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ'անրջեմ,
Անհնարի՜ն, երկնագորո՜վ
Սերը մը, որուն տերը չեմ...

Այրող աչքերս քուն չունին,
Կը տեսնեմ մերթ մեգի պես
Զույգ մը աչեր, որ գույն չունին,
Բայց կ'սպաննեն տեգի պես...

Դղյակի մեջ իշխանուհի
Աստվածներու արյունեն.
Անկարելի՜, խե՜նթ, ամեհի՜
Համբույրներ, որ արյունեն...

Կ'ուզեմ մեռնիլ դյուցազնային
Սիրո մ'համար աղջկա,
Հետո աչերս վար կը նային՝
Ո՞ւր է այն Սերն, ա՜խ, չկա՜...

## ԵՐԹԱ՜Լ...

Երթա՜լ, երթա՜լ, երթա՜լ անձայն, անհանդես,
Երթա՜լ առվի՛ն պես՝ մարգերու տակ անտես.
Կապույտին մեջ՝ հեզ, հողմավար ամպին պես...

Երթա՜լ, առա՜նց գիտնալու, թե դեպի ո՞ւր.
Երթա՜լ, ՝ հեռո՛ւ ոստաններեն այս տխուր.
Երթա՜լ, խավար գիշերին մեջ թաքթաքուր...

Երթա՜լ, երթա՜լ, երթա՜լ արանց ճրագի,
Երթա՜լ ՝ առա՛նց սուգի, լացի, փափաքի.
Երթա՜լ՝ առա՛նց սովի, առա՛նց պապակի...

Երբա՜լ՝ մարդոց կույտին մեջեն լռելյայն.
Օտար մնալ իրենց Ցավին, Գիտության,
Երբա՜լ տգե՛տ, խո՛ւլ, համր, կույր հավիտյան...

Աննյութանա՜լ, անրջանա՜լ, վսե՛մ, վե՜ս,
Երբա՛լ՝ անցա՜յգ, անա՜յգ երբա՛լ վերջապես,
Աչքերը գո՛ց, ցայգաշրջի՜կ խեղճի պես...

Չգիտենա՛լ, որ հոս Իտեալը չիկա...
Ուխտագնա՜ց երբալ ափերն հեռակա,
Դեպի ուղին Երջանկության մշտակա...
Երբա՜լ, երբա՜լ, չճանչնալ Մա՛րդ ու Աստվա՛ծ,
Զո՛ւյգ երբալ՝ ձեռքդ քու՜յր ձեռքի մեջ դրած
Անրջանքի՜ն ու Սիրույն պես - աքսորվա՜ծ...

*ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵՄՆ...*

Քերթո՜ղ, պատմե՛ մեզ հայրենի հուշքերեդ,
Երգե մեզ հի՜ն օրերու երգ մը անհետ,
Թափառական թրուպատուրի երգ մը զո՜վ,
Արբշիռ ու զով մեր Գողթանի ողկույզո՜վ:
Մեռելի շեն երգ մը հանե թոքերեդ.
Հի՜ն, կռապաշտ ա՛յն երգերեն որոնց հետ՝
Մեր ասպազեն քաջերն արույր թափորով,
Սաղավարտնին շողացնելով, ջահերո՜վ,

Արքայական հանդեսներու, վայրա՜գ, վե՜ս,
Կը պարեին, աստվածներու պարին պես...
Երգե՜ մեզի հին օրերու հի՜ն հուշեր.

Մենք դարավոր մեր Մահացումին այս գիշեր
Պիտի պարենք եղեռնորե՛ն շե՜ն, խելա՜ռ...
- Քերթողը, ծե՜ր, չխոսեցավ: Ան կուլար...

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

### ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Սահուն քայլերով, անշշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին.-
Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբը շուկով իմ սիրտը լցրին...

### ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Ոչ տրտո՛ւնջ, ոչ մրմո՛ւնջ սգավոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին, մենավոր,
Կըգնամ իմ դժկամ ցավի հետ:

Իմ ճամփան անվախճան մի գիշեր,
Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա.-
Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...

Հուսաբեկ մութ ու մեգ թող լինի,
Իմ վերև թող արև չխնդա.
Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...

### ԱՆՋԱՏՄԱՆ ԵՐԳ

Դու անհոգ նայեցիր իմ վրա
Ու անցար քո խաղով կանացի.

Ես քեզնից դառնացած հեռացա,
Ես քեզնից հեռացա ու լացի...

Իմ հոգին ծովերում անծանոթ
Մենավոր ու մոլոր մի նավակ,
Մատնեցի փոթորկին աղմկոտ.
Հուսաբեկ, թողած ղեկ ու թիակ...

Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան.
Միայն հողմն է տխուր շառաչում,
Անթափանց մեգ-մշուշ է միայն...

* * *

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,
Երբ տխուր գգվանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթե կատարներն է վառում,
Երբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները՝ ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրիմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք.
Լռությո՜ւն, լռությո՜ւն, լռությո՜ւն անսահման...

* * *

Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար,
Ես նստում եմ ճամփի վրա ամեն օր
Եվ աղոթում, և՛ թախծում եմ քեզ համար:

Եվ իմ մոլոր ուղիներում, ո՛վ գիտե,
Գուցե մի օր դու երևաս լուսերես.
Գուցե ժպտաս քո խոսքերով արծաթե
Եվ մութ սրտիս նոր խնդության լույս բերես:

Օձանման ոլորումով հեռախույս
Ինձ կանչում են ուղիները բյուրավոր.
Արդյոք ո՞ւր ես, խորհրդավոր արշալույս,
Հանդիպումի երջանկության պայծառ օր...

*ՄԹՆՇԱՂ*

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,
Ցնորում է կապույտի մութի աշխարհում...
Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող,
Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող.-
Հիվանդ սիրտդ չի տրտնջում, չի ցավում,
Որպես երազ մոռացումի անձավում.
Եվ թվում է, որ անեզր է ամեն ինչ,
Որ ողջ կյա՛նքդ է մի անսահման քաղցր նինջ...

*ԱՇՈՒՆ*

Նորից անձրև՜, մշո՜ւշ, ա՜մպ.
Թախի՜ծ անհուն, տխրա՜նք հեզ,
Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

Քո մշուշը, քո ոսկի
Տերևները հողմավար,
Դյութանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
Վիատությանն իմ խոնարհ
Ե՛վ թփերը դողդոջուն,
Ե՛վ խոտերը գետնահար...

Եվ քո երգը թախծալի
Իմ սրտի երգն է, կարծես,
Աշո՛ւն, քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

## ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐ

Չգիտեմ՝ որտեղի՛ց է գալիս
Ջութակի հեկեկանքը տրտում,
Եվ լալիս է անվերջ ու լալիս
Եվ անվերջ ծավալվում իմ սրտում:

Անհույս է այդ երգը, որպես մութ
Գիշերս, աշունքվա.-
Կարծես՝ սուգ են անում և անգութ
Եվ դառը լալիս են իմ վրա...

Այնքան վիշտ կա անհույս այս երգում,
Այնքան դառը տանջանք ու թախիծ,
Եվ անվերջ, հավիտյան է երգում
Հեկեկում այդ երգը այնտեղից...

Եվ ձուլված է արդեն իմ հոգուն,
Իմ բոլոր օրերին է ձուլված.
Տրտմություն է իմ շուրջն ու բեկում,
Իմ հոգում է անվերջ սուգ ու լաց...

Ա՜խ, բոլոր կողմերում է թախիծ,
Ամե՜ն տեղ է փռված տրտմություն.
Եվ արդյոք որտեղի՞ց, որտեղի՞ց
Սպասեմ ավետիք ու խնդում...

* * *

Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,
Զգալ, որ դու կաս և լինել հեռու,
Երկրպագել քեզ առանց սիրվելու,
Երազել միշտ քեզ - լինել քեզ օտար...

Ստվերդ փնտրել ամեն տեղ, ուր խենթ
Հոգին կարող է թռիչքով չափել.
Անանց կարոտում անվերջ տառապել
Եվ լինել քեզնից բաժանված հավետ...

Ու գերեզմանում՝ սև հողերի տակ,
Զգալ, որ անցար, և քեզ չկանչել,
Եվ ոչ մի հուշով սիրտդ չտանջել,
Ու չխոովել բերկրանքդ հստակ...

* * *

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին,-
Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին:

Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

Բաբելոնն է եղել մեր ախոյանը. տե՛ս՝
Անհետ կորել, անցել է չար մշուշի պես:

Ասորիքն է եղել մեր թշնամին. ահա՛
Դաշտ է տեղը, և չկա քար քարի վրա:

Ամրակուռ է մեր հոգին - դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք,
Լաց է այնտեղ ամեն երգ, և ողբ՝ ամեն գիրք:

Գերված ենք մենք, ո՛չ ստրուկ - գերված մի արծիվ,
Չարության դեմ վեհսիրտ միշտ, վատի դեմ՝ ազնիվ:

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ:

Չի հասկանա ձեր հոգին և՛ ծույլ, և՛ օտար,
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար:

Եգիպտական բուրգերը փոշի կդառնան,
Արևի պես, երկի՛ր իմ, կվառվես վառման:

Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Արիացի՛ր, սի՛րտ իմ, ե՛լ հավատով տոկուն,
Կանգնի՛ր հպարտ, որպես լույս լեռն է մեր կանգուն:

* * *

Այնպես անխինդ են և նման լացին
Երգերն իմ երկրի, այնպես տխրագին.
Մեզ չի՛ հասկանա օտարերկրացին,
Մեզ չի՛ հասկանա սառն օտարուհին:

Այն մելամաղձիկ, լացող, միալար
Ելևէջները՝ ներդաշնակ այնպես,
Եվ հարազատ են սրտին մեր մոլար,
Հոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ...

Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,
Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր.
Իմ ժողովուրդը՝ անել վշտի մեջ,
Երկիրն իմ անբախտ և աղետավոր:

Թող հնչե երգն այդ դառն ու ցավածին,
Երգը հայրենի՝ ցավագար ու հին,
Մեզ չի՛ հասկանա օտարերկրացին,
Մեզ չի՛ հասկանա սառն օտարուհին...

* * *

Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ.
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Ե՛վ վարդի բույր, և՛ սրտի հուր:

Ամեն մի միտք՝ հիմա մի վերք,
Ամեն հայացք՝ հատու մի սուր,
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր:
Մի օր ինչ վա՜ռ ծաղկեց մոգված
Մեր նահրյան սիրտը բեկված,
Հրով որքա՜ն խորհրդավոր,
Ահա, որպես ծաղիկ թեքված՝
Մեր հին հոգին համր ու մոլոր,
Ա՜խ, և անզո՛ր, և անարգվա՛ծ...

* * *

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու ու իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հմայող ու հին խոստում:
Եվ մի՞թե այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպես քնքուշ
Եվ խոնարհվում քեզ պես համառ,
Օ՜, հայրենիք դառն ու անուշ:
Չշլացա խնդրուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք.-
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ,

Խեղճությունդ խավար ու լուռ,
Աղոթքներդ դառն ու ցավոտ,
Ձանգակներիդ զարկը տխուր
Եվ խուղերիդ լույսերն աղոտ...

* * *

Մշուշի միջից,- տեսի՞լ դյութական,-
Բացվում է կրկին Նաիրին տրտում.
Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում - ո՞ր երկրի սրտում.
Որտե՞ղ են քարերն այնպես վերամբարձ
Ձեռների նման պարզված երկնքին,
Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
Եվ զոհաբերումն այնպես խնդագին...
Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ.
Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...

* * *

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի:

Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսե՞ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է որպես աղոթք
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ
Եվ խոցում է և այրում.
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրուն:

Ահով ահա կանչում եմ քեզ,
Ցոլա՛, ցնորք Նաիրի.-
Մի՞թե վերջին պոետն եմ ես,-
Վերջին երգիչն իմ երկրի...

* * *

Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ՜, Շամիրամ.
Որպես արքան այն, մանուկ Արան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
Որքան փորձանք գա իմ գոհ սրտին,
Որքան էլ փայլդ փարե նրան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ՜, Շամիրամ:

* * *

Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց,
Նաիրուհին տխուրաչյա ու համեստ.
Այնպես վառ էր լեռնադստեր դեմքը բաց.
Նայվածքն այնպես հրեղեն ու անարվեստ:
Եվ հյուսիսյան հեռուներում ու ցրտում,
Կարծես ցոլաց իմ նաիրյան արևն ալ,
Կարծես բոցե մի վարդ բացվեց իմ սրտում.
Եվ չի կարող արբած հոգիս լուռ մնալ.
Եվ չի կարող սիրտս չերգել այդ անբիծ
Հուրը, որ ինձ ժպտաց այսօր ցուրտ հեռվում.
Այդպես արևն է դուրս նայում մութ ամպից
Իմ նաիրյան բա՜րձր, բա՜րձր աշխարհում...

* * *

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինձ տարեք,
Ինձ տարեք այս երկրից անարեգ:

Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
Մեր արտերն արևոտ ու հանգիստ:

Փրկեցե՛ք մտքերից այս անծայր,
Փրկեցե՛ք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինձ մանուկ և անհոգ:

Փրկեցե՛ք սրերից այս սուրսայր,
Խ որախոց խոհերից իմաստուն,
Մեր սարերը տարեք, տարեք տուն...

* * *

Գինով եմ, գինով եմ ես էլ,
Թեթև եմ, անհոգ, լեզվանի.
Օրորի՛ր մեզ, պանդո՛ն կարուսել,
Օրորի՛ր, օրորի՛ր մեզ, գինի:

Պոետ մի անտեր ու անտուն,
Գիտեմ՝ ես կորա՜ծ եմ, կորա՜ծ.
Բայց դեռ երգն իմ երգում է տենդում -
Օ՜, երա՜զ է, երա՜զ ու երա՜զ...

Ի՜նչ քա՜ղցր է նստել այստեղ,
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
Իսկ ներսում իմ, ներսում մի ասեղ
Ասղտում է՝ ննջե՜լ առհավետ...

Պարում ենք, երգում, վետերում,
Սահում ենք եթեր առ եթեր.
Գուցե վաղն իսկ կարդաս թերթերում
Եվ ժպտաս՝ «հանգեաւ ի տէր»...

## ԿԱՐՈՒՍԵԼ

Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,
Ես քո երգը վաղուց եմ լսել...

Հեքիաթ էր և հմայք և անծիր
Խնդություն մշուշում վարդագույն,
Դու նենգոտ քնքշությամբ ժպտացիր
Արևոտ ժպիտով իմ հոգուն...

Սիրո խոսք և համբույր և խոստում...
- Արբեցեք այս անուշ համերգում,-
Արդյոք մե՞նք, թե՞ խոսքերն են ստում,
Արդյոք մե՞նք, թե՞ աշխարհն է երգում:

Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,
Ես քո երգը վաղուց եմ լսել...

Կար հեռու մի երկիր թովչական,
Արև էր ոսկեղեն աշխարհում.
Շողացին, ժպտացին - էլ չկան,
Էլ չկան պատրանքները սիրուն:

Եվ թախիծ և տրտունջ և տանջանք,
-Դո՞ւ ես այն, թե՞ աշխարհն է լացում.-
Խավարի՛ր, խաբուսի՛կ անրջանք,
Հեռավոր օրերի հիացում...

Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,
Ես քո երգը վաղուց եմ լսել...

Կար մի երգ հեռավոր աշխարհում,-
Դու այն երգն ես կրկնում հեռավոր -
«Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
Եվ հին են քո խոսքերը բոլոր...

Եվ այն վալսը՝ «Անդարձ ժամանակ»,
Ծառուղին ամայի պուրակում,
Ե՛վ գիշեր, և՛ համբույր, և՛ լուսնյակ...
Տաղտկալի՞, ձանձրալի՞ պատմություն...

Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,
Ես քո երգը վաղուց եմ լսել...

Պարում են խելագար խնջույքում,
- Ով կուզե՝ թող գաղտնիքն իմանա,-
Ո՛չ վերջ կա, ո՛չ սկիզբ այս երգում,-
Երեկ՝ ես, այսօր՝ դու, վաղը՝ նա...

Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,
Ես քո երգը վաղուց եմ լսել...

## *ՄԻՐԵԼԻ ՊԱՈՒԼՈ ՄԱԿԻՆՅՅԱՆԻՆ*

Եկան օրեր ու անցան, ու ինձ ոչինչ չմնաց.
Հուրե՞ր, հուրե՞ր - ծիածան, ու ինձ ոչինչ չմնաց:

Գարնան անուշ ծաղկանց պես, վարդերի պես հրահրուն,
Հողմով տարված հեռացան, ու ինձ ոչինչ չմնաց:

Ու նոքա որ սիրեցին- սիրտս նրանց չտվի.
Գնացին ու չդարձան, ու ինձ ոչինչ չմնաց:

Եվ նոքա, ում սիրեցի իմ ցավով ու խենթությամբ -
Արբեցին ու մոռացան, ու ինձ ոչինչ չմնաց:

Ձմեռ իջավ իմ գլխին և՛ ցուրտ, և՛ խոր, և՛ անդորր,
Աղբյուրներս չորացան - ոչի՛նչ, ոչի՛նչ չմնաց...

* * *

Մենք բոլորս, բոլորս
Մանուկներ ենք որբ.
Մանուկներ ենք մենք կորած -
Հավիտյան անմայր.
Մենք բոլորս մոլորված
Անտառում խավար...

Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հեռու,
Կանչում ենք միշտ - ձայն չկա,
Աղոթում ենք - ո՞ւմ,
Ո՞վ կփրկե, ո՞վ կգա,
Որ տանի մեզ տուն...

* * *

Ձեռներում Ձեր մանրիկ, նվագուն,
Ձեր ձայնում, երբ ասում եք «Տերյան»,
Ձեր բարակ ժպիտում նաիրյան -
Մի թախիծ կա մեղմած ու թաքուն:
Շուրթերում Ձեր մաքուր ու բուրյան,
Ձեր պարում՝ հեզանազ ու ճկուն,
Հաշտորեն խոնարհված Ձեր հոգում
Նաիրյանն է երգում, հնօրյան...
Երբ կիզում եք Ձեր միշտ հրախանդ
Նայվածքի բոցերով մթամած,-
Ուզում եմ օրորել Ձեզ կամաց,
Փայփայել երգերով հնավանդ,
Տխրությամբ հնազանդ ու մեղմած,
Նաիրյան նվագով իմ հիվանդ...

## ՇՇՈՒԿ ՈՒ ՇՐՇՅՈՒՆ

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
- Բարդիներն են բաց պատուհանիս տակ,-
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում
Ե՛վ շշնջում ես, և՛ անուշ շրշում,
Պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում:

Ամպերը ճերմակ երամով անցան
Թռչունների պես,- լուսեղեն երա՜զ,-
Դու ես, որ դարձյալ ժպտացիր անձայն
Քո հեռու հեռվից, անհայտ ու անհաս:

Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
- Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն,-
Թվում է, որ դու տխրությամբ անքուն
Ինձ ես որոնում աղոտ աշխարհում:

Եվ ժպտում ես ինձ, ակնարկում քնքուշ
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում,
Ե՛վ շշնջում ես, և՛ շրշում անուշ,
Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում:

* * *

Տեսա երազ մի վառ.
Ոսկի մի դուռ տեսա,
Վրան փերուզ կամար,
Սյուները հուր տեսա:
Տեսա ծաղկած այգին,
Սոսի սուրբ ծառ տեսա,

Մի հրեշտակ անգին
Սոսից պայծառ տեսա:
Երկու բաժակ տեսա,
Ոսկի գինին էր վառ.
Երկու նիզակ տեսա,
Երկու անգին գոհար:
Սիրտս խոցված տեսա,
Վերքիս արյունն էր վառ.
Դահճիս կանգնած տեսա,
Ասի՝ արևս ա՛ռ...

## ՅՆՈՐՔ

Ինձ չես սիրում, ուրիշին,
Ուրիշին ես սիրում դու -
Եվ անզոր է ու չնչին
Քո դեմ տանջանքն իմ հոգու:

Դու անցնում ես ամեն օր,
Անհաս ցնորք իմ հոգու...
Եվ դարձել եմ ես սովոր
Քամահրանքիդ անհատնում:

Քեզ խոնարհ՝ ամեն անգամ
Գլուխ եմ տալիս խոնարհ,
Բայց ես աղքատ եմ այնքան,
Այնքան թշվառ քեզ համար...

Ամենքինն ես, իմը չես,
Ամենքին ես սիրում դու.
Ա՜խ, ոսկով են գնում քեզ,
Անհաս ցնորք իմ հոգու...

*RESIGNATION*

Այսօր գթանք իրարու,-
Խեղճ լինենք ու չամաչենք,
Բախտ չտենչանք ու հեռու
Տարիները չհիշենք:

Լռենք միայն մի մեղմող
Լռությունով ու հանգչենք,-
Բանանք սրտերս մեռնող,-
Որբ լինենք ու չամաչենք:

Սիրենք իրար ու ներենք,-
Չնախատենք մեկմեկու,
Էլ չար սիրով չսիրենք,
Անչար լինենք ես ու դու:

Այսօր գթանք իրարու,
Այսօր իրար չտանջենք,
Լինենք անչար և հլու,-
Հեկեկանք ու չամաչենք...

* * *

Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում
Ո՛րն է լավ, ո՛րը՝ վատ.
Ես սիրում եմ աչքերդ խոհուն
Եվ խոսքերդդ վհատ...

Ես սիրում եմ արտերը ոսկի
Եվ դաշտերը պայծառ,
Ես սիրում եմ խորհուրդն այն խոսքի,
Որ չասիր ու անցար...

Միայնակ՝ ես սիրում եմ նստել
Երերուն լույսերում,
Ես սիրում եմ երազ ու ստվեր.-
Ես իմ սերն եմ սիրում...

* * *

Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ,
Կուսական ամոթխած փայփայանքդ, որ իմ
Սև օրերն է օրրում խնդությամբ հնազանդ:

Խոսքերդ կարկաչող, որպես նուրբ մի զգեստ,
Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն,-
Քո հոգին չի սիրում մերկություն անհամեստ,-
Դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում:

Հեռավոր երկրի պես հմայող է հոգիդ,
Անուշ են խոսքերդ, ժպիտներդ աղջկա,-
Մանկական անպաճույճ երգի պես միամիտ,
Դյութական, որպես այն, որ չկա, որ չկա...

* * *

Սին խոսքերի մեջ, զվարթ ամբոխում
Շրջում եմ, բայց միշտ հեռու՛ եմ, չկա՛մ.
Ապրում եմ թաքուն և իմ հեզ հոգում
Աղոթք եմ անում ցնորք-աղջկան...

Հեզ հետ եմ, բայց միշտ հեռո՞ւն եմ, հեռո՞ւն,-
Ունեմ ես թովիչ մի առանձնարան,-
Հանգանք է այնտեղ և զոհաբերում -
Ով թախիծ, և՛ երգ, և՛ աղոթք նրան...

Եվ այնտեղ է նա,- ոչ այս աշխարհում,-
Մաքուր ու պայծառ պատկերը նրա.
Ես տառապանքս բախտ եմ համարում
Ու ծիծաղում եմ ձեր բախտի վրա...

*ԵՐԿՈՒ ՈՒՐՎԱԿԱՆ*

Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյութական,

Մենք մենակ ենք,- ես ու դու,
Ես էլ դու եմ՝ ես չկամ...

Չկան օրերն ահարկու,
Չկա ժամ ու ժամանակ,
Ուրվական ենք մենք երկու՝
Միշտ իրար հետ, միշտ մենակ...

Մոռացել ենք անցյալում
Տրտունջ, թախիծ ու խավար.-
Մի ուրիշ լույս է ցոլում
Մեղմ ու անուշ մեզ համար...

Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյութական,
Մենք մենակ ենք՝ ես ու դու,
Ես էլ դու եմ՝ ես չկամ...

* * *

Դուրսը ցուրտ է հիմա
Ե՛վ խավար, և՛ մրրիկ,
Այսօր մի՛ հեռանա,
Մոլորված իմ քույրիկ:

Մոլորված իմ քույրիկ,
Հոգնած ու մենավոր,
Դուրսը չար փոթորիկ,
Դուրսը մութ է այսօր:

Թող ցոլա մեղմորեն
Այս հուրը տխրաբոց,
Թող, որ մեղմ օրորեմ
Քո հոգին ալեկոծ:

Լուսեղեն այն խոսքով,
Որ այսօր ես գիտեմ,
Այն անուշ հրաշքով
Քո սիրտը կդյութեմ:

Մի կրակ լուսատու
Քո սրտին կնետեմ,
Որ հզոր լինես դու
Կյանքի և մահու դեմ:

Հեռավոր մի փարոս
Կվառեմ քո հոգում,
Սև կյանքի ալեկոծ
Խավարում ու միգում:

Դուրսը ցուրտ է հիմա
Ե՛վ խավար, և՛ մրրիկ,
Այսօր մի՛ հեռանա,
Մոլորված իմ քույրի՛կ:

* * *

Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր,
Կա քո հոգու մեջ անթափանց մի մութ,
Քո մութ հայացքում կա մի քնքուշ սուտ՝
Քեզ միշտ թաքցնող մի նուրբ վարագույր...

Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ,
Հավետ քեզ կապված՝ քեզ օտար եմ ես.
Երբ խենթ խնդությամբ փայփայում եմ քեզ,
Ե՛վ սիրում եմ քեզ, և՛ քեզ չգիտեմ:

Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ,
Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր.
Քո հոգու վրա կա մի վարագույր,-
Ո՞վ ես դու, ո՞վ ես,- բնավ չգիտեմ...

## *FATUM*

Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու.
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝
Օղակելով լույս աստղերը մեկ-մեկու:

Մեղմ գիշերի գեղագանգուր երազում՝
Այն աստղերը, որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին երազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան:

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար...

## *ՀՐԱԺԵՇՏԻ ԳԱՉԵԼ*

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ ես, բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ ես, ընկերներիս՝ մոտ ու հեռու,
Ոսոխներիս՝ չար ու արթուն, ասում եմ ես մնաք բարով:

Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս ոլորտում, ասում եմ ես մնաք բարով:

Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին
Արտույտներին ոսկե արտում, ասում եմ ես մնաք բարով:

Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն, ասում եմ ես մնաք բարով:

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով:

* * *

Օ՜, կգան օրեր ավելի տրտում
Ու դժնի, դժնի, առավել դժնի.
Կդառնա հանկարծ բոլորն ապարդյուն,
Օ՜, կգան օրեր ավելի տրտում:
Կլռե տրտունջն անամոք սրտում,
Եվ փոշու նման ձանձրույթը կիջնի...
Օ՜, կգան օրեր ավելի տրտում
Եվ դժնի, դժնի, առավել դժնի...

## *ՄԱԹԵՎՈՍ ՉԱՐԻՖՅԱՆ*

### *ԿԱՐԵԿՅՈՒԹՅՈՒՆ*

Պզտիկ աղջիկ մ'ինձի կըսե
Թե զիս խենթի պես կսիրե.
Պզտիկ աղջիկ մը զիս սիրե՜...

Գիշերն անհուն իմ աչքերուն
Երևի նա դեռ չէ տեսեր.
Պզտիկ աղջիկ մ'ինձի տա սե՜ր...

Երևի դեռ նա չէ նայեր
Հոգվույս խավար անդունդն ի վար.
Պզտիկ աղջիկ մ'ինձի սիրահա՜ր...
Եթե լսեր, թե ոչ մեկ սեր
Այդ անդունդին մեջ կշնչեր՝
Հեք պզտիկը չէ՞ր հառաչեր...
Ուստի եղբոր մը պես ըսի,
Թե լուսնի տակ մարդ կըմսի.





«Գնա՛, գնա, ննջե», ըսի.

Հետո գացի, հեռուն լացի...

## ԲԼՈՒՐԻՆ ՎՐԱ

Եկու՜ր, իմ աղվոր.

Այս գիշեր հո՜վ կա,
Լոկ հոս է անդորը,
Ահ, հավատա՛ որ
Հոգիս կը ցանկա
Ո՛չ թե լուսնկա՝
Այլ անդո՜ւնդը խոր,
Եկո՛ւր, իմ աղվոր,
Այս գիշեր հո՜վ կա...
Ծովը հեռավոր,
Տե՛ս, կը հեկեկա,
Այս գիշեր հո՜վ կա...
Քո՛ւյր, հավատա՛, որ
Հոգվույս մենավոր՝
Այս գիշեր մա՜հ կա.
Տե՛ս՝ կը հեկեկա
Ծովը հեռավոր...

Եկու՜ր, իմ աղվոր:

## ԱՆ ՉԷ

Հոգիս կը տանջե
Ջուքակ մը հեռու.
Իզուր շուքերու
Կը նայիմ - Ան չէ՜...
Ահ, նվագը՜ն այս խոր
Ամառ գիշերվան.

Կարծես թե կուլան
Աստղերը բոլոր...

Իզո՞ւր շուքերու
Կը նայիմ- Ան չէ՞,
Հոգիս կը տանջե
Հոգի մը հեռու...

## *ՀՈԳԻՍ*

Հոգիս պզտիկ աղբյուր մըն է արծաթե,
Գիշերին մեջ գլգլացող ու լացող,
Որ քեն չունի ժայռերուն դեմ, կ'աղոթե,
Ու լուսնակեն կը սպասե լոկ շիթ մը ցող...

Ո՛չ մեկ ուռի՝ ճամբուս վրա ամայի.
Կործանեցան բոլորը մեծ հովերեն.
Հոս-հոն ագռավ մը լոկ ջուրիս կը նայի՝
Բայց ես կ'երթամ գլգլալեն ու լալեն...

Ինչու որ, օ՜, գիտե՛մ, թե օր մը աղվոր
Պիտի գա Կույսըն, անտառներու խորերե,
Ու հակելով ջուրիս վրա մենավոր՝
Պիտի ափին մեջ մարգարիտնե՛րս համրե...

# ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԳԱՆ



## ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

* * *

Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արևի մասին:
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար -
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին:

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն՝
Արևանման, արնավառ խոսքի,-

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար -
Խոսքեր չկային, ու արև չկար...

## ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ցյունապատ լեռներ ու կապույտ լճեր:
Երկինքներ՝ որպես երազներ հոգու:
Երկինքներ՝ որպես մանկական աչեր:
Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն-
Զարթնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կարոտը այն հին, աստղայի՜ն, անհո՜ւն:

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն՝
Խառնելով հոգիս աստղային մութին...

## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Հիշո՞ւմ ես՝ ինչքան
Սիրում էիր դու
Այն լավ աղջկա
Աչքերը խնդուն,
Գգվանքները հեզ
Այն լավ աղջկա,
Որ սիրում էր քեզ
Ու հիմա չկա...
Հիշո՞ւմ ես՝ անգամ
Այն պահին ահեղ
Ժպիտով կարկամ
Նա դեմքիդ նայեց-
Եվ ասաց քեզ նա.
«Մի՛ լինիր տրտում,
Որ պայծառ մնա
Հուշս քո սրտում...»:

## ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՆ

Ջինջ ճախրում են ողողանջները հորիզոնից հորիզոն
- Ի՞նչ տրտում է, կապո՛ւյտ աղջիկ, հրաժեշտի երեկոն...

Տրտմություն ու լույս է իջել քո աչքերում, իմ հոգում.
Օրհնենք, օրհնենք այս երկրային հրաժեշտի երեկոն...

Եվ թող հալվեն, ծուլվեն, մարվեն իրիկնային կապույտում
Մեր կույս հոգու իրիկնային սպասումները տրտում:

Եվ զանգերը անրջորեն, հորիզոնից հորիզոն,
Օրհներգելով թող օրորեն հրաժեշտի երեկոն...

* * *

Լուսամփոփի՜ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՜ պես երազի,
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով.
Լուսամփոփի՜ պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում.
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեք գույն,
Որ չցնդի, չմարի՜ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՜ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՜ պես երազի,
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով.
Լուսամփոփի՜ պես աղջիկ...

* * *

Ինչքա՜ն աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս,
Այնքա՜ն աշխարհը անուշ ու ցանկալի կլինի:
Թե ուզում ես չսուզվել ճահճուտները անհունի,
Պիտի աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս:

Այնպես արա, որ կյանքում ոչ մի գանգատ չունենաս,
Խմի՛ր թախիծը հոգու՝ որպես հրճվանք ու գինի:
Որքա՜ն աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս,
Այնքա՜ն աշխարհը անուշ ու ցանկալի կլինի:

## *ՄՆՔՆՈՒԹՅՈՒՆ*

Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են ձիերը,
Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
Պայտերը խփում են, խփում են հողին.-
Անծա՜յր է գիշերը, անհայտ է ուղին:
Գնո՜ւմ են, գնո՜ւմ են, գնո՜ւմ են ձիերը,
Մոտիկ են, հեռու են, դոփում են պայտերը,

Պայտերը դոփում են քունքի՛ս մեջ հիմա.-
Անհա՜յտ է աշխարհը՝ անցնում է ու մահ...

* * *

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -
Մխում է սիրտս հիմա որբ, մխում է սիրտս բախտազուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

Եվ այս երգերը իմ կարմիր, ա՜խ, այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն-
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ա՜խ, այս երգերը կարմիր -
Իմ ավերակ, իմ ո՜րբ երկրում...

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս ավերակ -
Այնպես էլ սիրտս՝ անսփոփ, այնպես էլ սիրտս՝ անուրախ,
Վե՜րք է դառնում սրտիս խորքում օրերի փա՛յլը այս հրակ -
Ա՜խ, սի՜րտ իմ՝ բո՜րբ ու անսփոփ,- երկի՜ր իմ՝ ո՜րբ ու
անուրախ...

## ՎԱՀԱԳՆ

*Փրկությանդ արև՛ Վահագնին պեսար...*
*Հ. Հովհաննիսյան*

Հրդեհի աստված, հրդեհ ու կրակ,
Օ՜, Վահագն արի:- Տեսնում եմ ահա,
Որ ծիծաղում ու քրքջում են նրանք
Արնաքամ ընկած դիակիդ վրա:
Թե մի՞ֆ էիր դու... Եկան, երգեցին
Մի հին իրիկուն գուսանները ծեր,
Որ հզո՜ր ես դու, հրո՛տ, հրածի՛ն,
Որ դո՜ւ կբերես փրկությունը մեր,
Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի -

Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի...
Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր,
Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...

## ԱԹԻԼԼԱ
*(հայկական)*

Հե՜յ, արևմուտքից մինչև արևելք
Պիտի հրդեհեմ ու քանդե՜մ հիմա՝
Ես՝ արքա՜, աստվա՜ծ տե՛նդ, դերիք ու մահ,
Ես՝ ճշմարտության խարազանը մերկ:

Եվ քո՛ղ աշխարհի տերերն իմանան
Եվ խոր ըմբռնեն մի վերջին անգամ,
Որ եղե՛լ եմ ես, կլինե՜մ ու կա՛մ,
Ես՝ անհերքելի ու հավերժական...

Եվ քո՛ղ մարդկային ցեղերն առանձին
Հավիտյան հիշեն աղոթքում, երգում,
Որ խոտ չի՛ բուսնի, այլևս այն երկրում,
Որով անցել է Աթիլլի հին ձին...

Թող հիշեն նոքա, որ կամքս բռնի,
Քանդումի, հրի իմ ցնորքը հին,-
Երբեք չի՛ ցնդի, երբեք չի՛ մեռնի,
Ոչ ոք չի՛ հաղթի արքա Աթիլլին...

## ԳԱՉԵԼՆԵՐ

Ի՜նչ տրտում են զանգերը, քո՛ւյր, մայրամուտի,-
Զանգերը թաց ու ցողաբույր մայրամուտի...

Ահա կույսերը գնում են աղոթելու.
Սգահանդես, տրտում թափոր մայրամուտի...

Լուսամփոփի պես կախվել է երկինքը բիլ
Հոգուս վրա, օ՜, սուրբ անդորր մայրամուտի...

Իրիկուն է, քույր,- աչքերդ փակի՛ր,
Հոգնաբեկ, տխուր,- աչքերդ փակի՛ր:

Թարթիչներդ թող չթարթեն միգում.
Միգամած ու խոր աչքերդ փակի՛ր:

Կոպերիդ տակ թող երազս թաղեմ.
Իրիկուն է, քո՛ւյր,- աչքերդ փակի՛ր...

## *ՄՈՐՍ ՀԱՄԱՐ ԳԱՁԵԼ*

Հիշում եմ դեմքը քո ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին,
Լույս խորշոմներ ու գծեր, մա՛յր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դեմ ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մա՛յր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մա՛յր իմ անուշ ու անգին:

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,
Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե՞ մեռած,
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մա՛յր իմ անուշ ու անգին:

Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց-
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տխուր, և օրրում է քքենին
Տխրությունը քո անծիր, մա՛յր իմ անուշ ու անգին:

Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ
Քո ձեռքերի վրա ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին...

*ՏԱՂԱՐԱՆ*
*Արփիկին*

* * *

Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ.-
Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր բող չմնա՝
Դու չմրսես ձմռան ցրտում,- բոլորը քեզ, բոլորը քեզ...

* * *

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանն էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա:

Ուրիշ բլբուլ կգա, կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե - նա կասե վաղը.
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը -
Էշխը կրակ կըլի՝ արին կմնա:

Ուրիշ սրտի համար կհալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոզալը լաց կըլի, կընկնի արցունքը.
Գերեզմանիս մարմար քարին կմնա:

* * *

*(Հայաստանին)*

Հազար ու մի վերք ես տեսել - էլի՛ կտեսնես,
Հազար ու մի երք ես տեսել -էլի՛ կտեսնես,

Աշնան քաղած արտի նման հազա՞ր զոհերի
Չհավաքած բե՛ռք ես տեսել - էլի՛ կտեսնես:

Գլուխդ չոր քամուն տված պանդուխտի նման
Հազար տարվա հերք ես տեսել - էլի՛ կտեսնես:

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Հովնաթան-
Ինչքա՞ն հանճար, խելք ես տեսել - էլի՛ կտեսնես:

Քո Չարենցին լեզու տվող երկի՛ր Հայաստան,
Հազա՞ր ու մի ե՛րգ ես տեսել - էլի կտեսնես:

* * *

Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով-քամանչով,
Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը, ասին:

Սակայն երբ խալխի քեֆերին ես անուշ տաղերս ասի,
Ամառվա մրգերի նման անուշ է քո բառը, ասին:

Բայց խալխի անսիրտ քեֆերին ես տխուր, մենակ մնացի,
Ուզեցի թողնեմ հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին:

Եվ սրտիս ցավից հուսահատ ես մի քաս օղի խմեցի,-
Չարենցը ցնդած-գինեմոլ, հարբեցող-հիմար է, ասին:

Ու ձմռան բուքերի միջին ես բոբիկ ու մերկ մնացի.
Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մեջ ամառ է, ասին:

Ասի թե՝ մարդ եք ախար դուք, չե՞ք տեսնում մարմինս ծվատ.
Չարենցի հոգին տաղերում աննկուն, համառ է, ասին:

Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ,-
Դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին:

* * *

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նահիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր էլ լինեմ, չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛ռի անցի՛ր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

* * *

Երազում եմ այն Երկիրը հեռավոր,
Ուր մարմինը, սեգ մարմինը ու հոգին՝
Աննյութացա՛ծ ու նյութացա՛ծ, լուսավոր՝
Ողջակիզվեն արևի մեջ, քո՛ւյր իմ, կին:

Ու միանա՛ն սեգ մարմի՛նը ու հոգի՛ն...
Ու չլինի՛, ու չլինի՛ դու ու ես:

Աննյութացած - դու մարմնանաս - ու կրկին
Հրաշք դառնաս, անդունդները արևես...

Եվ երբ կանչեմ - դու գրկիս մեջ արևից
Ու տարփանքի՞ց, տառապանքի՞ց շիկացած -
Գրկես թևե՞րս մանկական ու անբիծ -
Ախ, կի՞ն-ցնորք, քո՞ւյր, Շամիրամ ու Աստվա՞ծ:

* * *

Քույր, գուցե չկանք...
Գուցե մեկը,- ո՞վ,-
Երազել է մեզ
Անուրջ գիշերով...

Թվում էր հոգուս,
Թե երկուս ենք մենք,
Բայց նայիր, հիմա
Դարձել ենք երեք...

Երկուսս էլ հիմա
Կանչում ենք նրան՝
Փնտրելով կորած
Ուղիները Տան:

Կամուրջներ չկան:
Իսկ գետը՝ վարար:
- Փնտրելով նրան՝
Փնտրում ենք իրար...

## *ՄԵՐ ԼԵԶՈՒՆ*

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին

Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դարերում հին:-

Եվ վարպետներ՝ խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր, որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,-
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ -
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրա ժանգ չչոքի:-

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն
Այլևս չի կարող լինել պատյան
Ո՛չ Տերյանի բարբառը նվագուն,
Ո՛չ Նարեկի մրմունջը մագաղաթյա:-

Եվ ո՛չ անգամ Լոռու պայծառ երգիչ
Թումանյանի բարբառը գեղջկական,-
Բայց նա կգա - լեզուն այս երկաթյա բերքի
Եվ խոհերի այս խո՜ր ու երկրակամ...

* * *

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում - լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ի՛նչ ցնորք ու խոհ -
Ո՛ղջը հավաքել և քե՛զ է տվել:-

Տվել է, որ դու այդ ամենը այս
Օրերին խառնած, խոր հավատքով լի՝
Պարզես գալիքի ցնորքին անհաս-
Եվ ընդմի՛շտ մնաս մեծ ու սիրելի:-

* * *

*Հ. Թ.*

Ես կարդում եմ նրան ու ասում.- Այս հմո՛ւտ, հանճարեղ Լոռեցին
Հոմերի, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝ նստել է քեֆի,
Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են առել՝ իրար հետ խնջույքի նստելիս:

* * *

*Հ. Թ.*

Նա մեծ էր հողո՛վ, արյունո՛վ:-Արմատնե՞ր ուներ նա հողում:
Իր երգերը - գեղջուկ նաիրցու քրտինքո՛վ էր նա ողողում:
Հանճարեղ երգերում նրա - իր երկրի արև՛ն էր շողում:-
Նա մեծ էր հողո՛վ, արյունո՛վ:- Արմատնե՞ր ուներ նա հողում:

*Հ. Թ.*

Նա մեծ էր ավելի, քան եղավ:- Երկնքի նման ընդարձակ,
Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր:-
Եվ ոգու ափերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ-
Եվ որսում էր երգեր ու խոհեր, և տեսնում էր չքնա՞ղ երազներ...

* * *

## *ԵՐԿՈՒ ՏՐԻՈԼԵՏ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ*

Մառ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում.-
Մեռնում է մութը մթնշաղում,-
Մառ մորմոքում է մայրամուտը:-
Մտորումներս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,-
Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրոտ է մաղում...

* * *

Մառ մորմոքում է Մայրամուտը,
Ու մգլահոտ է մովից մաղում,-
Մարում է մուժը մթնաշաղում,-
Մառ մորմոքում է Մայրամուտը...
Մխում է մարգը: Մարդը: Մութը:-
Մգլել է միրգը մեր մախաղում...
Մառ մորմոքում է Մայրամուտը,
Մուգ մգլահոտ է մովից մաղում...

## *«Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԽՈՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈ»*

### *«ՏԵՏՐԱՊՏԻՔՈՍ»*
### *Ա*

Ինչպես դարեր առաջ - վկան Նարեկացի,-
Քեզ եմ հղում ես ողբս, ո՞վ Արարիչ,
Ես՝ մեղավոր քերթողս աստվածարյալ դարի,-
Ողջակիզյալ արյունս վարակածին...

Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ,-
Ուր մեր Արևն է նոր սուզվում արյունալի,
Որպես կարմիր գլուխ գլխատվածի...

Քորք աչքերում սակայն հավատացյալ բյուրոց
Ծովածավալ արյան ցոլքը շառայլածին-
Ցոլանում է, իբրև ցոլք ցնծության մերոնց:-

Եվ արեգակն է հին վերադառնում դարձյալ՝
Արևմուտքից՝ ինչպես մահվան նաշից հառնած
Ղազարեի նման - արևը ետ դառնա...

## ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՜ն քնար.-
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի-
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անքոց մորմոքը նաիրյան իմ ո՜րբ հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
Ու լռության մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը իմ անլուր սիրտը բանտող:
Ու խանութները՝ գորշ, կքած, ու այն մարդիկ,
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ -
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա:
Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան -
Ու լուսավոր առավոտներն իմ հոգու
Ո՞վ դարձրեց մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտե՛ր երկու:
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհներգե ո՛չ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նաիրի...

Երբամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նաիրյան իմ երազի վերջին սիրով,-

Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ -
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեմ ի՛մ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛ղբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,-
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

## *ՀԱՐԴԱԳՈՂԻ ԾԱՄՓՈՐԴՆԵՐԸ*

*Սիրելի Վիվանին*

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու
Երկու ճամփորդ՝ պատառոտած շորերով:
Ու սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական կարոտներով ու սիրով:
Մենք սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական ինչ-որ կարոտ, ինչ-որ սեր:
Ու սիրում ենք առավոտից իրիկուն
Ճամփա երթալ ու հավիտյան երազել:
Աչքերիս մեջ մենք պահել ենք երկնային
Ճամփաների հեռուները դյութական -
Ու անցնում ենք ուղիներով երկնային,
Ուր բյո՜ւր մարդիկ երազեցին ու չկան:
Մշուշի պես մեր մանկությունը անցավ՝
Գորշ, անարև, անմխիթար մանկություն:
Զառանցանքի պես մանկությունը անցավ -
Ու հեռացանք: Ու չենք դառնա կրկին տուն:
Լո՜ւռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝
Երազելով հավերժական հեռուներ:
Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում -

Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր:
Ու օրերում բազմագույն ու բազմազան
Վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,-
Բայց աչքերը մեր - արևներ չտեսան
Եվ մեր սրտերը - լուսավոր հեռուներ:
Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան
Որոնեցին պատահական աչքերում
Հարդագողի ուղիները ոսկեման,
Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն:
Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
Ու սրտերում - արեգակներ ոսկեվառ
Ու բզկտվեց հայացքներից անկենդան
Որբ սիրտը մեր՝ երազորեն-հոգեվար:
Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.
Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու -
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի...
Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն,
Կապուտաչյա երջանկության առասպել.
Մի երկնային առնչության պատմություն-
Ու կարծրացավ սիրտս՝ անլույս ու անբեր:
Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,-
Ու խնդացին լուսավո՛ր մեր աչքերին,
Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ-
Ու հեռացան: Ու ո՛չ մի լույս չբերին:
Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,
Օտար մարդիկ հայհոյեցին ու անցան:
Միայն պոռնիկը մշուշում համբուրեց,
Եվ խելագարը բարևեց կիսաձայն:
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
- Մենք կժպտանք, գո՞հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք...

*ՆԱՎԶԻԿԵ*
*Արփիկին, Արփիկին, Իզաբելլային*
*Իմ ամենաչքնաղ երգը*
*Ե. Չար. 1936. 21.09*

*ՀԻՆ ՆԱՎԶԻԿԵՆ*

* * *

Նայադնե՞րի նման, նայադների նման
Կարոտներիս ձայնով կանչում է ինձ
Խոստանալով սիրո անհատնելի հմայք
Եվ թողնելով մորմոք և կարոտի կսկիծ...

Մանկությունից անդարձ՝ իմ օրերում անդարձ,
Տարիներիս կարմիր ավազի մեջ -
Ինձ թվացել է միշտ, որ կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն:

Նախ՝ կարոտի նման դեռ անծանոթ կյանքի,
Բիլ ծովերում նավող նավակի մեջ՝
Իբրև ցնորք գայթող կամ երազանք անգին՝
Հեռուներից կանչեց իմ Նավզիկեն:

Եվ օրերում ապա, տարիներում անդարձ,
Վայրկյաններիս կարմիր ավազի մե՛ջ,-
Երազեցի ընդմիշտ, թե կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն...

Մե՛րթ աղջկա նման, մե՛րթ մանկական տեսքով,
Մե՛րթ որպես կին՝ տեսած երազի մեջ,-
Մե՛րթ իբրև կույս անեղծ, մե՛րթ մի Մանոն Լեսկո-
Պատկերացել է ինձ իմ Նավզիկեն:

Մերթ սպիտակ, որպես մարմարոնյա արձան,
Մերթ միկենյան կավե մի վազի պես,-

Մերթ երենյա մարմնով եգիպտուհի դարձած՝
Հմայել է հեռվից իմ Նավզիկեն:-

Մերթ կոնքերով ողորկ, որպես ձուլած արծաթ,
Մերթ՝ որպես էգ մի օձ երազի քեզ՝
Մերկ, աչքերով կանաչ, մի կին դարձած,
Անեղծ մի կույս կարծած իմ Նավզիկեն:

Մերթ շորերով շրշուն, մերթ ծածկոցով ծածան,
Մերթ՝ լուսնային շղարշ հագածի պե՛ս,-
Ամբողջովի՛ն մերթ գոց, մերթ մերկացած՝
Կնությունը բացած- իմ Նավզիկեն...

Նա մերթ կանչել է ինձ սրինգային ձայնով,
Մերթ՝ քնարի քնքուշ նվագի պե՛ս,-
Մերթ՝ դարերո՛վ ծանոթ, մերթ՝ միայն նո՛ր
Ինձ հարազատ ձայնով - իմ Նավզիկեն:

Վերելքներում անձայն, հովիտներում այն ցած,
Կամ ծովափնյա ոսկե ավազի՛ մեջ,-
Մերթ շառաչում ծովի, մերթ լճերում, անձայն -
Ես լսել եմ քո քայլքը, իմ Նավզիկե՛:

Ես սպասել եմ քեզ յուրաքանչյուր վայրկյան,
Եվ երազել, որ երթս երազվի քե՛զ,-
Յուրաքանչյուր վայրում, յուրաքանչյուր վայրկյան,
Կնոջական ցնո՛ղք իմ, իմ Նավզիկե...

Ե՛վ հանճարեղ երգում, և՛ հանճարեղ գրքում՝
Ե՛վ հանճարեղ ամեն մի կտավի մեջ,-
Ե՛վ հյուսիսում, և՛ հին Արևելքում,
Ե՛վ հարավում դեղին, իմ Նավզիկե՛:

Շրջադարձում, երթում, քայլափոխում ամե՛ն,
Հսկող հսկա դեպքի կամ դավի պես,-

Ես սպասել եմ, որ կա՛մ դու, կա՛մ ես
Կճանաչենք իրար, իմ Նավզիկե՛:

Յուրաքանչյուր բացվող առավոտվա, կամ իմ
Յուրաքանչյուր տեսած երազի մեջ,-
Անգամ մի դուռ է երբ իմ դեմ բացում քամին-
Հանդիպումդ եմ հսկում, իմ Նավզիկե:

Մանկությունից իմ լուրթ-մինչև կեսօրն իմ թեք,
Իմ օրերում՝ անցած երազի պես,-
Ես սպասել եմ, որ ահա կելնես իմ դեմ,
Ամենօրյա ցնո՛րք իմ, Նավզիկե՛:

Եվ իմ գրքերն ամեն, և իմ երգերն անմեռ,
Եվ բորբոք հուրն իմ այս ծարավի կեզ,-
Ի՛նչ որ արել եմ ես, էլի՛ ինչ անելու եմ դեռ-
Քեզ գտնելու համար է, իմ Նավզիկե...

Եվ մինչ օրն այս սև, մինչև դառնա նսեմ,
Մինչև ավյունս ամբողջ նվազի- քեզ
Ես փնտրելու եմ իմ ուղիներում լուսե,
Անհասանելի՞ իմ սեր, իմ Նավզիկե՛...

Եվ պոտեի հռչակ, և՛ փառքի տենչ խորին,
Եվ արնահամ երգի, երազի սե՛ր,-
Ես տենչացել եմ՝ լոկ հավատալով, ով ինձ
Դեռ սպասում ես դու, իմ Նավզիկե...

Որ վարդերի՛ս անդարձ, տարիներիս հնձած-
Անդառնալի ցնդած երազի տեղ -
Իմ օրերի վերջում, իբրև անհուն ընծա-
Ինձ ժպտալու ես դու, իմ Նավզիկե...

Նայադնե՞րի նման, նայադների նման
Կարոտներիս ձայնով կանչում է ինձ

Խոստանալով սիրո անհատների հմայք
Եվ թողնելով մորմոք և կարոտի կսկիծ...

* * *

*Կնոջս՝ Արփենիկ Չարենցի հիշատակին*

Նայադնե՞րի նման, նայադների՞ նման,
Կարոտներիս ձայնով կանչեց նա ինձ,-
Նա խոստացավ սիրո անհատնելի հմայք
Եվ ինձ թողեց միայն մահո՛ւ կսկիծ...

Նաժիշտներով իր յոթ շրջապատված՝
Նաժիշտներով սիրո և ցավի կե՛զ,-
Իբրև հոժա՞ր կամքով մահապարտված՝
Ընդունեց սերն իմ սև - իմ Նավզիկեն...

Կարոտներիս ծովի կոզիներում անցած
Դու իմ կոզին եղար միակ ոսկե,-
Բայց սև աղետ դարձավ և մահացու հանցանք
Քեզ համար սերն իմ սև, իմ Նավզիկե...

Եվ վարդագույն, ինչպես մի վարդագույն մարջան,
Կարոտներիս կարմիր ավազի մեջ -
Դու ժպտացի՞ր, անցար, աներևույթ դարձար,
Օ՜, մահացու, իմ սեր, իմ Նավզիկե...

* * *

... Արդեն նայի՞վ դարձած նայադների նման,
Նայադների նման քնքուշ ձայնով՝
Խոստանալով գարուն ու գարնանային հմայք-
Այն ո՞վ է ինձ կանչում, այն ո՞վ...

Ինչպես Ուլիս՝ տրված կարոտներիս կայմին՝
Նայադների չքնաղ երգի՛ն գերի՝
Ամբողջովին տրված իմ հուշերի ձայնին,
Ես մոտեցա կրկի՛ն այն ափերին...

Մի՞թե կրկին իբրև վերադարձող Ուլիս՝
Մի անհնար, չքնաղ երազի մեջ-
Պիտի տեսնեմ կոզի՛ն այն, ուր սիրով լի՝
Ինձ հանդիպեց մի օր – իմ Նավզիկեն...

Նո՛ւյն նայադներն ահա - և կախարդիչ նույն երգը,-
Բայց ավելի՛ անհուն ու հմայիչ...
Եվ մոտենում է նույն կախարդական եզերքը՝
Բայց... ինչո՞ւ է թվում նա ամայի...

Նո՛ւյնն են ափերը լուրթ,- և պտույտի ելած
Նո՛ւյն աղջիկներն ահա,- և Նավզիկեն...
Բայց նա նայեց անթարթ և աչքերում ցոլաց
Անդառնալի անցածը - երազի պես...

Եվ սուզվելով, ինչպես մի վարդագույն մարջան,
Տարիների կարմիր ավազի մեջ՝
Անվերադարձ անցավ և զառացանք դարձավ-
Մանկությա՛ն պես անցած- իմ Նավզիկեն...

* * *

Նայադների՛ նման, նայադների՛ նման,
Կարոտներիս ձայնով կանչեցին ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք,
Եվ թողնելով միայն - մահո՛ւ կսկիծ:

Արկածներիս ծովի կզիներում անցած
Ինձ հանդիպեց քանի՛ Նավզիկե,
Որ հեռացավ, անցավ իր կարոտին կառչած
Իբրև ուրի՛շ Ուլիս, ուրիշ սեր...

Հեքիաթային, կապույտ իր եզերքին կառչած՝
Իբր ուրիշի սիրո մի Նավզիկե -
Իր Ուլիսին հսկող արքայադուստր դարձավ՝
Կարոտներիս կարմիր ավազի մեջ...

Եվ կարոտիս կառչած արքայադուստր կարծած
Քանի՞, քանի՞ չքնաղ Նավզիկե -
Ընկղմվեցին, կորան, որպես կարմիր մարջան՝
Կարոտներիս կարմիր ավազի մեջ...

Արկածներիս կապույտ կոզիներին կառչած՝
Վայրկյաններիս կարմիր երազի մե՛ջ՝
Մի՞շտ ուրիշի սիրո արքայադուստր դարձավ
Ինձ հանդիպած ամե՛ն մի Նավզիկե...

Բայց ուրիշի երկրում արքայադուստր դարձած
Իմ կորցրած ամեն մի Նավզիկե՝
Ինձ հանդիպեց կրկին և սիրուհի դարձավ-
Իմ երգերի կարմիր ավազի մե՛ջ...

Երազներում անվերջ երազելով նրանց,
Իմ կրքերի կարմի՛ր ավազի մեջ-
Ինչ որ մնում էր դուրս իմ երգերից գրած-
Իմ չսիրա՛ծ աղջիկ, տվեցի քե՛զ...

Տարիներում անցած իմ կարոտին կառչած՝
Իմ չերազած միա՞կ իմ Նավզիկե,-
Ուր սպասում էի – կորցրի նրանց՝
Երազներում սիրած, երազի պե՛ս...

Արկածներիս կարմիր կարոտներում փնտրած՝
Ինձ չժպտաց և ո՛չ մի Նավզիկե,-
Եվ ինչ տալու էի ես աշխարհում նրանց-
Իմ չսիրած աղջիկ, տվեցի քեզ...

Ինչ-որ դեռ դուրս մնաց իմ երգերում գրած՝
Իմ կրքերի կարմիր ավազի մեջ,-
Ինչ որ տալու էի ես նրանց-
Կյանքում քեզ տվի, իմ Նավզիկե՝:

Սակայն կրկի՞ն, կրկի՞ն նայադների նման,
Կարոտների ձայնով կանչում են ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք,
Եվ ինձ տալով միայն – մահո՛ւ կսկիծ:-

Ո՛չ, զգվանքներս՝ քեզ շռայլորեն ցրած՝
Գիշերներիս կարմիր ավազի մեջ,-
Ոչ կարոտներս անհուն՝ իմ երգերում գրած,-
Չսպառեցին կարոտն իմ, Նավզիկե՛:-

Նայադների՞ նման, նայադների՞ նման,-
Կարոտների կանչով կանչում ես ինձ,
Եվ կանչելու ես ինձ, քանի կյանքում դեռ կամ՝
Խոստանալով ինձ սեր, տալով կսկիծ...

Եվ կկանչեն նրանք, մինչև անշնչացած՝
Վայրկյաններիս վերջին երազի մեջ՝
Ինձ համբուրե իբրև իր Ուլիսին տենչած՝
Վերջին շնչիս կառչած, իմ Նավզիկե...

*ԱՍՊԵՏԱԿԱՆ*
*(հատված)*

*X*

... Ու մտան երկու գեղանի
Աղջիկներ հուր-հրեղեն...
Մոտեցան կլոր սեղանին,
Դրեցին գավաթներ հողե:
Ու ճկուն շարժումով մի պարե՝
Իրենց սեգ ողջույնը տվին...
Ուխտավո՛ր, նման մի արև
Մի՛ անգամ թող կյանքդ արևի:

*XII*

Երկու լույս էին վառ նրանք...
Երկու բոց՝ սպիտակ ու սև,

Երկու խոլ արև հուրհուրան,
Երկու հուր հրաշքներ լուսե...
Մեկի բոյը – սեգ մինարեթ,
Մյուսինը – սև՛ մի սոսի.
Մեկը վառ, պայծառ մի արև,
Մեկը կաթ, արծաթ մի լուսին:

*XIII*

Բեղվինի խարույկներ էին խոլ
Սևամած աչքերը մեկի,
Մյուսի աչքերը – տխուր
Միրաժներ էին անմեկին:
Մեկի կուրծքը մզկի՞թ էր սպիտակ,
Մյուսինը – սե՞գ մի տաճար.
Մեկը բիլ գազե՛լ էր կապուտաչ,
Մեկը հուր նժո՞ւյգ սևաչյա...

*XV*

Մեկը թիռ քայլում էր թեթև,
Թռչկոտում էր, որպես բիլ գազել...
Մյուսի քայլքն հրաթև-
Թռիչք էր դաշտերում ավազե...
Աշխարհում դեռ չի՛ երազել
Նման բախտ և ո՛չ մի արքա,-
Բայց այդ վառ բախտին տիրացել,
Տիրացել էր Անդոն չարկամ:

## *ԽՄԲԱՊԵՏ ՇԱՎԱՐՇԸ*
*(քաղվածք)*

Փողոցում լռություն էր ու թանձր խավար,
Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում-
Իսկ հյուրանոցում խմբապետ Շավարշը
Խմում էր, խմում ու մուժով լցվում:
Խմբապետ Շավարշը:- Մի հաղթ տղամարդ,

Երեսին՝ վերից վար՝ դաշույնի հարված.
Այդ հարվածն համարվում էր իր դեմքի զարդը՝
Մանավանդ, երբ դժգոհ էր ու մի քիչ հարբած:
Այդ հարվածն – ու բեղերը: - Դեղին, ոլորած,
Երկու խուրձ հրեղեն, երկու առու,
Որ, ծանր, իջնելով կզակի վրա՝
Նրան տալիս էին «քաջի» համարում:
Եվ մռայլ աչքերը՝ բիբերում արյուն,
Եվ խիտ հոնքերի գերանդին...
Նա իրեն համարում էր - անհաղթ արու,
Որպես հրաշք՝ ելած հայ ցեղի արգանդից:

Այն ի՞նչ էր, ի՞նչ էր, ի՞նչ էր, ցնո՞ղք էր,
զառանցա՞նք, տե՞նդ.
Խենթի պես, նրանց դիակների վրայով, քշեց իր ձին,
Այրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց,
Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի:
Կոտորեց. չհարցրեց ծեր, կին, աղջիկ, մանուկ,-
Միչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց.
Հետո լուսինը կարծես արյան մեջ էր լողանում,
Իսկ գյուղը դիակ էր կարծես՝ կապված իր ձիու ասպանդակից:
Ուղեղում մշուշ էր՝ կարմիր, ալ, արյունարբու,
Ուղեղում թուրք կնոջ մարմինը վառվում էր, որպես վերք.
Հետո հարբեց Շավարշը. գայլը արյունով է հարբում,
Իսկ Շավարշը – մի գայլ էր, որ կորցրել էր մի էգ-
Մի սպիտակ, մի մաքուր, մի հրաշալի...
..... Շավարշը
Բռունցք խփեց սեղանին. խմեց. և երբ
Սրբեց բեղերը բռունցքով, հիշեց իր ձիու բաշը,
Իսկ Ղաչաղը երգում էր դեռ:

## *ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՎ*
*(քաղվածք)*

Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝

Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար,
Հին դարերից մինչև այս հանճարեղ ներկան,
Որ հուրհրատում է մեր դեմ գալիքնափայլ:
Այն անգո առավոտից, երբ լեգենդական
Իր խարույկն էր վառել մեր անգո նախահայրը,
Այս Մասիսի հանդեպ, այս անհիրական
Արարատյան դաշտում,- որպես զրույց անծայր մի
Տարածվել է ուղին մեր անպատմելի,
Անծայրածիր ձգվել դարերով ձիգ,
Եվ գնում է այսօր ու երկարվում էլի
Դեպի ի՞նչ անհայտ ափեր ու գալիքներ անծիր...

...Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Զարմանալի՞ թեթև, զարմանալի՞ անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ...
Այդ մե՛նք ենք երևի այն ուղտը հաստակող,
Որ Հիսուսի առակին հակառակ -
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ...
Այդ մե՛նք ենք երևի այն հարուստը,
Որ անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ -
Պիտի ժառանգենք մեր դարերի կորուստը,
Որ բոլո՞ր տկլորներին սահմանված է վերուստ...

*ԴԵՊԻ ԼՅԱՌՆ ՄԱՍԻՍ*
*Ակսել Բակուցին, պայծառ բարեկամիս*
*(հարված)*

Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում.
Զուր չէ՞ արդյոք վատնել անհատնելի իր ձիրքը.
Եվ չի՞ արդյոք եղել իր ողջունած հեռուն
Մի թիարան վատթար,- և այդ գիրքը՝
Իր արյունով, սրտի յուրաքանչյուր նյարդով,
Իր վերջին ճիգով հորինած-
Չէ՞ արդյոք խեղճության ու սխալի արդյունք՝

Սերունդների երթին ի վնաս...

Վաղուց են չարաշուք այդ խոհերը խոցել
Անօգնական իր սիրտը,- սակայն ամեն անգամ
Հենց որ հանել է գիրքը և կարդացել-
Ինչ-որ անհուն մի բան,
Զարմանալի մի բան՝ կարոտի
Ու թովչության նման անհասկանալի -
Ողողել է իր սիրտը և կոկորդում
Իբրև արցունք՝ հորդել... օ՜, անձկալի,
Ժամեր միայնության, ընդվզումի, խոհի,
Ոգու ըմբոստության ու կորովի,-
Ստեղծագործ մտքի թռիչք ամեհի՝
Ճգնության պես անցուկ ու թովիչ...

*ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ*

*Առաջաբան*
*(քաղվածք)*

Վաղո՜ւց, վաղու՜ց մտորում էի իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղո՜ւց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, երբ ես զբաղված եմ լինում առօրյա հոգսերով, կամ անգամ, երբ ես տարված եմ լինում գինու կամ կնոջ հմայիչ հաճույքով,- ներսը, սրտիս խորքում, գողի պես զգույշ, կամացուկ շարժվում է նա:

Ինչպես վաղուց տրված մի խոստում, կամ ինչպես ժամանակին չվճարված պարտամուրհակ – ծանրանում է սրտիս, անողոք – ուտում է սիրտս:

Հաճախ պատկերանում է նա ինձ, որպես մի վաղեմի բարեկամ. վաղեմի ծանոթի մի նման, որին ես շատ առաջ եմ հանդիպել, բայց կորցրել եմ հետո – օրերի մշուշից ելնում է նա

հաճախ, օրերի մշուշից նայում է ինձ: Երկար-երկա՜ր նայում է աչքերիս: Ասում է՝ չե՞ս ճանաչում: Մոռացե՞լ ես,- ասում է նա: - Ու սահում է էլի, թաղվում է օրերի մշուշում – կորչում է օրերում:

Բայց ո՞վ է նա, կամ ի՞նչ է նա - ահա ամենաէականը: Գուցե մեծ լինի զարմանքդ, սիրելի ընթերցող, եթե ասեմ, որ ես էլ չգիտեմ: Գիտեմ, որ նա - կա, եղել է, և հիմ է, որպես իմ արյունն է - հիմ, կա,- զգում եմ, շոշափում եմ սրտով, տեսնում եմ,- բայց հենց որ ուզում եմ բռնեմ, տեսնեմ մարմնավոր, կանգնեցնեմ հաստատ,- կորչում է, դառնում է աներևույթ, ցնդում է, որպես ծուխ կամ ցնորք:

Գորշ, ամենօրյա, առօրյա մեր կյանքում, կենցաղում, մորմոքում է նա մութ, աներևույթ, կանչում է - ո՞ւր... Երբ, իրիկնադեմին, մեղմ, հատ-հատ ղողանջում է զանգը հին, խարխուլ զանգակատնից- կանչում է նա: Ո՞վ է լսում: Ով էլ որ լսում է - շա՞տ բան է հասկանում: Ես էլ, որ մանկությունից լսել եմ նրա կանչը – շա՞տ բան եմ հասկացել: Բայց էլ ինչո՞ւ է խեղդում ինձ, ինչո՞ւ է կարոտը խեղդում: Ինչո՞ւ է կանչում – մտերիմ, կանչում-անվերջ: Եվ ես ինչո՞ւ եմ ուզում, ինչո՞ւ եմ կամենում փնտրել, գտնել նրան, խոսել նրա հետ – սրտով, սիրել նրան:

- Ինչքան, ինչքան անգամ հարցրել եմ ես ինձ, թե ի՛նչ է, վերջապես – Նաիրին: Գուցե տարօրինակ թվա այս հարցը, սիրելի ընթերցող: Բայց դա նույնքան է բնական, որքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք, վերջապես – նաիրցիներս: Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը:

Ամեն անգամ, երբ նման հարցերը կերել են սիրտս, մեկը, մի ուրիշը կարծես, ուրվականի նման ելնելով օրերից, օրերի մշուշից, տվել է ուղեղիս չարախնդ մի հարց.- «Չէ՞ր կարելի արդյոք տեսնել մարմնավոր, պատկերացնել հաստատ երկիրը Նաիրի: Նու, թեկուզ հենց իրենց՝ նաիրցիների կյանքում, կենցաղում: Շոշափել այդ երևույթը – նաիրյան սրտով, շոշափելով մարմնավոր, պատկերել երկրային... Գուցե սուտ է Նաիրին, Նաիրին- չկա... Գուցե հուշ է միայն, ֆիկցիա, միֆ: - Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...»

## *ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ*
## *ԱԼՊԻԱԿԱՆ ՍԱՆՈՒՇԱԿ*
*(հատվածներ)*

* * *

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:

* * *

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: Ո՛չ մի երկաթյա դուռ և ո՛չ մի պահակ աշտարակի գլխին:

* * *

Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հոկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները:

* * *

Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը՝ կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ:

* * *

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

*ՄԻՐՀԱՎ*
*(հատված)*

Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը:

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տրխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը:

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ:

*ՄԹՆԱՁՈՐ*
*(հատված)*

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:

Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնկային մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիններ ժողովում:
Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում: Գուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտերն են գոյացել և շերտերի վրա պահել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքեր:
Հիմա էլ Մթնաձորում մուգ կանաչ մաշկով խլեզներ կան՝ մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող: Պառկում են քարերի վրա, արևի տակ. ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը թույլ երակի պես, կարող եք բռնել նրանց: Խլեզները Մթնաձորում մարդուց չեն փախչում:

## *ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ*
## *ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ*

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,-
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր, ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր,
- Ի՜նչ թարմություն,- ասացին,- ի՜նչ թարմություն,- ու բացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով.
Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,

Քաղաք իջել լեռներից՝ կանցներ զմրուխտ հեքիաթով...
Երկրեերկիր շաղ տալով կակաչներն իր ձեռների,
Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների:

## *ՄԱՅՐՍ*

Մեր հույսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրորոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս,
Մեր հերն ու մերն է մայրս,
Մեր ճորտն ու տերն է մայրս,
Մեր տան անշուքն է մայրս,
Մեր վեհաշուքն է մայրս,
Մեր տան անտունն է մայրս,
Մեր արծվաբույնն է մայրս,
Մեր տան ծառան է մայրս,
Մեր տան արքան է մայրս,
Մեր տան պուճուրն է մայրս,
Մեր հացն ու ջուրն է մայրս,
Մեր տան անճարն է մայրս,
Մեր դեղ ու ճարն է մայրս,
Մեր տան աղբյուրն է մայրս,
Մեր ծարավ քույրն է մայրս,
Մեր տան անքունն է մայրս,
Մեր անուշ քունն է մայրս,
Մեր տան ճրագն է մայրս,
Մեր արեգակն է մայրս,
Ախ, մեր տան Սիսն է մայրս,
Մեր տան Մասիսն է մայրս,
. . . . . .
Մայրս, մեր հացն է մայրս,
Մեր տան աստվածն է մայրս...

* * *

Մայրս փոքրիկ, մայրս խեղճ,
Մայրս մի մայր հասարակ,
Մայրս այս մայր երկրի մեջ
Արևի դեմ մի ճրագ:

Բայց արևի լույսի տակ,
Երբ ցավեր եք ինձ բերում,
Սրտիս մռայլն անհատակ՝
Այն խեղճ ճրագն է ցրում:

Մայրս փոքրիկ, մայրս խեղճ,
Մայրս մի մայր հասարակ,
Մայրս՝ մի բուռ սրտիս մեջ՝
Գիշեր ու զօր արեգակ:

***

Ձյուն է իջնում, կուտակվում
Մորս վրա վերևից,
Ասես փետուր է թափվում
Հրեշտակի թևերից:

Գերեզմանի այս հեռվում
Մեղմ դիզվում է թախծալից,
Մորս վրա մարմարվում՝
Շիրմաքար է թվում ինձ:

Այնպես մեղմիկ է դնում
Աստված փաթիլ փաթիլին,
Որ չցավի՝ ողջ կյանքում
Մորս ցաված սիրտը հին:

Փաթիլվում է մեղմաձյուն,
Մարմարվում է մեղմաքար,
Աստված ինքն է ստեղծում
Մորս վրա շիրմաքար:

## ԻՄ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Իմ սո՛ւրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից՝ թե սիրտս ճեղքես՝
Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:

Չեմ ուզում գոռալ իմ սիրո մասին,
Սակայն, իմացի՛ր, հայրենի՛ք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:

Ես ամբողջովին քոնն եմ, հայրենի՛ք,
Եվ մոմի նման ճամփեքիդ վրա,
Քո փառքի համար թե մի օր վառվեմ,
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա:

* * *

Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:

Աղբյուրների պես աղջիկները գան՝
Ես ծարավ սրտով չնայեմ նրանց,
Տուն կանչե մորս ձայնը իրիկվան
Չպոկեմ սարից աչքս կարոտած:

Եվ նստած լռին այդ քարի վրա՝
Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա
Եվ մամռած նայե իմ Արարատին:

## ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

* * *

Ձորից եկավ ինչ-որ ճիչ,-
Պախրան ծնում է:
Մութը մաշվում է քիչ-քիչ,
Աստղը քնում է:

Սարը լույսի լուրն առել,
Կանգնել-մնում է:
Անտառն արդեն քունն առել,
Բայց դեռ լռում է:

Գետն ինձ խորհուրդ է տալիս.
- Գործդ մնում է,
Ժամանակը չի գալիս,
Թողել-գնում է:

Ձորից եկավ ինչ-որ ճիչ-
Պախրան ծնում է:
Մութը մաշվում է քիչ-քիչ,
Աստղը քնում է:

## ՄՆՁՐԵՎ

Ամպը կախվել է ամպից,
Ամպամած օր է.
Վերը երկինք է մթին,
Ներքևը՝ ձոր է:

Ինչ-որ տագնապ է ձորում,
Ինչ-որ սարսուռ է...
Ուշաթափվել է առուն,
Եվ ուռին լուռ է:

Հավքը թևերն ամփոփել,
Կարծես մրսում է,
Ո՞ւմ և ինչո՞ւ, չգիտե,
Բայց սպասում է:

Քամին քարայրն է մտել,
Փշաքաղվել է,-
Քարայրի հոնքը ծռվել,
Աչքը շաղվել է:

Շանթը զարկել է ամպին...
Ա՜խ, վիրավոր է,
Արյունաքամ կլինի
Ամպը ուր որ է:

*ԼՈՒՍԱԲԱՑ*

Լույսը առավ սարին,
Սարսռում է սարը,-
Սարերը վեր թռան:

Հավքն արթնացավ ծառին,
Սարսռում է ծառը,-
Ծառերը վեր թռան:

Քարայծն ելավ քարին,
Սարսռում է քարը,-
Քարերը վեր թռան...

Եվ ինձ մի պահ թվաց՝
Քարերի տակ քնած
Դարեր վեր թռան:

## ՊԱՊԸ

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը:
Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է
Եվ բոլոր կամերը
Մեն-մենակ քարել է:
Ջրել է իր այգին
Ու մարգը բահել է
Եվ արդար քրտինքով
Իր տունը պահել է:
Իմ պապը վարել է,
Իմ պապը ցանել է,
Իսկ հնձի ժամանակ
Ձեռքի մեջ մանգաղի
Դաստակը ցավել է:
Իմ պապը հողի հետ
Խորհել ու խոսել է,
Ամպի հետ արտասվել,
Ջրի հետ հոսել է...
Մի օր էլ, երբ հանկարծ
Ծալվել են ծնկները,
Ձարմանքից քարացել,
Ամոթից շիկնել է:
Թողել է նա մանը
Եվ շունչը պահել է,
Եվ հետո քրտինքը
Ճակատին պաղել է:
Եվ պապը ակոսում
Պառկել ու քնել է,
Խառնվել այն հողին,
Որ իրեն սնել է:

## ԵԶԸ

Մի մեծ գերդաստան նրա հույսին էր,
Գարունը բացվեր՝ լուծը ուսին էր,
Ճակատին շարմաղ լիալուսին էր,
Եզն այսպիսին էր:

Եզը գութանի գութն ու գրգիռն էր,
Ոգու կորովն ու արյան թրթիռն էր,
Ուղեծիր հանող նրա հրթիռն էր...
Ճակատագիրն էր:

Եթե բախտը կար, եզը միջուկն էր,
Օջախի ծուխն էր, նախրի շուքն էր,
Նա շինականի միակ նեցուկն էր,
Նրա բազուկն էր:

Երբ որ ճիպոտը կողին շաչում էր,
Նա ինքն իրենից բուսնում, աճում էր,
Ինքն իրեն տիրում ու նվաճում էր,
Եզ էր, քաշում էր:

* * *

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ
Հողի մեջ այսքան օրհնություն չկա,
Այսքան վաստակած հոգնություն չկա,
Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ՝ արև,
Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի
Ուսերին հենված Սասնա տուն չկա:
Ախր ուրիշ տեղ
Ամեն մի քարից, առվից, ակոսից
Իմ աչքերով իմ աչքերին նայող
Մանկություն չկա...

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

* * *

Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,
Հայաստան ասելիս թևերս բացվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:

* * *

Գարունդ հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում ջրերդ:

Հավքերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Հայերեն են տոկում գրերդ:

Արևդ հայերեն է ծագում,
Ծառերդ հայերեն են ծաղկում,
Հայերեն են պայթում բառերդ:

Հունդերդ ծլում են հայերեն,
Ձեռքերդ կռում են հայերեն,
Հայերեն են լռում քարերդ:

Ձորերդ հայերեն են շնչում,
Ձոհերդ հայերեն են ննջում,
Հայերեն են տանջում ցավերդ:

Որքան էլ ձեռից գնացել,
Դու էլի հայինն ես մնացել,
Հայերեն են հառնում սարերդ:

Թող Աստված եղածը պահի,
Եվ հետո ինչ էլ պատահի,
Ձյուներդ հայերեն են լալու,
Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ:

## *ՏԱՐԻՆԵՐՍ*

Տարինե՜րս, տարինե՜րս,
Ո՞ւր մնացին տարիներս,
Կանաչ-կարմիր,
Սև-սպիտակ տարիներս,
Իմ սառն ու տաք,
Ծուռ ու շիտակ
Տարինե՜րս, տարինե՜րս:

Ո՞ւր գնացին խեղճ ու կրակ,
Ոտաբոբիկ տարիներս,
Իմ թևավոր, իմ թևաբեկ
Տարիներս,
Իմ սիրավոր,
Իմ ձիավոր,
Տարիներս ո՞ւր մնացին:
Որքան ցավեր տվին, առա՛ն,
Որքան սևե՛ր, սևե՛ր, սևե՛ր,
Տարինե՛րս, տարինե՛ր:
Որքան չասված խոսքեր տարան,
Որքան չասված սերե՛ր, սերե՛ր,
Տարիներս:

Ո՞ւր գնացին, ինչպե՞ս անցան
Քար քրքրող, երկինք խմող
Տարինե՛ր, տարինե՛ր,
Այս ինչքա՛ն շուտ վրա հասան
Իմ ցուպավոր,
Ասուպավոր տարիներս:
Մեն մի օրով հավաքվեին, գային, գային
Եվ աճյունիս վրա լային
Իմ բախտավոր,
Աղետավոր տարիներս,
Կանաչ, կարմիր, սև, սպիտակ-
Ապրած բոլոր
Տարինե՛ր, տարինե՛ր:

## *ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ*
## *ՆՈՐՕՐՅԱ ԱՂՈԹՔ*

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՛տ եմ վախենում

Բյուրավոր ու բո՛ւթ հավատացյալից,
Բյուրատեսք ու սո՛ւտ հավատացյալից:
Եթե աստված եք՝
Փչեցե՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,
Հանգցրե՛ք նրանց ջահերն այլազան,
Որ... եղիցի՞ լույս:
Եվ ո՞չ մի գավթում մի՛ ընդունեցեք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացված է:
Մերժեցեք նրանց զո՛հն էլ խոստացյալ,
Որ... զոհ չգնա ինքը հավատը՝
Մաքո՞ւր-վսե՞մը,
Անկե՞ղծ-անսո՞ւտը:
Ու թե աստված եք՝
Ամուր փակեցեք ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց՝
Անգի՞ր-ինքնահո՞ս-հաշվեկշռվա՞ծ այն աղոթքների,
Որով խաբում են ո՛չ իրենց,
Այլ ձե՞զ:
Եվ - բավակա՞ն է - հասկացե՛ք ընդմիշտ,
Որ աստծուն նո՛ւյնիսկ հայհոյողները
Շատ ավելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացրել է ինքը հավատը՝
Խոցվա՞ծ-արյունո՞տ,
Այրվո՞ղ-ապտակվա՛ծ,
Ցավա՞ծ-ճչացո՛ղ,
Մանո՛ւկ հավատը,
Որ հայր դառնալու համար է ծնվել:
Ու եթե հայր եք՝
Մի՛ թողեք
Որ սուտ հավատացյալներն սպանեն նրան:
- Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է ավելի...

## ԴԱՐԱԿԵՍԻ ՀԻՄՆԸ
*(հատվածներ)*

Առաջներում մերպեսներին
Այրում էին խարույկի մեջ...

Հիմա պիտի խարույկ վառենք մենք ինքներըս,
Խարույկ՝ մեզնո՛վ:
Աղը կրակ է հանգցնում:
Բայց մենք պիտի մեր կրակով աղն էլ վառենք,
Որ ավելի բոցավառվենք,
Այնպե՛ս վառվենք,
Որ չմնա նույնիսկ մոխիր ու մնացորդ...

Կան խայտառակ ժամանակներ,
Երբ մարդ եթե իր բերանին կապ չի դնում,
Ապա նրա ձեռք ու ոտքին
Ուրիշներն են դնում կապանք:

Մենք մեր լեզվի կապն ենք կտրել,
Որովհետև, ճիշտ է, լեզուն չունի ոսկոր,
Բայց կարող է... ոսկո՛ր ջարդել,
Նաև կապա՞նք ձեռք ու ոտքի:
Մենք, որ մարդ ենք ծնվել մորից,
Ո՛չ, չենք ուզում դառնալ ընձուղտ,
Որ վիզներս չերկարացնենք
Դեռ չեղած ու չլինելիք
Բան տեսնելու հիմար հույսով:
Մենք չենք ուզում ընձուղտ դառնալ
Որ մեր մաշկին անհուր աստղեր չդաջոտեն՝
Մեզ դարձնելով մի սուտ երկինք:
Եվ չենք ուզում ընձուղտ դառնալ,
Որովհետև ընձուղտ կոչված այդ վիթխարին
Ո՛չ մի անգամ ամբողջ կյանքում
Ձայն ու ծպտուն չի՛ արձակում...

## ՄԱՐԴ ԷԼ ԿԱ, ՄԱՐԴ ԷԼ
*(հայկական)*

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...

Դու, որ սխալվել, սակայն չես ստել,
Կորցրել ես հաճախ, բայց նորից գտել.
Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,
Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել,
Այլ մագլցել ես կատարից կատար,
Ելել ես անվերջ, բարձրացել ես վեր՝
Քո ահեղ դարից առնելով թևեր...
Ելել ես, որ ողջ աշխարհը տեսնես,
Որ անօրինակ քո դարը տեսնես,
Բոլոր կեղտերով դու նրան զգաս,
Շահածով խնդաս, կորուստը սգաս...
Ելել ես իբրև նրա մունետիկ,
Որ նրա հեռուն զգաս քեզ մոտիկ,
Որ ճշմարտության ափերը տեսնես,
Ծպտված ստի խաբելը տեսնես,
Որ չվախենաս, որ չվարանես՝
Անարդարության դեմքը խարանես...
Ահա թե ինչու դու այսքան տարի,
Դու, որ հարազատ ծնունդն ես դարի,
Քայլում ես անդուլ, առաջ ընթանում,
Քայլում ես այնպես ծանր ու վիթխարի,
Ասես աշխարհն ես շալակած տանում...

Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում,
Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի...

## ՄՈՐ ՁԵՌՔԵՐԸ

Այս ձեռքերը՝ մո՞ր ձեռքերը,
Հինավուրց ու նո՞ր ձեռքերը...

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Պսակվելիս ո՞նց են պարել այս ձեռքերը՝
Ի՞նչ նազանքով,
Երազանքո՞վ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնվել,
Նրա արդար կաթով սնվել:
Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը
Ծով լռությա՞մբ,
Համբերությամբ:
Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Երկինք պարզված սյուն են դառել այս ձեռքերը,
Որ չփլվի իր տան սյունը՝
Որդին կռվից դառնա տունը:
Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը՝
Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,
Այս ձեռքերը՝ ուժը հատած,
Բայց թոռան հետ նոր ուժ գտած...

Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...
Ինչե՞ր, ինչե՞ր, ինչե՞ր չարժեն այս ձեռքերը՝
Նո՞ւրբ ձեռքերը,
Սո՞ւրբ ձեռքերը:

... Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար
Մեզ աշխարհում ծնած-սնած,

Մեզ աշխարհում շահած- պահած,
Մեզնից երբեք չկշտացած,
Փոշի սրբող-լվացք անող,
Անվերջ դատող-անվերջ բանող
Ա՛յս ձեռքերը,
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար մետաքսի պես
Խա՜ս ձեռքերը:

## *ՄԻԱՆԳԱՄԻՑ*

Ասում են, թե միանգամից կյանքում ոչինչ չի կատարվում.
Միանգամից ոչ մի կարպետ և ոչ մի գորգ չի պատռվում,
Միանգամից բերդ չի շինվում ու չի քանդվում միանգամից,
Միանգամից ձյուն չի գալիս, և չի փչում անգամ քամին:

Միրգ չի հասնում միանգամից, ուր մնաց թե՝ խելոքանան,
Զույգ չեն կազմում միանգամից, ուր մնաց թե՝ երեքանան:
Միանգամից չեն կշտանում և չեն զգում ջրի կարիք,
Ոչ այսօրն է անցյալ դառնում, ոչ էլ վաղն է դառնում գալիք:

Այս ամենը ճիշտ է, հարկավ,
Հենց այսպես է, ինչպես որ կա:
Սակայն եթե իմ կյանքի մեջ գեթ հարցնեն մի անգամ ինձ,
Թե ես ի՛նչ եմ գերադասում,
Ի՛նչ եմ ուզում
Ու երազում,
Ես կասեի.
- Ինչ լինում է՝ թող որ լինի միանգամից...

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ԵՎ ՃՇԳՐԻՏ ՍԱՐՔԵՐԻՆ

Հաշվո՛ւմ եք, հաշվո՞ւմ...
Հաշվեցե՛ք հապա,
Թե ի՛նչ ալիքով, քանի՛ վայրկյանում
Եվ քանի՛ գրամ արյուն է հոսում աղջկա սրտից
Դեպի ամոթխած այտերը նրա՝
Առաջ բերելով ա՛յն բռնկումը ջերմամիջուկյան,
Որ մինչև այսօր, միամտաբա՞ր, շիկնանք ենք կոչել:
Եվ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում
Մեր մթնոլորտված աչքերի միջով,
Երբ հանկարծակի նրանք դիպչում են ուրիշ աչքերի,
Եվ այս փոխադարձ ճառագայթումը
Վտանգավո՞ր է մեր սրտի համար,
Թե՞ օգտակար է:

Բարեկամաբար ասացե՛ք նաև.
Քանի՞ տարին մեկ աշխարհ է գալու
Ա՛յն անդերեսյան մանուկը,
Որից
Թագավորները պիտի իմանան,
Որ մերկ են իրենք:
Եվ խնդրեմ՝ նաև ավելացրե՛ք.
Այդ իմանալով՝
Թագավորները
Ծածկո՞ւմ են արդյոք մերկությունն իրենց,
Թե՞ շարունակում կրկին մերկ մնալ
Եվ հակառակը կամեցողներին
Կամ թե պարզապես ամաչողներին
Հարկադրում են
Աշխարհում ապրել կապվա՞ծ աչքերով...

Եվ ասե՞ք գուցե,
Թե բեթհովենյան խլությունն արդյոք
Չի՞ կապվում բնավ
Այն ահագնացող պայթյունների հետ,
Որ կատարվում են հիմա աշխարհում
Եվ վե՜ր աշխարհից:
Ու թե կապ ունի, խնդրե՜մ, պարզեցե՛ք.
Աշխարհը հիմա
Անթիվ-անհամար բեթհովեններո՞վ կըերջանկանա,
Թե՞ կավելանա պարզապես թիվը խլացածների...

Հաշվեցե՛ք նաև, մի վերջի՜ն անգամ,
Թե այդ ի՛նչ ձևով,
Ի՛նչ մեքենայի օգնությամբ բարի
Դեռ կարելի է մարդո՛ւն մարդ պահել
Եվ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել Մա՜րդ...

*ՊԱՐԱՊՈՒԹՅՈՒՆ*
*(հայկական)*

Նո՛ւյն վայրկյանին
Ես հիշեցի հանկարծ, որ առավոտ կանուխ
Բեռնամեքենայով ձիեր էին տանում,
Հասկանո՞ւմ եք, այո՛,
Չե՞ք հասկանում:
Այո՜, ձիե՜ր՝
Նրա՜նց,
Որ բյուրավոր դարեր
Իրենց մեջք ու թամբով ամե՜ն ինչ են տարել,
Ողջ մարդկային ցեղի պատմությունը կրե՛լ
Իրենց սմբակներով պատմությունն այդ գրե՜լ,
Նրա փոշին սրբել իրենց պոչո՛վ:
Ահա նրանք,այո՛, բեռ են դարձել հիմա
Այս քո փոշտացող մեքենայի համար,

Որ և այսօր, խնդրեմ, քո դարավոր
Փոխադրականդ է փոխադրում...

Բեռնամեքենայի թափքում՝ ձիե՛ր,
Վախից կծի՛կ դարձած, դողդողացո՛ղ ձիեր,
Ամեն շրջադարձի ու կեռման վրա
Մե՛զ պես (մարդո՛ւ նման) ճկվո՛ղ-թեքվո՛ղ,
Մե՛զ պես (և ավելի՛) զգուշացո՛ղ ձիե՛ր:
Ես ձեզ այս վիճակից ինչպե՞ս հանեմ, ձիե՛ր:
Լացս զսպեմ ու ձեր... ցա՛վը տանեմ, ձիե՛ր...

## *ԱՆԼՌԵԼԻ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՂՈՂԱՆՋ ԱՎԵՏԻՍԻ*

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին.
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-
Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...
Նա հետո պիտի դառնա պատանի,
Եվ երիտասարդ, և այր իմաստուն,
Անբախտ Մարոյին լացով սպանի,
Մեր հառաչանքը հասցնի Աստծուն:
Մրմուռից դաղված նրա բերանով
Սարոյի նանը պիտի ողբ ասի,
Մսրա զորքի հետ Դավիթը խոսի,
Գիքորը կանչի. «Էստի՞ համեցեք...»:
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել
Իր մոխրակալած-հրակեզ հոգին
Եվ որքան տրտում, նույնքան կենսագին
Տարիներ հետո նա պիտի դառնա

Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...
Միևնույն թվին, Լոռուց շատ հեռու՝
Անատոլուի խավար խորքերում
Մեկ ուրիշ մանուկ լույս աշխարհ եկավ:
Մինչ հայրը նրա՝ Գևոն կոշկակար,
Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ,
Հարևան-դրկից մի-մի շիշ օղով
Նրա տուն մտավ աչքալուսանքի,
Հետո հերթն եկավ կանանց հոսանքի.
Մի թաս խավիծով կամ ձվածեղով՝
Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝
Որդուն մաղթելով արևշատություն,
Նորատի մորը՝ շուտ ապաշխարանք,
Աղվորիկ մի հարս,
Բարի տատություն...

*ՂՈՂԱՆՋ ՆԱԽՃԻՐԻ*
*(հայկական)*

...Եղունգ են քերծում, պտղունց են մաշում,
Ժայռից վանք կերտում, քարից նուռ տաշում
Դարպասի աչքին հոնք-կամար քաշում,
Արձան են ձուլում, շինում ապարանք:
- Եվ մեղավոր են այստեղ էլ նրանք...

...Հաշիշ չեն ծխում,
Խմում են գինի,
Ապրում անթալան և առաքինի,
Չեն պահում հարեմ,
Ոչ էլ ներքինի,
Եվ չունեն մոլլա,
Որ կապի չալմա.
Նրանց քեշիշը վեղարավոր է:
- Եվ... մեղավոր են...

...Ձեռքի հետքերը նրանց հայրերի
Կնիք են դրել այս նույն վայրերին՝
Իբրև սեպագիր
Կամ շաղախ ու կիր,
Իբրև շիրմաքար
Կամ որմնանկար,
Իբրև մագաղաթ
Կամ լեռնակ-ջրանցք...
- Եվ ո՞ւմն է մեղքը,-
Իհա՛րկե նրանց...

...Ինչպե՞ս չկտրել այն կոկորդը չար,
Որ ցավից հանկարծ կարող է ճչալ,
Կարող է հայցել փրկություն ու ճար...
...Պիտի ազատվել այն լիրբ աչքից էլ,
Որ երազանքից շողում է պայծառ,
Որ օտարները... լացողին խոճան՝
Տեսնելով նրա աղի արցունքը...
...Ինչպե՞ս չջարդել հանցավոր ծունկը
Եվ այն մեղսակից համառ արմունկը,
Որոնց հենվելով՝ մարդը արնաքամ
- Եվ գազա՞նն անգամ-
Ուզում է դուրս գալ ժանտ գերությունից,
Դե եկ, թուրքոլի՛, ցավից մի՞ վնգա...

...Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում,
Ինչպես չի քերվում արյունը սրտից
Կամ գույնը վարդից:
Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում
Ինչպես դրացուն,
Այնպես էլ համայն մի ժողովրդի:
Չի ներվում և այն,
Ինչը կոչվում է առավելություն...
- Եվ այդ ահռելի հանցանքի դիմաց
Դեռ պահանջում եք ներման վեհությո՞ւն...

... Նրանք գիտեին սիրել ու ատել,
Գիտեին խորհել ու համեմատել,
Խուլս տալ ցավերից, դավերից ծպտյալ:
Թե անսահման էր նրանց տանջանքը,
Անծայր էր նույնքան և անրջանքը:
- Ահա՛ և նրանց ծանր հանցանքը...
... Ունեին նաև մեկ ուրիշ հանցանք,
Որ ահավոր էր:
- Գիտե՞ք, թե որը.
Երբ մարդ ոչ մի կերպ չի կարողանում
Ընդմիշտ մոռանալ մի հիմա՞ր անուն՝
Ի՛ր իսկ անունը և ազգանունը:
- Ի՞նչ հանդգնություն, դուք հասկանո՞ւմ եք...
Եվ նա ուզում է նույնիսկ չդատվե՞լ.
Խուսափել արդար կարգ ու կանոնի՞ց:
Ուրեմն... պիտի ա՛յլ կերպ ազատվել
Այդ լիրբ անունից և ազգանունից:
Իսկ դա անունն էր մի ամբողջ երկրի,
Ո՞ղջ մի ազգ էր դա կրում ու պահում:

*«ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ...»*
*(հայկական)*

ԺԳ

Այսքանից հետո ի՞նչ կոչես Նրան.
Մեր կեռմանաշատ երթուղու վրա
Մի նշանացի՞ց,
Մի սյո՞ւն,
Կամ թե ձո՞ղ,
Ինչ-որ գրերի ինչ-որ ստեղծո՞ղ:

Ու եթե պիտի գիր ու տառ հիշվի,
Ապա Նա ինքն է այն մեծատառը,
Որով հասարակ ու պարզուկ բառը
Աճում է-հասնում խորհրդանիշի,

Եվ... Մարդը ձգվում ու դառնում է Մարդ,
Անցողիկ մարտը՝ հավերժական Մարտ,
Խեղճ տքնությունը՝ զորեղ Տքնություն,
Ինքնությունն անուժ, հուժկու Ինքնություն,
Պաշտողը՝ Պաշտող,
Իսկ հայը... Մաշտոց:
Մաշտո՜ց...
Այսինքն՝ Ա՛յր մի, որ եկավ ապացուցելու,
Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ:
Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,
Թե հրաշք չկա՜,
Այլ կա լոկ կարի՜ք:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց
Եվ կոչ է անում ապացուցելո՜ւ,
Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՜ն մի հնար...

## *ԵՌԱՃԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ*
*(քաղվածք)*

Եվ ասում եմ ձեզ՝
մարգարեի պես.
-Օ՜, կնատարազ այրերի ոխից վախեցեք կյանքում
և սարսափեցեք նրանց վրեժից անբեկանելի:
Եվ ուր էլ լինեն այդ կնատարազ այրերի որդիք,
Ինչքան էլ լինեն իրարից բաժան, իրար անճանաչ՝
Նրանց հաշվեցեք հատուկ զորագունդ,
և նրանց շնչից դեռ օդը պիտի լցվի սարսուռով,
ու հողն ունենա երկրաշարժային գլխապտույտներ...
Օ՜, կնատարազ այրերի քենից դողացեք անվերջ
և սահմռկեցեք վրեժից նրանց.
որ սրբազան է այն շարժումի պես,
Ինչ երդում տվող աջն է կատարում

Կրծքի ձախ կողմին՝ սրտին դրվելիս...
-Ուխտդ ուխտական, ով սրբազան խենթ,
Ուխտդ ուխտական...

Եվ դու չես ասում, ոչ էլ դուք,
այլ ես,
Ես՝ Սիս-Մասիսը,
այդ ես եմ ասում
անդուլ-անդադար-անվերջ զնգացող իմ անքուն զանգով,
Գողթան երգերի չափով մարտական,
Բամբ բամբիռների հնչումով հատու
Սիսն ու Մասիսն են դողանջում անվերջ-անդադար-անդուլ,
ով ականջ ունի,
հավատո բլթակ՝
նա լսում է միշտ,
լսում է նրանց հանգերը թնդուն,
Որ թարգմանվում է դարձյալ զույգ բառով.
ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ:

* * *

Ու կրկնում եմ ես՝
ահազանգի պես.
- Այս ջարդ-սպանդը երե՞կ չսկսվեց,
և ոչ էլ վաղն է նա ավարտվելու,
ուստի վախեցեք սպանդից ճերմա՞կ
ավելի, քան թե եղեռնից կարմիր.
ուստի կրկնեցեք ինձ հետ միատեղ,
ինչպես երդումի խոսքերն են կրկնում.
- Բռնի ձուլվելիս թունավորում են ձուլողին՝ արյամբ,
ինքնին ձուլվելիս թունավորվում են իրենք՝ արյունով:
Ուստի թող գործեն ձեր հին զենքերը՝
ձեր ատամնե՞րը ու ձեր ոտքե՞րը.
ձեր ատամնե՞րը՝
կռվելու համար ու պաշտպանվելու
կամ ժողովվելու ինքներդ ձեր մեջ,

իսկ ձեր ոտքե՛րը՝
վերադառնալու, տուն գալու համար
կամ ժողովվելու ինքներդ ձեր շուրջ...

*ԲԱՐԵՎ*

-Բարև,-
Մեկ հատիկ այս բառն եմ ասում՝
Կնքված անձնագիր ցույց տալու նման,
Կենսագրություն պատմելու նման.
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես:

Եվ կուզենայի՛,
Շա՜տ կուզենայի,
Որ այս բառն իրոք դառնար անձնագիր
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենքի՛ համար:
Եվ կուզենայի՜
Շա՜տ կուզենայի
Որ նմանապես այս բառը լիներ
Նոր և իրական մի «Բացվիր Սեզամ»:

- Բա՛րև,-
Ասեիր կնոջն անծանոթ,
Ու նա քեզ սիրեր հենց նո՛ւյն վայրկյանին
Կամ ներումնահայց ժպիտով ասեր,
թե բարևե՜լ են քեզանից առաջ:

- Բա՛րև,-
Ասեիր, և պարզ երկինքը
Իսկո՛ւյն անձրևեր, եթե պետք է դա:
- Բա՛րև,-
Ասեիր լռակյաց հողին,
Եվ նա ծլարկեր ու հասկավորվեր:
- Բա՛րև,-

Ասեիր մահի՛ն էլ անգամ,
Եվ նա հասկանար, որ քեզ մոտ գալով՝
Ինքը շտապե՛լ,
Շատ է շտապել...
Բարև-ը դառնար իրական ու նոր մի... «Բացվի՛ր, Սեզամ»:
Եվ այն ժամանակ եթե արջին էլ ասեիր
- Բա՛րև,-
Նա էլ մի գուցե հենց նույն վայրկյանին
Խաղալիք դառնար մեր մանկան համար
Եվ մի այնպիսի՛ կարգին խաղալիք,
Որ ո՛չ լարվում է, ո՛չ էլ հասարակ բանից փչանում:
Այնպես էլ օձը ծերերի ձեռին ձեռնափայտ դառնար,
Կոկորդիլոսը դառնար պահարան խաղալիքների,
Կախարան դառնար եղջերուն վայրի,
Եվ փոքորիկը՝ բեմի պարախումբ,
Մարդն էլ՝ Մարդ իրոք...
Անկարելի բան աշխարհում չկա՞,
Եթե աշխարհում իշխում է բարին,
Որ մեր բերանում դարձել է
- Բա՛րև,-
Ուրեմն՝ անձնագիր ցույց տալու նման,
Կենսագրություն պատմելու նման
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես՝
- Բա՛րև
Քե՛զ
Ու
Ձե՛զ,
Ծանո՞թ-անծանո՞թ իմ սիրելիներ:

Թո՛ղ անկարելին դառնա կարելի
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենքի՛ս համար,
Դառնա կարելի վաղն ու հենց հիմա,
Դառնա կարելի մեկ բառով՝
- Բա՛րև...
- ԲԱՐԵՎ...

## ԼՈՒՅՍ ԶՎԱՐԹ

Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ...
Եվ ոչ թե լույս երեկոյի,
Ի մտանել արեգական,

Այս լույս զվարթ արդար գոյի՝
Շաղավոտն առավոտի...
...Ծնրադրյալ Բնությունն է ելնում ոտի.
Գիշերային ժամերգությունն է վերջանում:
Եվ լուսաբացն է մոտենում դանդաղորեն,
Իբրև հսկիչ մի Լուսարար՝
Մարելով ու հանգցնելով
Ամեն տեսակ լապտեր ու լամպ:
Եվ Արեգակն է բարձրանում
Քրմապետի վսեմությամբ:
Եվ ծույլ փռված ստվերները մարմնամսեղ
Սկսում են կարծես իրենք իրենց մարսել՝
Մսաթափվում- նիհարում են,
Հետզհետե դառնալով ձիգ
Ու սլացիկ՝
Պարուհու պես թխամորթ:
Արշալույսն է շարունակում ածել փողը իր ծիրանի,
Որի բոլոր նեղ ծակերից լայն շաղվում է
Ինքը արդար Արեգակը.
Եվ հնչում է այն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ
«Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ»...
Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Լույս զվա՛րթ ու գերազանցի՛կ,
Լույս երգեցի՛կ ու նվագուն:
Դու՝ առաքյալ ամենօրյա
Որ բերում է միայն հավատ,
Բայց ի դերև հանում-վանում
Եվ քողածածկ ծպտյալ հույսեր:

Դու՝ սուրհանդակ, բայց և կավատ,
Դու՝ հետախույզ, բայց և մատնիչ,
Բայց ամենից առաջ՝ միշտ սեր
Եվ ամենից հետո՝ միշտ սե՞ր...
Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Անձրևի պես
Տեղա այնպե՛ս,
Որ աշխարհում
Լոկ մի՛-միա՞կ ստվեր մնա,
Այն էլ միայն երկնի՛ վրա՝
Լոկ անձրևի՛ ստվերը կոր՝
Ծիածա՞նը...
Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Այնպե՛ս գործիր,
Որ նկարիչ քո մատներով
Վառեկներն իսկ, գունազարդված,
Դառնան կարծես աքաղաղներ
Ու վերերգեն յուրատեսակ՝ ծուղրուղրուով՝
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
« Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ»...
Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Շաղվի՛ր,
Մաղվի՛ր,
Թաղվիր այնպե՛ս և այնքան խո՛ր,
Որ մենք չապրենք՝ ինչպես ծուկը
Իր մշտամութ-անլուսամուտ պետության մեջ,
Ու քո հմուտ-ամենամուտ շողերի տակ
Ծածկամիտ ջուրն անգամ դառնա անկեղծ-հստակ,
Եվ անաղմուկ քո զարկերից ու քո ճաքի,
Ու վերերգվի մինչև անգամ ա՛յդ ճաքոցով
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
« Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ»...

## ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

### ԿԱՆՉԸ

*(հատվածներ)*

* * *

Երգը բնության մասին էր. նախշուն քարերով ու գույնզգույն ծաղիկներով սարերի և սարն ի վեր ելնող սայլուղու ու սայլի, և դեպի երկինք ճախրող բոց լծկանների, սարի կրծքին՝ դեմ արեգական փռված կորեկի կլոր արտի... Երգը կանաչ վարոցներով հոտաղների մասին էր և բանջարի ելած նախշուն գոգնոցներով աղջիկների... Երգը բնության ու սիրո մասին էր...

* * *

- Ալեեեե՜,-Զորոն նայեց պատուհանից դուրս. լեռների վրա արևն արդեն հանգչում էր:- Արևմարք չեղներ մեջ աշխարհքին,- երգահանգ շշնջաց Զորոն,- կեսօր ու արևմարք ու իրիկուն ու գիշեր չեղներ, ամառ ու ձմեռ չեղներ... Կպիտեր՝ թաք գարուն... Թաք գարուն ու առավոտ... Ու մեծնալ չեղներ, Ալե՜, էրեխան մնար էրեխա, ես՝ էն նախշուն քարի վրա, դու՝ շաղոտ կանաչների մեջ ու քու գլխին ծաղկեպսակ ու քու գլխին ծաղկեպսակ, Ալե՜...

### ԳԻՆԱՐԲ ԾԱՂԻԿ

*(հատված)*

Եվ այդ գարնան Խուչերով արտերում նա հանդիպեց, հանկարծակի հանդիպեց ծանոթի... Գինարբ ծաղիկն էր: Աչքերին չէր հավատում. ախր, Գինարբ էրգրի սարերում մնաց, չգաղթեց՝ մնաց: Լինելո՞ւ բան է... Չէր հավատում: Իսկ Գինարբը խատուտիկ աչքերով ժպտում էր:

- Քու անուն Գինա՞րբ է:

Ծաղիկը գլխով արեց:

- Քու անունը Գինարբ է, չէ՞,- ծնկեց, շնչեց բույրը:

Կասկած չկար՝ նա էր: Պոկեց՝ դրեց ծոցը: Նախիրը թողեց. Գինարբ որոնեց, հավաքեց՝ փունջ արեց, հավաքեց՝ ամրացրեց գլխարկին

և աչք ածեց արևին՝ չքեքվե՞ց, իրիկուն չէ՞. ախր, Էրգրից ծանոթ է եկել, գյուղ պիտի տանի:

Այդ իրիկուն Բարսեղը գյուղ իջավ՝ գլխին համբուրելու հյուրը:

## ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### ԾԱՌԵՐԸ

*(հատված)*

Լավը չես, խեղճ ես, լավը չես, զավակս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լավը չես, մեջդ վրեժ չկա: Քո պապ ու իմ հեր Իշխանը արնագույն պուճուր մի ձի ուներ, էնքան պուճուր, որ բանակ չէին տարել - ասում է, չարությունից պայթում էր՝ որ մի ձի իրենից առաջ էր ընկնում: Հևում էր, թոքերը շխկշխկում էին, քթերից կրակ էր թռչում - իր պուճուր տեղով տրաքում էր չարությունից: Քո պապի պահած շունն էլ պիտի էդպես լիներ, նրա զավակն էլ ու չափարի բանջարն էլ ու պատի օձն էլ պիտի էդպես լինեին: Դու լավը չես: Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է՝ իբր թե լավն ես, խղճով ես, և էդ ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում, զավակս, զավա՛կս: Իմ հեր ու քո պապ Իշխանը խելոք բաներ ո՛չ ասում էր, ո՛չ էլ մտածելու ժամանակ ուներ, նա գործի մարդ էր, գետինը նրա ոտի տակ վառվում էր... բայց մի անգամ կեսբերան ասել է ուսի վրայով իմ մերացվին հացի փող շպրտելու պես, ու ես ասում եմ. մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան, չպիտի էնքան դառը լինի, որ թքեն:

# ՄԱՌԵԳԱՌՈՒԹՅԱՐՄՈՒՆՔՈՎ


***Գողթան երգեր*** ..... 3
Երկնէր երկին, երկնէր երկիր ..... 4
Քեզ ասեմ, այր քաջն Արտաշէս ..... 4
Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս ..... 4
Հեծաւ արի Արքայն ..... 5
Տեղն ոսկի տեղայր ..... 5
Եթէ յորս հեծցիս ..... 5
Ո՜~, տայր ինձ զծուխս ծխանի ..... 5
***Վաղ և ուշ միջնադարյան գրականություն*** ..... 6
***Մեսրոպ Մաշտոց*** ..... 7
Մեղք իմ բազում են յոյժ ..... 7
Ծով կենցաղոյս
հանապազ զիս ալեկոծէ ..... 7
***Մովսես Խորենացի*** ..... 7
Խորհուրդ մեծ և սքանչելի ..... 7
Պատմութիւն Հայոց ..... 8
***Եղիշե*** ..... 8
***Փավստոս Բյուզանդ*** ..... 9
Պատմություն Հայոց ..... 9
***Կոմիտաս Կաթողիկոս Աղցեցի*** ..... 9
Անձինք Նուիրեալք ..... 9
***Դավթակ Քերթող*** ..... 10
Ողբ ի մահն Ջեվանշերի
Մեծն իշխանին ..... 10
***Սահակ Ձորափորեցի*** ..... 11
Էջմիածինն ի Հորէ ..... 11
***Սահակդուխտ Սիւնեցի*** ..... 11
«Սրբոյն Մարիամ» ..... 11
***Գրիգոր Նարեկացի*** ..... 12
Վարդավառին ..... 12
Մեղեդի ծննդի ..... 13
«Մատյան ողբերգութեան» ..... 14
***Ներսես Շնորհալի*** ..... 15
Առաւոտ լուսոյ ..... 15
Ողբ Եղեսիոյ ..... 16
Հաւատով խոստովանիմ ..... 17
***Հովհաննես Երզնկացի Պլուզ*** ..... 18
Աշխարհս ի ծով նման ..... 18
Մէկ կայ, որ հազար ածէ ..... 18
***Ֆրիկ*** ..... 18
Ֆրկան ասացեալ տաղ հոգեշահ ..... 18
***Կոստանդին Երզնկացի*** ..... 19
Հոգի, աչերուս իմ լոյս ..... 19
***Հովհաննես Թլկուրանցի*** ..... 19
Գէնայ բահար, այլ՚ի բահար ..... 19
***Նահապետ Քուչակ*** ..... 20
Հայրենի կարգաւ ..... 20
***Գրիգոր Աղթամարցի*** ..... 23
Տաղ ի վերայ Նորաշէն տուն
եւ այգի ունեցողի եւ լալու ..... 23
Տաղ Աղթամարցի Գրիգորիսի
կաթողիկոսէ ասացեալ ..... 25
***Նաղաշ Հովնաթան*** ..... 26
Տաղ սիրոյ ..... 26
Տաղ սիրոյ ..... 26
***Պաղդասար Դպիր*** ..... 27
Ի նընջմանէդ արքայական ..... 27

***Սայաթ-Նովա*** ..... 28
Աշխարհումը ախ չիմ քաշի ..... 28
Ձենդ քաղցր ունիս ..... 28
Քանի վուր ջան իմ ..... 29
Մե խոսկ ունիմ ..... 30
Աշխարհը մե փանջարա է ..... 30
***Հայ նոր գրականություն*** ..... 32
***Խաչատուր Աբովյան*** ..... 33
Վերք Հայաստանի ..... 33
***Մեսրոպ Թաղիլադյան*** ..... 34
Օրհներգութիւն ազգային ..... 34
***Ղևոնդ Ալիշան*** ..... 35
Հրազդան ..... 35
Պլպուլն Ավարայրի ..... 35
***Մկրտիչ Պեշիկթաշլյան*** ..... 36
Գարուն ..... 36
Թաղումն քաջորդւոյն ..... 37
Եղբայր ենք մեք ..... 38
***Պետրոս Դուրյան*** ..... 39
Սիրել ..... 39
Դրժել ..... 40
Լճակ ..... 42
Տրտունջք ..... 43
Զոջում ..... 45
Իմ ցավը ..... 46
Ինչ կ'ըսես ..... 47
Նե ..... 47
***Նահապետ Ռուսինյան*** ..... 48
Կիլիկիա ..... 48
***Միքայել Նալբանդյան*** ..... 49
Մանկության օրեր ..... 49
Ազատություն ..... 51
***Սմբատ Շահազիզ*** ..... 52
Երազ ..... 52
***Ռափայել Պատկանյան*** ..... 53
Օրորոցային երգ ..... 53
Օրորոցի երգ ..... 54
Արաքսի արտասուքը ..... 55
Հույս ..... 58
***Հովհաննես Հովհաննիսյան*** ..... 59
Ախ, տվեք ինձ քաղցր մի քուն ..... 59
Սարն ի վեր ..... 60
***Հովհաննես Թումանյան*** ..... 60
Հին օրհնություն ..... 60
Դու քո ճամփեն ..... 61
Մեր ուխտը ..... 62
Համերգ ..... 63
Հայոց վիշտը ..... 63
Հայրենիքիս հետ ..... 64
Հայոց լեռներում ..... 65
Վայրէջք ..... 66
Աստղերի հետ ..... 66
Բարձրից ..... 67
Իմ երգը ..... 68
Սիրիուսի հրաժեշտը ..... 69
Անուշ ..... 70
Լոռեցի Սաքոն ..... 73
Թմկաբերդի առումը ..... 74
Մարոն ..... 76
Փարվանա ..... 80
Շունն ու կատուն ..... 81
Թագավորն ու չարչին ..... 84
Քառյակներ ..... 86
Գիքորը ..... 90

Քույր, գուցե չընկանք.....168
Մեր լեզուն.....168
Ինչ ունեցել է ժողովուրդը քո.....169
Հովհ. Թումանյանին.....170
Երկու տրիոլետ *(մայրամուտը...,*
*Մառ մորմոքում է մայրամուտը)*.....170
Ի խորոց սրտի
խոսք ընդ Աստուծո.....171
Մահվան տեսիլ.....172
Հարդագողի ճամփորդները.....173
Նավզիկե.....175
Ասպետական.....181
Խմբապետ Շավարշը.....182
Պատմության քառուղիներով.....183
Դեպի լյառն Մասիս.....184
Երկիր Նաիրի.....185
***Ակսել Բակունց*** .....187
Ալպիական մանուշակ.....187
Միրհավ .....188
Մթնաձոր.....188
***Հովհաննես Շիրազ*** .....189
Գարնանամուտ.....189
Մայրս.....190
Մայրս փոքրիկ, մայրս խեղճ.....191
Ձյուն է իջնում կուտակվում.....191
Իմ սուրբ հայրենիք.....192
Կուզեի նստել մի քարի վրա.....192
***Համո Սահյան*** .....193
Ձորից եկավ ինչ-որ ճիչ.....193
Անձրև.....193
Լուսաբաց.....194
Պապը.....195
Եզը.....196
Ախր ես ինչպես վեր կենամ գնամ.....196
Հայաստան ասելիս
այտերս այրվում են.....197
Գարունդ հայերեն է գալիս.....198
Տարիներս.....198
***Պարույր Սևակ*** .....199
Նորօրյա աղոթք.....199
Դարակեսի հիմնը.....201
Մարդ էլ կա, մարդ էլ.....202
Մոր ձեռքերը.....203
Միանգամից.....204
Առաջադրանք համայն աշխարհի
հաշվիչ մեքենաների և ճշգրիտ
սարքերի.....205
Պարապություն.....206
Անլռելի զանգակատուն.....207
Եվ այր մի Մաշտոց անուն.....210
Եռաձայն պատարագ.....211
Բարև.....213
Լույս զվարթ.....215
***Մուշեղ Գալշոյան***.....217
Կանչը.....217
Գինարբ ծաղիկ.....217
***Հրանտ Մաթևոսյան***.....218
Ծառերը.....218

Ես չգիտեմ՝ ուր են
տանում հեռավոր.....136
Մթնշաղ.....137
Աշուն.....137
Աշնան գիշեր.....138
Ապրելուց թանկ է
մեռնել քեզ համար.....139
Մի խառեք մեզ ձեր վայրի,
արջի ցեղերին.....139
Այնպես անխինդ են և նման լացին...140
Հայրենիքում իմ արնաներկ.....141
Դու հպարտ չես իմ հայրենիք.....141
Մշուշի միջից, -տեսիլ դյութական..142
Մի՞թե վերջին պոետն եմ ես.....142
Չեմ դավաճանի իմ Նվարդին.....143
Բարակիրան Նաիրուհին
ինձ ժպտաց.....143
Հոգնեցի գրքերից անհամար.....143
Գինով եմ, գինով եմ ես էլ.....144
Կարուսել.....145
Սիրելի Պաուլո Մակինցլյանին....146
Մենք բոլորս, բոլորս.....147
Ձեռներում ձեր մանրիկ, նվագուն...147
Շշուկ ու շրշյուն.....148
Տեսա երազ մի վառ.....148
Ցնորք.....149
RESIGNATION, RESIGNATION....150
Չգիտեմ այս տխուր աշխարհում...150
Սիրում եմ աչքերիդ
տխրությունը խորին.....151
Սին խոսքերի մեջ,
զվարթ ամբոխում.....151
Երկու ուրվական.....151
Դուրսը ցուրտ է հիմա.....152
Քո աչքերի դեմ իմ աչքերը կույր.....153
FATUM.....154
Հրաժեշտի գազել.....154
Օ, կգան օրեր ավելի տրտում.....155
***Մաքենս Չարիֆյան*** .....155
Կարեկցություն.....155
Բլուրին վրա.....156
Ան չէ.....156
Հոգիս.....157
***Նորագույն շրջան*** .....158
***Եղիշե Չարենց*** .....159
Գիշերն ամբողջ խելագար.....159
Հայրենիքում.....159
Անվերանգիր.....160
Հրաժեշտի երեկոն.....160
Լուսամփոփի պես աղջիկ.....161
Անքնություն.....161
Ինչպես երկիրս անսփոփ… .....162
Վահագն.....162
Աքիլլա.....163
Գազելներ.....163
Մորս համար գազել.....164
Տաղարան.....165
Էլի գարուն կգա.....165
*(Հայաստանին)* Հազար ու մի
վերք ես տեսել.....166
Երբ էս հին աշխարհը մտա.....166
Ես իմ անուշ Հայաստանի.....167
Երազում եմ այն
երկիրը հեռավոր.....167

Քույր, գուցե չլկանք.....168
Մեր լեզուն.....168
Ինչ ունեցել է ժողովուրդը քո.....169
Հովի. Թումանյանին.....170
Երկու տրիոլետ *(մայրամուտը..., Մառ մորմոքում է մայրամուտը)*.....170
Ի խորոց սրտի
խոսք ընդ Աստուծո.....171
Մահվան տեսիլ.....172
Հարդագողի ճամփորդները.....173
Նավզիկե.....175
Ասպետական.....181
Խմբապետ Շավարշը.....182
Պատմության քառուղիներով.....183
Դեպի լսառն Մասիս.....184
Երկիր Նաիրի.....185
***Ակսել Բակունց***.....187
Ալպիական մանուշակ.....187
Միրհավ.....188
Մթնաձոր.....188
***Հովհաննես Շիրազ***.....189
Գարնանամուտ.....189
Մայրս.....190
Մայրս փոքրիկ, մայրս խեղճ.....191
Ցյուն է իջնում կուտակվում.....191
Իմ սուրբ հայրենիք.....192
Կուզեի նստել մի քարի վրա.....192
***Հասմո Մահյան***.....193
Ցորից եկավ ինչ-որ ճիչ.....193
Անձրև.....193
Լուսաբաց.....194
Պապը.....195
Եզը.....196
Ախր ես ինչպես վեր կենամ գնամ.....196
Հայաստան ասելիս
այտերս այրվում են.....197
Գարունդ հայերեն է գալիս.....198
Տարիներս.....198
***Պարույր Սևակ***.....199
Նորօրյա աղոթք.....199
Դարակեսի հիմնը.....201
Մարդ էլ կա, մարդ էլ.....202
Մոր ձեռքերը.....203
Միանգամից.....204
Առաջադրանք համայն աշխարհի
հաշվիչ մեքենաների և ճշգրիտ
սարքերի.....205
Պարապություն.....206
Անլռելի զանգակատուն.....207
Եվ այր մի Մաշտոց անուն.....210
Եռաձայն պատարագ.....211
Բարև.....213
Լույս զվարթ.....215
***Մուշեղ Գալշոյան***.....217
Կանչը.....217
Գինարբ ծաղիկ.....217
***Հրանտ Մաթևոսյան***.....218
Ծառերը.....218

Մայիս Նիկողոսյան

# ԳԱՆՁԱՐԱՆ
## (հայ գրականությունից անգիր հանձնարարվող նյութերի ընտրանի)

Խմբագիր՝ Մ.Նիկողոսյան
Ձևավորումը և շապիկը՝ Վ.Հակոբյան
Համակարգչային շարվածքը՝ Ն.Նիկողոսյան
Սրբագրիչ՝ Կ.Պետրոսյան

Տպագրված է՝ «Ստամպա» ՍՊԸ-ի տպագրատանը:
Հասցե՝ Երևան, Հ/Ա Բ-1 թաղամաս, Ռաֆֆի փող.99/1
էլ.փոստ՝stampa@netsys.am

---

Հանձնված է շարվածքի՝ 21.06.2007թ.: Ստորագրված է տպագրության՝ 12.10.2007թ.: 13,02 պայմ. մամուլ: 14,0 տպագր. մամուլ: Ֆորմատ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ №1: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300: